

Բ. ԹԱՇԵԱՆ

ՀԱՅԿԱՐԱՆ

Ա. ԳԻՐՔ

ԺԱ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Բարեփոխուած)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

425.21
Թ 19.1
Հ Ա

Բ. ԹԱՇԵԱՆ

ՀԱՅԿԱՐԱՆ

Ա. ԳԻՐՔ

ԺԱ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՊԷՅՐՈՒԹ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1. ՔՆՆՈՒԹԻՒՆ

1

Սեպտեմբերի մէջ, առաւօտ մը կանուխ, հայրս ու ես դպրոց դացինք։ Ես քննութիւն պիտի տայի նախակրթարան մտնելու համար, իսկ հայրս ինծի ընկերացած էր՝ պարզապէս դիս մինակ չձդելու փափաքով։

Անցանք դպրոցին ընդարձակ բակէն, ուր ինծի հասակակից բազմաթիւ տղաք կը խաղային ու կ՝աղմկէին։ Ապա բարձրացանք սենեակ մը, որուն դրան վրայ գրուած էր «Տեսչարան»։

Սենեակին մէկ ծայրը գրուած էր երկար սեղան մը, կանաչ չուխայով ծածկուած։ Սեղանին շուրջ նստած էին ուսուցիչները։ Անոնց մէջ էր նաեւ մեր ծխատէր քահանան՝ տէր Գիւտը։ Քահանային աջ կողմը բազմած էր տնօրէնը։

2

Քննութիւն տալու կարգը վերջապէս հասաւ ինծի։ Տնօրէնը հարցուց մեղմ ժպիտով.

– Անունդ ի՞նչ է, տղա՛ս։

– Անո՞ւնս...

Ամօթէ՞ս թէ չփոթութենէս, յանկարծ մոռցայ անունս ալ, մականունս ալ։ Իմ տեղս պատասխանեց հայրս։

— Կարդալ գիտե՞ս, — շարունակեց հարցընել տնօրէնը:

Ես գլխով հասկցուցի, թէ այո՛, գիտեմ:

— Ո՞ւր սորված ես կարդալը:

— Զաքար վարժապետին դպրոցը, — ըսի ես թուքս կլլելով:

Ու սպասեցի. դեռ ուրիշ ի՞նչ բաներ պիտի հարցնեն արդեօք, կը մտածէի ինք իրենս:

ԱՌԱԾ.— Զգիտնալը ամօթ չէ,
Զսորվիլը ամօթ է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակակից.— *Տարեկից, նոյն տարիքը ունեցող:*

Զուխայ.— *Բուրդէ գործուածք, ասուի:*

Տեսչարան.— *Տեսուչին, տնօրէնին սենեակը:*

Ծխատէր.— *Ընտանիքի մը, թաղի մը քահանան:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Առտու մը ո՞ւր գնաց փոքրիկ տղան, ի՞նչ ընելու: — Ուրկէ՞ անցան, ո՞ւր բարձրացան: — Ո՞վ կար սենեակին մէջ: — Ինչո՞ւ հաւաքուած էին ուսուցիչները: — Ի՞նչ հարցուց տնօրէնը: — Ինչո՞ւ պատասխան չկրցաւ տալ տղան: — Նոր դպրոց գացող տղային ինչո՞ւ կը քննեն: — Ձեր դպրոցին մէջ քանի՞ անգամ քննութիւն կու տաք:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Անուն կամ գոյական կը կոչուին այն բառերը, որոնք անձ, անասուն կամ իր կը ցուցնեն. օրինակ՝ ուսուցիչ, ոչխար, մատիտ:

2. ՔՆՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1

Տնօրէնէն ետք մեր ծխատէր քահանան էր, որ հարցումներ ուղղեց ինծի:

— Կրօնք սորվա՞ծ ես, — հարցուց ան ուղղակի աչքերուս մէջ նայելով:

Ես գլխով ըրի, թէ այո՛, սորված եմ:

— Գիտե՞ս ինչ է կրօնքը:

— Գի՛րք, — պատասխանեցի ես վախվըխելով:

Քահանան ժպտեցաւ, մխիթարեր ծիծաղեցան: Ես չէի հասկըցար, թէ ինչո՛ւ կը ծիծաղին:

— Յիսուսի մասին բան գիտե՞ս, — շարունակեց հարցնել տէր Գիւրը:

Ես նորէն գլխով ըրի, թէ այո՛, գիտեմ:

— Ո՞վ է Յիսուս:

— Պատկե՛ր:

— Կ'ըսեն՝ «սուրբ», անշնո՛ւրհք, ո՛չ թէ «պատկեր»:

— Կ'ըսեն՝ «սուրբ», անշնո՛ւրհք, ոչ թէ «պատկեր», — կրկնեցի ես տէր հօր խօսքերը:

Ամէնքն ալ նորէն սկսան ծիծաղիլ։ Ամոթէս չէի կրնար հօրս երեսը նայիլ։

2

Ուսուցիչներէն մէկը հարցուց, թէ ի՛նչ էր թեւիս տակ սեղմած գիրքս։

– Դասագիրքս է, – պատասխանեցի ես։

– Կրնա՞ս բան մը կարդալ։

Բացի գիրքս եւ սկսայ կարդալ առաջին հանդիպած նիւթը. «Ծիտը ծառին կը ծըլլըլայ»։

– Լա՛ւ, – սիրտ տուաւ ուսուցիչը, – հիմա կրնա՞ս ըսել, թէ քանի վրայ եթէ քանի ալ գումարենք, քանի՞ կ'ընէ։

– Քառասուն, – պատասխանեցի ես համարձակ։

– Քառասունէն տասը հանե՞նք։

– Երեսուն։

– Լա՛ւ, – կրկնեց ուսուցիչը գոհունակ դէմքով։

Ես հօրս նայեցայ։ Ուրախ էր ան եւ մեղմիկ կը ժպտէր։

ԱՌԱԾ.– Բարեկամը գլխուն կը նայի,
Թշնամին՝ ոտքին։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծիտ.– ճնճղուկ, փոքր թռչուն։
Ծըլլըլալ.– ճնճղուկներուն ծիւ-ծիւ ձայն հանելը։
Մեղմիկ.– Մեղմօրէն, կամացուկ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ի՞նչ հարցուց բահանան։ – Ի՞նչ պատասխանեց տղան։ – Ուսուցիչները ինչո՞ւ խնդացին։ – Ձի՞շդ էին տղուն պատասխանները։ – Ցետոյ ո՞վ շարունակեց քննութիւնը։ – Կրնա՞յ յաջող համարուիլ այս քննութիւնը։ – Ինչո՞ւ ուրախ էր տղուն հայրը։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.– Ձեր այսօրուան դասին մէջ ցոյց տուէք մէկ անձի, մէկ անասունի եւ մէկ իրի անուն։

---

3. ԱՂՈՒԷՍԻՆ՝ ՊԱՆԻՐ, ԱՐՋԻՆ՝ ԹԱԿԱՐԴ

Դաշտին մէջ, օր մը, աղուէսը ճարպիկ
Տեսաւ պանիրի կտոր մը փոքրիկ.
Ա՛յ խելքդ սիրեմ, –
Ըսաւ ինք իրեն, –
Որսորդ ախպարը թակա՛րդ է լարեր...

Պանիրը թողուց եւ անտառ մըտաւ,
Մեծ կաղնիին տակ ծեր արջ մը գըտաւ,
Եւ զայն համոզեց աղուէսը մեր քաջ,
Բերաւ, կանգնեցուց պանիրին առաջ։
– Հա՛փ ըրաւ, խածաւ պանիրը դեղին,
Ու թակարդ ինկաւ մեր բրդոտ քեռին...

Աղուէսը փութով պանիրը կերաւ
Եւ յանկարծ հեռու որսորդ մը տեսաւ։
– Է՛հ, մնաս բարով, ա՛րջ եղբայր, – ըսաւ, –
Մեր բաժնուելու ժամանակն հասաւ։

– Ի՞նչպէս թէ, եղբա՛յր, այդ ինչե՞ր կ'ըսես,
Զիս այսպէս փոսին մէջ անտէ՞ր կը ձգես...
– Անտէրը ես եմ, որ փախուստ կու տամ.
Իսկ բեզի ահա՛ լաւ տէրեր կու գան, –
Ըսաւ աղուէսը,
Պանիրը առաւ
Ու դէպի կանաչ
Անտառը թռռաւ:

ՀԱՆԵԼՈՒԿ Ա.– Հնարամիտ, խորամանկ,
Պոչը՝ երկար, մորթը՝ թանկ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թակարդ.– *Մուղակ:*

Գեռի.– *Մօրեղբայր, բրդոտ գեռի՝ փոխաբերաբար կը նշանակէ արջ:*

Փուրոյ.– *Անապարանքով, շուտ մը:*

Թանկ.– *Սուղ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Օր մը ի՞նչ տեսաւ աղուէսը դաշտին մէջ: – Ի՞նչ ըսաւ ինքզինքին: – Ինչէ՞ն հասկցաւ, որ թակարդ լարուած է: – Համեղ պանիրը ձեռք անցընելու համար ի՞նչ մտածեց: – Ի՞նչ պատահեցաւ անկէ ետք: – Արջերուն ինչո՞ւ «բրդոտ» կ'ըսեն: – Ի՞նչ տեսակ կենդանի է աղուէսը. ա՞ր թը: – Աղուէսի մասին ուրիշ պատմութիւններ գիտե՞ք:

---

4. «ԼԱ՛Ի ԽԵԼՔ Է...»

1

Դպրոցին վերարացումէն ետք, Մարգարիտ գրեթէ ամէն օր կ'ուշանար: Դասերը կը սկսէին, առաջին պահուն կէսն ալ անցած կ'ըլլար, եւ յանկարծ դասարանէն ներս կը մտնէր ... ո՞վ. Մարգարիտը:

Ամօթահար, գլուխը կախ, դրան մօտ կը կենար: Ուսուցչուհին կը հարցնէր.

– Ինչո՞ւ ուշացար, Մարգարի՛տ:

Ցանցանքը որո՞ւնն է. ժամացոյցի՞ն, հարկաւ: Ժամացոյցը սխալ է, կամ մայրիկը ուշ պատրաստած է նախաճաշը եւ կամ պզտիկ քոյրը ուշ արթնցած է...

Օր մը ալ ուսուցչուհին բաւ ճարահատ.

– Նայէ՛, Մարգարիտ, եթէ վաղն ալ ուշանաս, հայրիկդ պիտի կանչեմ և գանգատիմ:

Մարգարիտին սիրտը գոց ինկաւ, որովհետեւ հայրիկը շատ խիստ մարդ էր:

— Գիտե՞ս ինչ, — խորհուրդ տուաւ ընկերուհին՝ Նուրիկը, — այսօր ձեր տան ժամացոյցը մէկ ժամ առաջ կը տանիս. առտուն տնեցիները կանուխ կ'արթննան եւ քեզ ալ կ'արթընցնեն:

— Լա՛ւ խելք է, — մտածեց Մարգարիտ:

Տուն վերադարձին՝ ժամացոյցը մէկ ժամ առաջ տարաւ:

2

Հետեւեալ առտուն, Մարգարիտենց տան մէջ ամէն ոք կանուխ արթնցած էր, բայց երբ եկան դինք ալ արթնցնելու, ան մէկ կողմէն միւսին վրայ դարձաւ եւ պատասխանեց.

— Ձեմ ուշանար. ես գիտեմ...

Վերջապէս դժուարութեամբ կրցան արթընցնել Մարգարիտը: Կամաց — կամաց հագուեցաւ, կամաց — կամաց նախաճաշեց եւ առանց աճապարելու ճամբայ ինկաւ դէպի դըպրոց:

Ճամբան կը մտածէր. «Ամբողջ ժամ մը կայ դեռ դասերը սկսելու»: Ամէն քայլափոխի կը կենար, անցորդները կը դիտէր, ցուցափեղկերը կը քննէր:

Վերջապէս հասաւ դպրոց: Դուրսէն երբ տեսաւ որ ո՛չ մարդ կար ներսը, ո՛չ ալ ձայն, ինք իրեն ըսաւ.

— Է՜հ, այս ո՞րքան աճապարեր եմ. դեռ մարդ չէ եկած:

Եւ դանդաղօրէն մտաւ ներս:

Երբ դասարանին դուռը բացաւ, զարմանքէն ու վախէն քարացած մնաց: Երկրորդ դասաժամը սկսած էր արդէն...

ԱՌԱՆՑ.— Անօրինի երազին մէջ հաց կը տեսնէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերաբացում.— Նորէն բացուիլ (դպրոցը). կ'ըսուի նաեւ վերամուտ:

Ճարահատ.— Ճարը հատած, ամէն միջոց սպառած:

Գանգատիլ.— Գանգատ, դժգոհութիւն յայտնել:

Ամէն ոք.— Ամէն մարդ:

Քայլափոխ.— Քայլ փոխել, ամէն մէկ քայլ առնելը:

Ցուցափեղկ.— Մեծ խանութներու առջեւի սպակիէ մասը, ուր զանազան ապրանքներ եւ իրեր կը ցուցադրուին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ աղջիկ էր Մարգարիտ: — Ո՞րն էր իր գլխաւոր յանցանքը: — Օր մը ի՞նչ պատահեցաւ: — Ի՞նչ բանէ կը վախնար Մարգարիտ. ինչո՞ւ: — Ընկերուհին ի՞նչ խրատ տուաւ իրեն: — Հետեւեցա՞ւ այդ խրատին. արդիւնքը ի՞նչ եղաւ: — Դուք ալ կ'ուշանա՞ք դպրոցէն. ի՞նչ պէտք է ընել չուշանալու համար:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ուսուցչուհի, մայրիկ, հայր, քոյր, ընկերուհի, — ինչի՞ անուններ են ասոնք: Դուք ալ զտէք երեք այսպիսի անուններ եւ ըսէք, թէ ի՛նչ ցոյց կու տան:

5. ԿԱՐԴԱԼՈՒ ՍԷՐԸ

Մանուկ հասակէս կարդալը շատ կը սիրէի։ Մեր տան հաստափոր գիրքերը հմայիչ բան մը ունէին իրենց մէջ։ Ամենէն աւելի զիս կը վախցնէր Յայտնութիւնը։ Ինծի այնպէս կու գար, որ զայն կարդացողը արդէն մեծ դիտնական կ'ըլլայ։

Ես դժուարաւ կը վերցնէի կաշիէ կողքով այդ ահագին գիրքը ու կը դնէի մօտս առջեւ։ Մայրս կը բանար զայն երկիւղածութեամբ եւ կը սկսէր կարդալ, գլուխը հակած անոր լայն էջերուն վրայ։ Հայրս, պատին տակ նստած, իր համբիչը կը քաշէր եւ կը ջանար հետեւիլ ընթերցումին։

— Է՛, կնի՛կ, ի՞նչ կ'ըսէ գիրքը, — յանկարծ կը հարցնէր ան։

— Սուրբ բաներ, — կ'ըլլար մօտս պատասխանը։

2

Ես արդէն եօթը տարեկան էի, երբ հայրս փոքրիկ գիրք մը բերաւ ինծի։ Քերական մըն էր։

— Հիմա դուն ալ կը սկսիս կարդալ, — ըսաւ մայրս ժպտելով, — ես դաս կու տամ քեզի։

վերջն ալ, երբ բաւական յառաջդիմես, կը կարդաս այն մեծ գիրքը։

Ես յանկարծակիի եկայ։ Կարդա՞լ այն ահագին գիրքը, զոր հազիւ կրնայի վերցնել... Հաւատալս չէր գար։

Իրիկունը անկողին մտայ։ Երկար տաեն աչքս չէի հեռացներ Յայտնութիւնին վրայէն, որ կարծես հեգնանքով ինծի կը նայէր։

3

Քանի մը օր ետք սկսաւ իմ դասս։ այր, ժէ, ճէ, ռա, րեն, ինի, մեն, սէ։ Անվերջ կը կրկնէի մեքենարար։ Դժուար չէր, նոյնիսկ զուարճալի էր։ Ե՞րբ արդեօք պիտի սկսիմ կարդալ Յայտնութիւնը, կը մտածէի ես։

Ամբողջ տարի մը տեւեց քերականը։ Այլեւս ջուրի պէս կը կարդայի զայն, թէեւ շատ բան չէի հասկնար կարդացածէս։

Հայրս, իրիկունը տուն դարձին, կը նստէր իր սովորական տեղը, մեղի կը նայէր սքանչացած ու համբիչը քաշելով կը կրկնէր։

— Է՛, կնի՛կ, ի՞նչ կ'ըսէ գիրքը։

— Սուրբ բաներ, — կ'ըլլար նորէն մօտս պատասխանը։

ԱՌԱՆՑ — Շատ գիտցողը շատ կը սխալի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաստափոր — Հաստ, խոշոր։

Հմայիչ — Գրաւիչ։

Ցայսմաւուրք.— *Հին ժամանակներէ մնացած գիրք մը, որուն մէջ սուրբերու վարքը կը պատմուի:*

Երկիւղածութեամբ.— *Խոր յարգանքով:*

Հակած.— *Ծռած:*

Հեգնանք.— *Մաղրանք:*

Սքանչացած.— *Հիացած, զմայլած:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Այս գրուածքին հեղինակը ի՞նչ բան շատ կը սիրէր: – Միայն ի՞նչն էր, որ կը վախցնէր զինք. ինչո՞ւ: – Ի՞նչ կ'ըսէին իրարու հայրիկն ու մայրիկը: – Օր մը ի՞նչ բերաւ հայրիկը փոքրիկ տղուն: – Դուք ալ ունի՞ք կարդալու սէր: – Ի՞նչ տեսակ գրուածքներ կը սիրէք ամենէն աւելի:

---

6. ՆԱԻԱՍՏԻՆ

Նաւաստի մը կը մեկնէր
Հեռո՛ւ, հեռո՛ւ երկիրներ:

«Կ'երթաս, – ըսաւ մէկն իրեն, –
Բայց չե՞ս վախնար ծովերէն.
Հայրդ, մեծ հայրդ ալ գացին
Ու զոհ եղան արկածին»:
«Իսկ քու մեծ հայրդ ո՞ւր մեռաւ»:
«Իր անկողնին մէջ, հարկաւ»:
«Հապա այնտեղ դուն ի՞նչպէս
Ամէն գիշեր կը նիրհես...»:

ՀԱՆԵԼՈՒԿ Բ.— Գորգ մը ունիմ, թօթուել չեմ կրնար,
Ոսկի ունիմ, համրել չեմ կրնար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նաւաստի.— *Նաւու մէջ ծառայող պաշտօնեայ:*

Նիրհել.— *Քնանալ, ննջել:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Նաւաստին ո՞ւր կը մեկնէր. ինչո՛ւ: – Մէկը ի՞նչ ըսաւ իրեն: – Ի՞նչ պատասխան տուաւ նաւաստին: – Այս խօսակցութենէն ի՞նչ դաս կարելի է հանել: – Կրնա՞ք նաւու քանի մը տեսակներ յիշել: – Նաւէն զատ ուրիշ ինչո՞վ կարելի է ճամբորդել:

---

7. ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ

1

Ես ու ընկերս գացինք գիւղական դպրոցը այցի: Ուսուցչին հետ ծանօթացած էինք արդէն, կրակոտ երիտասարդ մըն էր:

Հասարակ դրասենեակներու տակեւ կարգով նստած էին ութ – տասը տարեկան մանուկներ, գլուխ մտկերով ու վառուուն աչքերով:

Երբ դասապահը վերջացաւ, ընկերս խնդրեց ուսուցչէն, որ ամբողջ դասարանով ազգային երգ մը երգեն: Ուսուցիչը թեթեւ մը կարմրեցաւ, ապա յայտնեց, թէ ինք «բաղաձայն» ըլլալով երգ չէր սորվեցուցած իր աշակերտներուն:

– Բայց լաւ կ'ըլլայ, որ աղաքը գոնէ ընդհանուր ազգային երգ մը գիտնան, օրինակ՝



«Արաքսի արտասուքը», — դիտել տուաւ ընկերս։

Այս խօսքերուն վրայ՝ երիտասարդ ուսուցիչը դարձաւ աշակերտներուն.

— Հապա տեսնեմ, սիրելինե՛ր, ամէնքդ մէկ շարուեցէք այստեղ։

Եւ ձեռքի քանակը վեր բարձրացնելով դոչեց.

— Բոլորդ միասին ինծի հետ երգեցէք՝ այր — բեն — դիմ։

Փոքրիկ աշակերտները բարձր ու եղանակաւոր ձայնով կրկնեցին. այր — բեն — դիմ, դա — եչ — դա...։ Եւ այսպէս՝ մինչեւ վերջին դիրը։

Բոլորն ալ ուրախ էին. բոլորի դէմքին վրայ ալ ժպիտ կար։ Նոյնքան ոգեւորուած էինք նաեւ մենք։

2

— Ահա ձեզի ընդհանուր ազգային երգ մը, — ըսաւ ուսուցիչը քրտնաթոր ճակատը սրբելով։

Ընկերս ու ես շնորհակալութիւն յայտնեցինք, յուզումով սեղմեցինք երիտասարդ ուսուցչին ձեռքը եւ ուրախ տրամադրութեամբ մեկնեցանք դպրոցէն։

— Քանի հայը կ՚ապրի, հայ դիրը չի մեռնիր, — լռութիւնը խզելով ըսաւ ընկերս։

— Այո՛, — վրայ բերի ես, — քանի հայ դիրը կ՚ապրի, հայը չի մեռնիր...։

ԱՌԱՆՑ — Լաւագոյնը լաւին թշնամին է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գոռոզ — Ոլորուած, գանգուր։

«Բաղաձայն» — Փոխարերաբար՝ լաւ ձայն չունեցող։

«Արաքսի արտասուքը» — Արաքս դետի մասին գրուած ուսանողի մը խորագիրն է։

Ոգեւորուած — Խանդավառուած։

Խզել — Կտրել, վերջ տալ (լռութեան)։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ո՞ւր գացին երկու ընկերները։ — Անոնցմէ մէկը ի՞նչ խնդրեց ուսուցիչէն։ — Ի՞նչ պատասխանեց ուսուցիչը։ — Ցետոյ ի՞նչ եղաւ։ — Ինչո՞ւ ոգեւորուած էին երկու ընկերները։ — Ի՞նչ ըսին իրարու։ — Որո՞ւն ըսածը ճիշդ է. ինչո՛ւ։ — Ո՞վ գտաւ հայ գիրերը։

8. ԿՈՅՐԵՐՈՒՆ ԳԻՐՔԸ

1

Գիտունին մէկը, օր մը, եկեղեցիի մը դըրան առջեւէն կ'անցնէր. տեսաւ, որ կոյր աղքատ մը նստած է հոն եւ ողորմութիւն կը խնդրէ: Գիտունը ուզեց հինգ դրուշնոց մը տալ անոր, ձեռքը դրպանը տարաւ, հանեց դրամը եւ դրաւ աղքատին ափը:

Կոյրը չօշափեց դրամը եւ զարմացաւ. ոսկի մըն էր իրեն տրուածը: Թէեւ աղքատ, բայց պարկեշտ մարդ մըն էր. ուստի անմիջապէս պուռաց անցորդին եւեւէն:

— Պարո՛ն, պարո՛ն, անշուշտ սխալած էք. ինծի տուած դրամնիդ ոսկի մըն է:

Գիտունը ետ դարձաւ եւ տեսաւ, որ իրա՛ւ, փոխանակ հինգ դրուշնոցի, ոսկի մը տուած էր սխալմամբ:

— Բայց ի՞նչպէս գիտցար, որ տուածս ոսկի է, — հարցուց զարմանքով:

— Ի՞նչպէս գիտցայ, — պատասխանեց կոյրը, — մատներովս չօշափեցի եւ հասկցայ:

2

Գիտունը շարունակեց իր ճամբան, բայց մտքին մէջ լոյս մը ծագեցաւ: Եթէ, — մտածեց, — կոյր մը չօշափելով կրնայ ճանչնալ դրամը, ինչո՞ւ ուրեմն պիտի չկրնայ ճանչնալ գիրքեր եւ թուանշաններ, եթէ անոնք չինուին ցցուած ձեւով:

Մտածե՛ց, մտածե՛ց եւ ձեռնարկեց չինելու այդ ձեւով գիրքեր, այդ գիրքերով ալ՝ գիրք մը: Եկեղեցիի մը դրան առջեւ կոյր պատանի մը գտաւ, տարաւ զայն իր տունը եւ սկսաւ կարդալ սորվեցնել անոր: Շատ չանցած՝ կոյրը սորվեցաւ կարդալ, մատները քսելով դուրս ցցուած գիրքերուն վրայ:

Անկէ ետք գիտունը ամբողջ աշխարհին յայտնեց իր գիւտը: Առաջին անգամ ինք բացաւ կոյրերու դպրոց մը. իրեն նայելով ուրիշներ ալ բացին, եւ այսօր բազմաթիւ քաղաքներու մէջ հաստատուած են կոյրերու յատուկ վարժարաններ:

ԱՌԱՆՑ.— Կոյրերու աշխարհին մէջ
միականին թագաւոր է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարկեշտ.— *Պատուաւոր:*
Ձեռնարկել.— *Ձեռք զարնել, սկսիլ:*
Միականի.— *Մէկ աչք ունեցող:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գիտունին մէկը ո՞վ տեսաւ օր մը: — Ի՞նչ տուաւ կոյր աղքատին: — Ցետոյ ի՞նչ պատահեցաւ: — Կոյրը ինչէ՞ն հասկցաւ, որ գիտունին տուածը ոսկի մըն էր: — Ի՞նչ մտածում ունեցաւ գիտունը: — Կոյրերու յատուկ գիրք տեսա՞ծ էք: — Ուրիշ ի՞նչ կարեւոր գիւտերու անուններ գիտէք:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Դուռ, ձեռք, դրպան, դրամ, գիրք, կոյր, գիտուն, — ինչի՞ անուններ են անոնք: Դուք ալ գտէք երեք այսպիսի անուններ եւ ըսէք, թէ ի՞նչ ցոյց կու տան:



9. ԿՈՅՐԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ

Ցերեկ ատեն,
Խարխափելէն,
Զորս կոյր ընկեր եկան դրսան
Փիղի մը մեծ, հսկայական:
Մէկն, որ մարմնին դրսաւ ահեղ,
– Զգոյշ, պոռաց, պատ կայ այստեղ:
Միւսն, որ ոտքին հանդիպեցաւ,
– Ի՛նչ պատ, կոնդ է, կոնդ է, ըսաւ:
Երրորդին ձեռքը կնճիթն էր ինկեր,
– Օ՛ձ է, օ՛ձ, գոռաց: ա՛լ ի՞նչ էք կեցեր:
Մինչ չորրորդը, որ պոչէն էր բռներ,
Քահ – քահ խնդալով կը կրկնէր անհոգ.
– Իրաւ որ կոյր էք, եղբայրնե՛ր խելօք,
Ո՛չ աս է, ո՛չ ան. կախուած թոկ է, թոկ...
Ու պոռպռալով չորսն ալ մէկ բերան,
Ինչպէս որ փիղին
Դէմն ելած էին,
Այնպէս ալ կոյր – կոյր կրկին ետ դարձան
Եւ լեռան նման
Փիղը չընանչցան...:

ՀԱՆԵԼՈՒԿ Գ.– Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կը սպանէ, ձեռքեր չունի,
Հաւկիթ կ'ածէ, փետուր չունի,
Շապիկ ունի, կար չունի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խարխափել.– *Շօշափելով քալել:*
Ահեղ.– *Վախնալիք:*
Կոնդ.– *Մեռի բուն:*
Կնճիթ.– *Փիղին քիթը, պատիճ:*
Թոկ.– *Զուան:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Զորս կոյրերը ի՞նչ բանի դպան օր մը: – Ամէն մէկը ի՞նչ ըսաւ: – Ինչո՞ւ տարբեր բաներու նմանցուցին փիղը: – Ի՞նչ էր պատճառը, որ չկրցան ճանչնալ զայն: – Դուք փիղ տեսա՞ծ էք, ո՞ւր: – Կրնա՞ք նկարագրել փիղ մը:

10. ՓԻՂԸ

1

Ցամաքային ամենամեծ կենդանին է փիղը: Ծանր եւ խոշոր մարմին մը ունի, բայց դիւրաշարժ է: Մորթը հաստ է, դիմացկուն եւ առանց մազի:

Այս հսկայ կենդանիին ամենէն աչքի զարնող մասը երկայն քիթն է, պատիճը, զոր ամէն բանի կը գործածէ: Անով կը շնչէ, կ'ուտէ, կը խմէ եւ զանազան առարկաներ կը վերցնէ,

խոտ եւ պտուղ կը քաղէ, տերեւներ կը փրցնէ, վերջապէս ինքզինք կը պաշտպանէ դարձեալ այդ ահագին պատիճով։

Պատիճը, ուրեմն, ո՛չ միայն նուրբ եւ ճըկուն ձեռք մըն է, այլեւ զօրաւոր բազուկ մը։ Փիղը պատիճի մէկ հարուածով կրնայ դեռին տապալել տիւծ մը կամ վագր մը. կրնայ ծառեր արմատախիլ ընել, պղտիկ հիւղեր քանդել, ծանր բեռներ վերցնել։

2

Հնդիկները զանազան աշխատանքներ կատարել կու տան փիղերուն. օրինակի համար՝ անոնց կը սորվեցնեն պատիճով հատ պարաններու կապը քակել, բանալին դարձնելով դուռներ բանալ, կտրուած փայտեր կարգով իրարու վրայ դիզել եւայլն։

Փիղերը կը գործածուին նաեւ վագր եւ ուրիշ վայրի կենդանիներ որսալու համար։

Ամէն կերպով օգտակար կենդանի մըն է փիղը։ Դիւրաւ կ՝ընտանենայ, բայց ոխակալ է։ Իր ժանիքներէն, որոնք վղոսկր կը կոչուին, սանտր, կոճակ, զաւազանի կոթ եւ այլ զարդեղէններ կը շինեն։

Փիղը կ՝ապրի Ասիոյ եւ Ափրիկէի մէջ։ Կը սնանի խոտով, պտուղներով եւ տերեւով։ Խիստ շատակեր է, օրական մինչեւ հարիւր քիլօ խոտ կրնայ ուտել։

ԱՌԱԾ — Քիչ բարձիր, շուտ դարձիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճկուն — Դիւրաշարժ, կակուղ։
Տապալել — Դեռին փռել։
Արմատախիլ ընել — Արմատէն հանել, փրցնել։
Հիւղ — Պղտիկ տուն։
Պարան — Հաստ շուան։
Դիզել — Վրայէ վրայ դնել։
Ոխակալ — Ոխ, քէն պահող։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ի՞նչ տեսակ կենդանի է փիղը։ — Ո՞րն է անոր ամենէն աչքի զարնող մասը։ — Ի՞նչ բաներու կը գործածէ իր պատիճը։ — Հնդիկները ի՞նչ աշխատանք կատարել կու տան փիղերուն։ — Փղոսկրէն ի՞նչ կը շինուի։ — Ինչո՞վ կը սնանի փիղը։ — Ո՞ւր կ՝ապրի։ — Բոլոր փիղերը ընտանի՞ են։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Երկու տեսակ անուն կայ՝ յատուկ եւ հասարակ։ Յատուկ կը կոչուին այն անուններ կամ գոյականները, որոնք իրենց տեսակին մէջ մէկ հատ են. օրինակ՝ Յակոբ, Մասիս, Հայաստան։ Յատուկ անունները գլխագիրով կը սկսին։

11. Ո՞Վ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ

Բերանը բաց.— Ես ամէն ինչ կ՝ուտեմ, կը խմեմ։

Ձեռքը բաց.— Ես ամէն ինչ կը շինեմ, կը քանդեմ։

Լեզուն բաց.— Ես ամէն բան կ՝ըսեմ, կը պատմեմ։

Ոտքը բաց.— Իսկ ես ամէն տեղ կ՝երթամ, կը պտըտիմ։

Գլուխը մտիկ ըրաւ եւ ծիծաղեցաւ։

Բերանը, ձեռքը, լեզուն եւ ոտքը ըսին գլուխին.— Ինչո՞ւ կը ծիծաղիս։

Գլուխը պատասխանեց.— Ինչ որ ընէք, առանց ինծի պիտի հարցնէք։ Առանց ինծի բան չէք կրնար ընել։

Բերանը բաց մնաց, իսկ լեզուն կմկմալով յարեց.

— Հա՛, իրաւ է, իրաւունք ունի գլուխը։

Իսկ ի՞նչ ըսին ձեռքն ու ոտքը։

ԱՌԱԾ.— Հեռուի սուրբը զօրաւոր կ'ըլլայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանդել.— կործանել, փլցնել, աւերել։

Ցարել.— Վրայ բերել, ըսել։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ ըսին բերանը, ձեռքը, լեզուն, ոտքը։ — Ինչո՞ւ ծիծաղեցաւ գլուխը։ — Ի՞նչ պատասխան տուաւ ան։ — Բերանը եւ լեզուն ինչո՞ւ իրաւունք տուին գլուխին։ — Իսկ ի՞նչ պիտի ըսէր ականջը, եթէ ներկայ ըլլար այս խօսակցութեան։ — Որո՞նք են մեր հինգ զգայարանները։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հասարակ կը կոչուին այն անունները կամ գոյականները, որոնք իրենց տեսակին մէջ շատ են. օրինակ՝ մատիտ, գիրք, տետրակ։

12. ՁԷՆՈՎ ՕՀԱՆ ԵՒ ԿՈԶԲԱԴԻՆ

Համբաւը հասաւ Մարայ Մելիքին.
— Հապա չե՞ս ըսեր, Դաւիթը կրկին
Հօր վանքը շիներ, իշխան է դարձեր,
Դուն եօթը տարուան հարկը չես գանձեր։

Մելիք զայրացաւ.
— Շո՛ւտ, գացէք, ըսաւ,
Բադի՛ն, կո՛զբադին,
Սի՛ւդին, Ձա՛րխադին,
Սասմայ քար ու հող տակն ու վեր ըրէք,
Իմ եօթը տարուան հարկն առէք բերէք։
Ու կոզբադին առաւ զօրքեր,
— Գլխո՛ւս վրայ, ըսաւ, ի՛մ տէր,
Ելեմ երթամ, քանդեմ Սասուն,
Ջնջեմ տեղը հայոց ազգին։

Այսպէս երգով
Զօրքով — զօրքով

Երբ Կոզբադին մըտաւ Սասուն,
Օհան լըսեց, չորցաւ լեզուն:

Աղ ու հացով,
Վախ ու լացով
Առջեւն ելաւ
Խնդիրք ըրաւ.
— Ինչ որ կ'ուզես, ա՛ռ, տա՛ր, ամա՛ն,
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Ու մեր շահած դեղին ոսկին...
Միայն գըթա՛ մեր խեղճ ազգին,
Մի՛ կոտորեր, մի՛ տար մահուն.
Վերը՝ Աստուած, իսկ վարը՝ դուն...

ՀԱՆԵԼՈՒԿ Դ.— Երկու սար գիրար կը կրծեն:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարկ.— *Տուրք:*
Զայրանալ.— *Սատակի բարկանալ:*
Զօրով.— *զօրութիւնով, ուժով:*
Կանայք.— *Կիներ:*
Կոտորել.— *Ջարդել:*
Մի՛ տար մահուն.— *Մի՛ մեռցներ, մի՛ սպաններ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ զայրացաւ Մսրայ Մելիքը: — Ի՞նչ ըսաւ իր զօրապետներուն: — Ո՞ւր գնաց Կոզբադին. ի՞նչ ընելու: — Զէնով Օհան ինչո՞ւ վախցաւ. ի՞նչ ըսաւ: — Ո՞վ է Զէնով Օհան: — Ի՞նչ տեսակ մէկն էր ան: — Կրնա՞ք ըսել, թէ ո՛վ էր Դաւիթի հայրը:

13. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

1

Մեր աշխարհագրութեան ուսուցիչը, դասարան մտնելու առեն, վայրկեան մը կը կենար դրան առջեւ, զննող ու խիստ ակնարկ մը կը նետէր մեր վրայ, ծոնր քայլերով կը մօտենար սեղանին ու կը հարցնէր.

— Պատրաստ էք:

— Այո՛, — կը պատասխանէինք մենք տեսակ մը երկիւղով:

— Պետրոսեա՛ն, սկսէ՛, — կը հրամայէր ուսուցիչը նստելով աթոռին վրայ:

Խե՜ղճ Պետրոսեան... միշտ վախով կը պատմէր իր դասը, կը շփոթէր, կը շուարէր եւ շուտ — շուտ այս ու այն կողմը կը նայէր՝ ըսպասելով, որ ընկերները օգնեն իրեն: Ինք այնպէս հաւատացած էր, թէ ինչ որ ըսէին անոնք, անպատճառ ճիշդ կ'ըլլար: Եւ առաջ համար ալ սխալ սխալի եռեւէ կ'ընէր:

2

Անգամ մը, Պետրոսեան նորէն շուարեցաւ դասի առեն. չկրցաւ ըսել, թէ ո՛րն էր Պելճիքայի մայրաքաղաքը: Օգնութեան սպասելու ձեւով սկսաւ աջ ու ձախ նայիլ:

— Պուքրէշ, — ըսի քովէն կամաց մը:

— Պուքրէշ, — կրկնեց Պետրոսեան վստահութեամբ:

Ուսուցիչը, որուն սրատես աչքէն բան չէր

փախչեր, հանդարտ քայլերով մօտեցաւ ինծի, բռնեց ականջէս եւ տարաւ զիս դրասեղանին մօտ։

— Կեցիր հոս մինչեւ դասին վերջը, որպէս զի հասկնաս, թէ Պելճիքայի մայրաքաղաքը ո՛չ թէ Պուքրէշ է, այլ Պրիւքսէլ։

Ամրողջ կէս ժամ ոտքի վրայ մնացի դրասեղանին առջեւ։ Երանի կու տայի ընկերներուս, որոնք հանգիստ նստած էին եւ ուշադրութեամբ կը հետեւէին ուսուցչի ըսածներուն։

Կրած պատիժս դաս մը եղաւ ինծի համար. անկէ ետք ա՛լ բնաւ չփորձեցի ընկերներուս քովէն ծուռ — չիտակ բաներ ըսել։

ԱՌԱՆԾ.— Ծուռ բանակէն շիտակ գիծ չ'ելլեր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զննող.— Քննող, դիտող։

Ակնարկ.— Նայուածք։

Երկիւղ.— Վախ։

Սրատես.— Աչքը սուր, շուտ տեսնող։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Աշխարհագրութեան ուսուցիչը ի՞նչ կ'ըսէր դասարան մտնելու ատեն։ — Պետրոսեան ինչո՞ւ վախով կը պատմէր դասը։ Ի՞նչ կը սպասէր իր ընկերներէն։ — Անգամ մը ի՞նչ պատահեցաւ։ — Ի՞նչ էր պատժուած տղուն յանցանքը։ — Պէ՞տք է օգնել դաս պատմողին։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հետեւեալ անուններէն ո-որո՞նք յատուկ են եւ որո՛նք հասարակ. ըսէք, թէ նիշդ գրուա՞ծ են.— վարդան, լեռ, արարատ, քաղաք, ծով, միջերկրական, ընկեր, գրասեղան, եգիպտոս, գրչածայր, երուսաղէմ, բանակ, կիպրոս, սոնա։



14. ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1

Եղնիկը պարծենալով ըսաւ.

— Ես արագ կը վազեմ։

Ծիծեռնակը, անկէ ետ չմնալու համար, աւելցուց.

— Ես կը թռչիմ հովի պէս։

Զուկն ալ, ջուրին երեսը ելլելով, վրայ բերաւ.

— Իսկ ես կը լողամ ջուրին մէջ։

Մարդը լսեց այս խօսակցութիւնը եւ ահա, թէ ի՛նչ ըսաւ.

— Ես չոգեկառք կը շինեմ ու եղնիկէն արագ կը վազեմ։ Օդանաւ կը շինեմ եւ բարձրերը կը թռչիմ։ Նաւ կը շինեմ եւ ջուրերուն վրայէն կը ճամբորդեմ։ Սուզանաւ կը շինեմ եւ ջուրերուն տակ կը թաղուիմ։

2

Եղնիկը տեսաւ շոգեկառքը ու զարմացաւ։
Ծիծեռնակը տեսաւ օդանաւը ու ամչցաւ։
Ձուկը տեսաւ շոգենաւը եւ խելքը գլխէն գնաց։
Հապա սուզանա՞ւը... ո՞վ կրնար խելք հասցնել անոր։

ԱՌԱԾ.— Ամէն մօրուքէ մազ մը, կ'ըլլայ մօրուք մը։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղնիկ.— *Արագավազ եւ եղջիւրաւոր կենդանի մը։*
Պարծենալ.— *Մեծ – մեծ խօսիլ, ինքզինք գովել։*
Սուզանաւ.— *Ջուրին տակէն գացող նաւ, ընդծովեայ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ ըսին եղնիկը, ծիծեռնակը, ձուկը։ – Մարդը ի՞նչ պատասխան տուաւ։ – Դուք տեսա՞ծ էք շոգեկառք, շոգենաւ, օդանաւ, սուզանաւ։ – Ասոնցմէ ո՞րը աւելի զարմանք պատճառած է ձեզի։ – Ի՞նչ ըսել է «խելքը գլխէն գնաց»։

15. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ ԵՒ ԿՈԶԲԱԴԻՆ

Վար իջաւ Դաւիթ Մարութայ սարէն,
Տեսաւ իրենց տան կիսաբաց դռնէն՝
Կոզբադին նրստեր կը չափէ ոսկին,
Սիւդին, Զարխադին պարկերն են բռներ,
Զէնով Օհանն ալ շրլինքը ծրուեր,
Զեռքերը ծոցը՝ կեցեր է հեռուն։

Տեսաւ, աչքերը լեցուեցաւ արիւն.
– Ե՛ս պիտի չափեմ, ելի՛ր, Կո՛զբադին,
Հօրբս ոսկին է, դուն քաշուէ անդին։

Կոզբադին ըսաւ.— Է՜յ, Զէնո՛վ Օհան,
Կու տաս՝ տուր հարկը այս եօթը տարուան,
Եթէ ոչ կ'երթամ, արեւը վրկայ,

Մսրայ Մելիքին կը պատմեմ, կու գայ
Ձեր Սասմայ երկիր քարուքանդ կ'ընէ,
Տեղը կը վարէ, շողգամ կը ցանէ:

– Դո՛ւրս կորսուեցէք, դո՛ւք՝ կատղած շուներ,
Էհէ՛յ, չէք ճանչնար դեռ Սասմայ քաջեր.
Արդեօք մեզ մեռա՞ծ թէ շուք կը կարծէք,
Կ'ուզէք մեր երկիր հարկի տակ դրնէք...
Բարկացաւ Դաւիթ, չափը որ նետեց,
Դրպաւ, Կոզբադնի գլուխը ջարդեց,
Ձափի փշրանքը պատն անցաւ, գրնաց,
Ու մինչեւ օրս ալ դեռ կ'երթայ թրռած:
Ու եկան, թափած ոսկին հոն մոռցան,
Հայոց աշխարհէն դուրս կորսուեցան
Բադին, Կոզբադին,
Սիւդին, Զարխադին:

ՀԱՆԵԼՈՒԿ Ե.– Զորս եղբայրներ կան,
Իրարու ետեւէ կը վազեն,
Բայց չեն հասնիր իրարու:

ԲԱՌԵՐ ՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Սար.– *Լեռ:*

Ցլինք.– *Վիզ:*

Շողգամ.– *Տեսակ մը բանջար, որուն արմատը կ'ուտուի: Կ'բսուի նաեւ շաղգամ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ի՞նչ ըրաւ Դաւիթ, երբ տեսաւ Կոզբադինը իրենց տան մէջ: – Ինչո՞ւ բարկացաւ. – Ի՞նչ ըսաւ Կոզբադին: – Վերջը ի՞նչ եղաւ: – Ի՞նչ բան կը պաշտպանէր Դաւիթ:

---

16. ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

1

Օր մը, աքլորը բարձրացաւ տան կտուրը՝ աշխարհ տեսնելու համար: Վիզը երկարեց առաջ, սակայն բան չտեսաւ. դիմացի լեռը արդելք կ'ըլլար:

– Քուչի՛ աղբար, կարելի է դուն գիտես, այն լերան ետեւը ի՞նչ կայ, – հարցուց բակին մէջ պառկած շան:



– Ես ալ չեմ գիտեր, – պատասխանեց քուչին:

– Հապա մինչեւ ե՞րբ այսպէս տգէտ պիտի մնանք. եկուր միասին երթանք տեսնելու, թէ ի՛նչ կայ էրկայ աշխարհի մէջ:

Շունը համաձայնեցաւ եւ միասին ճամբայ ելան աշխարհ տեսնելու: Գացի՞ն, գացի՞ն, հասան անտառ մը: Գիշերը մնացին այնտեղ: Շունը պառկեցաւ թուփի մը տակ, իսկ աքլորը կծկուեցաւ մօտիկ ծառին վրայ:

Քիչ ետք երկուքն ալ քնացան:

Շատ քնացան թէ քիչ, յայտնի չէ. մէկ ալ

տեսան, որ լոյսը բացուեր է: Աքլորը արթնցաւ եւ կանչեց.— Կուկուլիկո՛ւ:

2

Աղուէս մը, որ անտառին մէկ անկիւնը պառկած կը քնանար, լսեց աքլորին ձայնը:

— Վա՜հ, ուրկէ՞ դուրս եկաւ այս աքլորը: Է՛հ, է՛հ, լաւ նախաճաշ պիտի ընենք այսօր, — մտածեց խորամանկ կենդանին ու վազեց առաջ:

Գնաց, կեցաւ ծառին տակ ու ըսաւ.

— Բարի լոյս, սանտահա՛յր աքլոր, ի՞նչ ընելու եկեր ես այս կողմերը:

— Կ'Երթանք աշխարհ տեսնելու, — պատասխանեց աքլորը

— Օ՛, ի՜նչ լաւ ես մտածեր. շատոնց է ես ալ յարմար ընկեր մը կը փնտռէի: Ի՜նչ լաւ եղաւ, որ հանդիպեցանք իրարու: Դէ՛հ, վար իջիր, որ չուշանանք:

— Ես համաձայն եմ, — ըսաւ աքլորը, — տե՛ս, եթէ ընկերս ալ համաձայն է, երթանք:

— Ո՞ւր է ընկերդ, — հարցուց աղուէսը:

— Հոն, թուփին տակ:

«Ընկերն ալ իրեն պէս աքլոր մը ըլլալու է», մտածեց աղուէսը եւ վազեց թուփին կողմը: Բայց երբ յանկարծ շունը դուրս եկաւ պառկած տեղէն, աղուէսը՝ պո՛ւ՝ փախաւ, ի՜նչպէս փախաւ:

— Մի՛ անապարեր, աղուէ՛ս աղբար, մենք ալ պիտի դանք. այդպէս ալ ընկեր կ'ըլլա՞յ, — ծաղրանքով կը կանչէր աքլորը փախչող աղուէսին ետեւէն:

ԱՌԱԾ.— Անատօքին երեսը թքին,
ըսաւ՝ «անձրեւ կու գայ»:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կտուր.— *Տանիք:*
Թուփ.— *Պզտիկ ծառ:*
Սանահայր.— *Կնքուած մանուկին հայրը:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Աքլորը ի՞նչ ըսաւ օր մը: — Ի՞նչ էր իր նպատակը: — Ի՞նչ ըսաւ քուչինին: — Վերջը ի՞նչ որոշում տուին: — Ո՞ւր գացին: — Ո՞վ հանդիպեցաւ աքլորին եւ ի՞նչ ըսաւ: — Ի՞նչ ըսաւ աղուէսը, երբ իմացաւ ընկերոջ ո՛վ ըլլալը: — Ո՞վ աւելի խորամանկ է, աղուէ՞սը թէ աքլորը:

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Կազմեցէք նախադասութիւն մը, որուն մէջ անձի մը, անասունի մը եւ իրի մը անունները գտնուին. օրինակ՝ «Եղբայրս ձի մը եւ հրացան մը ունի»:

17. Կ'ՈՒԶԵՄ, ԶԵՄ ՈՒԶԵՐ...

1

Թոռնիկները հաւաքուեր էին մեծ մայրիկին շուրջ եւ կը խնդրէին, որ լաւ հեքիաթ մը պատմէ իրենց։ Մեծ մայրիկը այսպէս սկսաւ.

«Կատուը սուր՝ մեր Սուրիկին քիթին նըման, փեռուրները դանդուր՝ Ամիկին մազերուն նման, թեւերը փափկիկ՝ Արփիկին ձեռքերուն նման. ահա այսպէս էր սիրուն արտուտիկը»։

– Ինծի նման բան չունէ՞ր, – ընդմիջեց Վանիկը։

– Հապա ինծի՞, – ձայն տուաւ Շուշիկը։

– Ինծի ալ բան չըսիր, մե՛ծ մայրիկ, – բողոքեց Նազիկը։

– Սպասեցէք է՛, դեռ չեմ վերջացուցեր։ Ամենուդ ալ բաժին կայ, – հաստատեց մեծ մայրիկը եւ շարունակեց կէս ձգած հեքիաթը։

2

«Աչուկները այնպէս նախշուն էին, ինչպէս Վանիկին աչքերը. կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս Շուշիկին այտերը. ոտքերն ալ այնպէս բարակ էին, ինչպէս Նազիկին մատները»։

– Ես ոտքերը չեմ ուզեր, – գանգատեցաւ Նազիկը։

– Հապա ի՞նչ կ'ուզես, Նազիկ, – հարցուց մեծ մայրիկը։

– Ես աչուկները կ'ուզեմ։

– Աչուկները ինծի է տուեր մեծ մայրիկը, քեզի չեմ տար, – գոչեց Վանիկը։



– Նազի՛կ, կ'ուզես կատարը դուն առ, տոտիկները ես կ'առնեմ, – համաձայնեցաւ Շուշիկ։

– Ես կատարը չեմ ուզեր, աչուկները կ'ուզեմ, – պնդեց Նազիկը։

– Վանի՛կ, դուն կատարը առ, ես տոտիկները կ'առնեմ, Նազիկն ալ թող առնէ աչուկները, – խնդրեց Շուշիկ, ուզելով հաշտեցնել քոյրն ու եղբայրը։

– Ես ի՞նչ ընեմ կատարը, մեծ մայրիկը ինչ որ տուեր է ինծի, ես այն կ'ուզեմ, – յամառեցաւ Վանիկը։

Նազիկը դոհ չմնաց, ու վէճը շարունակուեցաւ։ Բայց մեծ մայրիկը չէր լսեր, գլուխը բարձին դրած քնացեր էր արդէն։

ԱՌԱՆԴ.— Ամէն մարդու իր կանգունով
կտաւ չեն տար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտոյտ, արտուտիկ.— *Փոքր թռչուն մը, գորշ կարմրորակ փետուրներով եւ սուր ձայնով:*

Կատար.— *Դլուխ, գագաթ:*

Նախշուն.— *Սիրուն, ազուոր:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Թռունիկները ի՞նչ կ'ուզէին: — Մեծ մայրիկը ի՞նչ հեքիաթ պատմեց: — Ի՞նչ ըսին վանիկը, Նուշիկը, Նազիկը: — Ի՞նչպէս շարունակեց մեծ մայրիկը իր հեքիաթը: — Ո՞վ էր տղոց մէջ ամենէն յամառը: — Մեծ մայրիկը ի՞նչպէս պիտի կարգադրէր վէճը, եթէ բնացած չըլլար:

18. ԳԻՏՈՒՆ ԱՂՈՒԷՍԸ

Անձրե՛ւ, անձրե՛ւ, ցուրտ ձրմե՛ռ...
Ելայ գացի Սիփան լեռ,
Տեսայ՝ այնտեղ հարսնիք կար,
Մեր աղուէսն ալ կը խաղար:

Ճիշդ կէսին էր Յունուարի.
Աղուէսն առի, տուն տարի,
Ըսի.— «Աղուէ՛ս, կարծեմ դուն
Խօսքեր գիտես իմաստուն:

Պատմէ՛ սարէն ու ձորէն,
Պատմէ՛ եւ ձեր աշխարհէն.
Հարկ է, որ մարդ ամէն օր
Սորվի բաներ հին ու նոր»:

Աղուէսն ըսաւ.— «Արժէքով
Գիտելիք շա՜տ կայ իմ քով:
Գիտցածս պոչիս վրայ է,
Պոչս ալ հիմա թրջած է...»:

ՀԱՆԵԼՈՒԿ Զ.— Առանց մաղի կը մաղուիմ,
Հողին մէջը կը շաղուիմ,
Գետնին տակը կը թաղուիմ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիփան.— *Հայաստանի բարձր լեռներէն մէկին է, կը գտնուի Վանայ Նահանգին մէջ:*

Իմաստուն.— *Խելացի:*

Հարկ է.— *Պէտք է:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կար Սիփան լեռան վրայ: — Աղուէսը ի՞նչ կ'ընէր հոն: — Ո՞վ տուն տարաւ զայն: — Ի՞նչ հարցուց առնոր: — Ի՞նչ պատասխան տուաւ աղուէսը: — Ինչի՞ մէջ է անոր իմաստութիւնը: — Ուրիշ պատմութիւններ գիտէ՞ք աղուէսի մասին:

19. ԳՆԴԱԿ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

1

Խաղը սկսաւ։ Բայց ոչ ոք գիտէր, թէ ինք ո՛ր խումբէն էր, որո՛ւ հետ էր եւ որո՛ւ դէմ. վերջապա՞հ էր թէ յառաջապահ, ա՞ջ թեւ էր թէ ձախ. բերդապա՞հ էր, ի՞նչ էր։

Հինգ – վեց հոգի իրարու ետեւէ վազելով կը փնտռէին գնդակը, որուն ուր ըլլալը յայտնի չէր։ Մէյ մըն ալ, չես գիտեր ուրկէ՛, յանկարծ երեւան ելաւ ան։ Խաղացողներէն մէկը ուզեց ոտքով զարնել, բայց գնդակին տեղ՝ ընկերոջը գլխուն զարկաւ։

Ի՛նչպէս եղաւ՝ անտէր գնդակը ինկաւ Ամրամի ոտքերուն առջեւ։ Ամբողջ խումբը վազեց առաջ։ Ամրամ սարսափահար սկսաւ փախչիլ, առանց ուշադրութիւն ընելու գնդակին։ Միւսները կը հալածէին զինք թշնամի մը հալածելու պէս։

Ամբողջ հինգ վայրկեան հոս ու հոն վազելէ ետք, Ամրամ ինքզինք դուռ ըերդին առջեւ. մէկ ոտտումով ցատկեց ձողերէն մէկուն վրայ և հոն կծկուեցաւ։ Հալածողներու խումբը եւս դարձաւ ու հոսաւ դիմացի ըերդին մօտ այն ատեն, երբ գնդակը ներս կը մտնէր անիկ վեցերորդ անդամ ըլլալով։

2

Վերջապէս խաղացողներէն մէկը կրցաւ ձեռք անցընել փոչիով ու ցեխով ծածկուած

գնդակը, դրաւ զայն թեւին տակ ու սկսաւ առաջ վազել։ Յանկարծ առջեւը կտրեց իր խումբին անդամներէն մէկը և պոռաց սպառնական ձայնով.

– Գնդակը ինծի տուր։

– Չեմ տար, – պատասխանեց միւսը։

– Քեզի կ'ըսեմ՝ տուր։

– Քեզի կ'ըսեմ՝ չեմ տար։

– Տո՛ւր, քիչ մըն ալ ես գլորեմ։

Ըսաւ եւ դուրս քաշեց գնդակը ընկերոջը թեւին տակէն, բայց իր ձեռքէն ալ վար ինկաւ եւ գլորելով գնաց առաջ։ Այն ատեն, ինք իրմէ ելած, յարձակեցաւ ընկերոջը վրայ եւ սկսաւ անխնայ ծեծել զայն։

– Գնդակը չես տար, հա՞։ Բերդս ձգեր եկեր եմ եւ չե՞ս թողուր, որ քիչ մըն ալ ես գլորեմ, հա՞...

Եւ կը շարունակէր զարնել։

Հանդիսատեսները, քանի մը հազար հոգի, խնդալէն կը մարէին։

Յանկարծ լսուեցաւ սուլիչին ձայնը, եւ

խաղը գաղրեցաւ։ Բայց ի՞նչ խաղ··· խաղ չէր, պատերազմ էր։
Լաւ որ շուտ վերջացաւ։

ԱՌԱԾ — Ահը վեր է, բան մահը։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջապահ — *Գնդակ խաղացողներու խումբին մէջ եաեւը կեցողներ։*

Յառաջապահ — *Խումբին առջեւը կեցողներ։*

Բեռդապահ — *Բերդը պահպանող։*

Ոստում — *Վեր ցատկել։*

Անխնայ — *Առանց խնայելու, առանց մեղքնալու։*

Հանդիսատես — *Հանդիսին ներկայ եղող։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Ի՞նչ կը խաղային տղաքը։ — Գիտէի՞ն խաղին կանոնները։ — Ի՞նչ ըրաւ Արամ, երբ գնդակը իր ոտքերուն առջեւ ինկաւ։ — Ինչո՞ւ իր ընկերները կը հալածէին զինք։ — Ո՞ւր գնաց Արամ, ինչո՞ւ։ — Յետոյ ի՞նչ եղաւ գնդակը։ — Բեռդապահը ի՞նչ ըրաւ, ինչո՞ւ ծեծեց իր ընկերը։ — Հանդիսատեսները ինչո՞ւ կը խնդային։

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Կազմեցէք նախադասութիւն մը, որուն մէջ յատուկ անուն մը եւ հասարակ անուն մը գտնուին։ օրինակ՝ «Սեւանայ կղզիին մէջ վանք կայ»։

20. ԻՄ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՃՈՅՔՍ

1

Ես ութ տարեկան էի արդէն, երբ սկսայ քերական կարդալ։ Անոր մէջ գտնուած նկարները շատ կը զուարճացնէին զիս, բայց շարաթ մը ետք կը գաղրէին այլեւս հետաքրքրական ըլլալէ։

Իմ ամենամեծ հաճոյքս էր եղբօրս ազգային պատմութեան գիրքը, որուն նկարները դիտելէ չէի կշտանար։ Ամէն մէկ նկարին առջեւ կը կենայի, անվերջ հարցումներ ուղղելով եղբօրս, որ անոնց համբերութեամբ կը պատմէր ինծի մեր թագաւորներուն կեանքն ու կատարած գործերը։

Անոնց մէջ ամենէն շատ կը սիրէի Հայկն ու Արամը։ Կը հիանայի Տրդատի ուժին վրայ։ Բարեկամ էի Արտաշէսին եւ կը պաշտէի արկածախնդիր ու հպարտ Արտաւազդը։ Կը սիրէի իր երկար բաշերով ձին եւ հաւատարիմ շունները, որոնք կը զարդարէին գայլերը իրենց սուր գոչիւններով։

Եղբօր օգնութեամբ կախաղան կը հանէի դաւաճան Մերուժանը եւ կը դլխատէի Վասակ Սիւնին ու Վեստ Սարդիսը։

2

Բայց ամենէն աւելի իմ սրտիս կը խօսէր Կարմիր Վարդանը, որ սակայն կարմիր չէր ներկուած պատկերին մէջ։ Մեր գունաւոր մատիտներով կը սրբագրէինք այդ մեծ սխալը, մինչեւ որ ազգային հերոսը բոլորովին անճանաչելի դառնար։

Կ'երեւակայէինք Տղմուտ գետը, Աւարայրի դաշտը, լայն ականջներով հսկայ փիղերը, Վարդանի սրաթռիչ ձին, Ղեւոնդ Երէցի երկար մօրուքը եւ ահագին խաչը։ Ու մենք մեղի կը ասնէինք հայկական բանակին յաղթանակը։

Ապա ոգեւորուած կը դարձնէինք դրքին էջերը, կանդ առնելու համար մեր հին ու չէն մայրաքաղաքին՝ Անիի պարիսպներուն առջեւ։ Հոն, այդ պարիսպներուն տակ, թշնամիները կը հալածուէին ու կը ջարդուէին, մեր քաջարի բանակներուն կողմէ։

Ի վերջոյ կը փակէինք դիրքը եւ կը սկը-

սէինք թագաւոր մը փնտռել Անիի գահուն վրայ նստեցնելու համար։ Բայց կ'ուզէինք, որ այդ թագաւորը անպատճառ մեր գիւղացի ըլլար...

ԱՌԱՆ.— Ազահէն բա՞ն ուզեցիր,
Զուրին մէջ ծակ փորեցիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անսպառ.— Չհատնող, վերջ չունեցող։
Արկածախնդիր.— Արկածներ փնտռող։
Գլխատել.— Գլուխը կտրել։
Տղմուտ.— Աւարայրի մէջէն անցնող գետակ մը։
Աւարայր.— Արտաղ դաւառին մէջ դիւղ եւ դաշտ, ուր տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը 451ին։
Սրաթռիչ.— Շատ արագ վազող

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ էր փոքրիկ տղուն ամենամեծ հաճոյքը։ – Մեր թագաւորներէն եւ իշխաններէն որո՞նք կը սիրէր եւ որո՞նք չէր սիրեր։ ինչո՞ւ։ – Ամենէն աւելի ո՞վ կը խօսէր իր սրտին։ – Գիրքը գոցելու ատեն ի՞նչ կը փնտռէին փոքրիկ տղան եւ իր եղբայրը։ – ինչո՞ւ կ'ուզէին, որ իրենց գիւղացի ըլլար Անիի թագաւորը։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ցոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած յատուկ եւ հասարակ անունները։ Նախադասութիւններ կազմեցէք հետեւեալ անուններով.— Գահիրէ, դերձակ, դասարան, Պէյրութ։

21. ՀԱՑԵԼԻՆ

Չեմ գիտեր ինչո՞ւ այսքան անպիտան
Եւ խուլ է կարծես հայելին մեր տան...
Ես ի՞նչ եմ ըրած, որ զիս չի սիրեր.
Ինձմէ ի՞նչ կ'ուզէ, ես ալ չեմ գիտեր:

Ամէն անգամ որ կը նայիմ իրեն,
Ուրիշ տղայ մը կ'երեւայ մէջէն,
Մազերը՝ ցրիւ, երկար, գըզգըզուած,
Ձեռքերն՝ անլուայ, շապիկը՝ պատռուած,
Աչքերը՝ կարմրած, երեսը՝ կեղտոտ.
Ո՞վ է այդ տղան ինծի անծանօթ...

Կը զանգատիմ ես, բարկութեամբ կու լամ,
Իսկ իմ դիմացս, նոյն կեղտոտ, լալկան
Տղան է կանգնած, անխօս ու դժկամ:

Իսկ հապա ինչո՞ւ այդ նոյն հայելին
Սիրուն ցոյց կու տայ դէմքը Կարէնին.
Երբ մեծ եղբայրս անոր մէջ նայի,
Ամէն ինչ լաւ է եւ հիանալի,
Հագուստը՝ կարգին, մազերը՝ սանտրած,
Ձեռք ու երեսը՝ մաքուր լուացուած:

Մայրիկը կ'ըսէ, թէ ի զուր այսպէս
Բարձրաձայն կու լամ, կը բարկանամ ես,
Թէ բընաւ չար չէ հայելին մեր տան,
Հաւասար աչքով կը նայի միշտ ան,
Իր տեսա՛ծն է, որ ցոյց կու տայ միայն...

ՀԱՆԵԼՈՒԿ Է.— Աչքդ զոց՝ կ'երեւի,
Աչքդ բաց՝ կը փախչի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցրիւ.— *Ցրուած, տարտղնուած:*
Գըզգըզուած.— *Խառն ի խուռն:*
Կեղտոտ.— *Աղտոտ:*
Դժկամ.— *Դժգոհ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Փոքրիկ տղան ի՞նչ կ'ըսէր հայելիին համար: — Ի՞նչ կը տեսնէր անոր մէջ: — Ինչո՞ւ կը զանգատէր ու կու լար: — Ցանցաւորը ո՞վ էր հայելի՞ն: — Ի՞նչ կ'ըսէր մայրիկը: — Ո՞վ իրաւունք ունի, փոքրիկ տղա՞ն թէ մայրիկը: — Կրնա՞ք ըսել, թէ դուք ի՛նչ տպաւորութիւն ունեցաք, երբ առաջին անգամ ձեր դէմքը տեսաք հայելիին մէջ:

22. ԱՆԼԵԶՈՒ ՊԱՀԱԿԸ

1

Անգամ մը, չէնքի մը բակը մտնելու առեն, ուշադրութիւնս դրաւեց հինգ – վեց տարեկան տղայ մը, որ հեծանիւ նստած՝ կը խաղար փողոցին մէկ անկիւնը: Բայց դեռ անվարժ էր. երբեմն հեծանիւը կը քշէր փողոցին կեդրոնը, ուր ինքնաշարժներ կ՚երթեւեկէին:

– Հիմա՛ ինքնաշարժի տակ կ՚իյնայ, – վախով մտածեցի ես եւ կ՚ուզէի մօտենալ անխոհեմ տղուն, զայն զգուշացնելու համար:

Ցանկարծ տան բակէն դուրս վազեց ահագին գորշ շուն մը, եռ ու առաջ նայեցաւ եւ, տղան տեսնելով, մօտեցաւ անոր ու անշարժ կեցաւ հեծանիւին առջեւ:

– Ճամբա՛յ տուր, – բարկացած գոչեց տղան:

Շունը տեղէն չշարժեցաւ սակայն. կեցած էր փողոցին մէջտեղ եւ իր մարմնով կը պաշտպանէր փոքրիկ անխոհեմ տղան: Երբ տեսաւ, որ ան կը յամառի մնալ հոն, փողոցին կեդրոնը, ակռաներով բռնեց թեւէն եւ հեծանիւին հետ միասին փորձեց տանիլ դիմացի տան բակը:

Տղան կը շարունակէր պոռալ.

– Թո՛ղ տուր... թո՛ղ տուր...

Շունը կը քաշէր տղուն թեւէն եւ պոչով ալ կը հարուածէր, որպէս զի հետեւի իրեն: Ինքնաշարժ անցած առեն կանգ կ՚առնէր, ապա կը նայէր աջ ու ձախ եւ զգուշութեամբ կը շարունակէր ճամբան: Վերջապէս մտաւ տան բակը:

2

Յաջորդ օրը ես դարձեալ հանդիպեցայ նոյն տղուն՝ իր շունը հետ: Տղան կը խաղար չէնքին դուրսի բակին մէջ, իսկ շունը, ականջը սրած, պահակութիւն կ՚ընէր:

Ես մօտեցայ տղուն՝ քանի մը հարցումներ ընելու համար իր խելացի շան մասին: Բայց շունը յանկարծ վեր թռաւ, կեցաւ իմ եւ փոքրիկ տղուն մէջտեղ եւ սպառնագին նայեցաւ ինծի: Ես հեռացայ:

Քիչ առաջ, կրկին նոյն փողոցէն անցնելու ատեն տեսայ, որ կին մը պատուէրներ կու տար չան. յետոյ չոյլեց անոր գլուխը, կարծես մը շարար նեսեց բերանը եւ ձգեց գնաց:

Ես հետաքրքրասիրութեամբ հարցուցի տղուն.

– Մայրդ ի՞նչ կը պատուիրէր ձեր չանը:

– Կ'ըսէր՝ լա՛ւ պահես մեր Սուրիկը, – պատասխանեց փոքրիկ տղան եւ շարունակեց հեծանիւով խաղալ փողոցին մէջ:

Շունը ուշադրութեամբ կը հետեւէր անոր շարժումներուն, երբեմն ալ կասկածանքով ինծի կը նայէր:

– Քիչ առաջ ձեր շունը ակռաներով բռնած կը քաշէր թեւդ, չցաւցո՞ւց, – կրկին հարցուցի ես:

– Ո՛չ, շատ սուր ակռաներ ունի, բայց այնպէս կը բռնէ, որ չցաւցնէ, – պատասխանեց Սուրիկը եւ շարունակեց իր խաղը:

Շունը աչալուրջ կը հետեւէր տղուն, – չըլլա՛յ որ յանկարծ փողոցին կեդրոնը երթայ եւ ինքնաշարժի տակ մնայ, կամ չըլլա՛յ որ մէկը չար դիտաւորութեամբ մօտենայ անոր:

Հաւատարիմ շունը անելու պահակի դերը կը կատարէր:

ԱՌԱՆՑ.– Ուրիշին հացը փոր չի կշտացներ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պահակ.– Պահապան:

Երթեւեկել.– Երթալ դալ:

Գորշ– Ճերմակով սեւ խառն:

Ցամաքիլ.– Ջուրին վրայ պնդել:

Աչալուրջ.– Աչքը բացած, ուշադիր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ո՞վ է քանդեզու պահակը: – Ի՞նչ գիտէք հեծանիւի եւ ինքնաշարժի մասին: – Փոխադրութեան ուրիշ ի՞նչ միջոցներ կան: – Կրնա՞ք պատմել ձեր այսօրուան դասը: – Ուրիշ ի՞նչ պատմութիւններ գիտէք շուներու մասին: – Ո՞ր կենդանին կը սիրէք ամենէն աւելի. ինչո՛ւ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.– Բանի մը որո՛ւ պատկանիլը, որոշեալ կամ անորոշ ըլլալը ցոյց տալու համար կը գործածուին *ս*, *դ*, *ն* եւ *ը* գիրերը, որոնք յօդ կը կոչուին եւ բառերուն ծայրը կը դրուին. օրինակ՝ գիրքը*ս*, տետրակդ, մատիտը, մեղուն:

23. ՓԱՑԼՈՒՆ ԿՈՃԱԿՆԵՐՈՎ ԶԳԵՍՏԸ

1

Պատերազմի տարին սպայ մը կ'ապրէր մեր տունը: Մեկնելու ատեն իր հնամաշ մէկ զգեստը նուէր տուաւ մեզի: Կապոյտ կերպասէ կարուած, փայլուն կոճակներով համազգեստ մըն էր:

Մայրս պզտիկցուց զայն, իմ հասակիս յարմարցուց, եւ ես տէրը եղայ այդ փայլուն, ոսկեղօծ կոճակներով զգեստին: Հայրս ալ զոյգ մը նոր կօշիկ առաւ ինծի համար: Ես հպարտ էի ու երջանիկ:

Կիրակի առաւօտ մը, սպայի զգեստն ու նոր

կօշիկներս հագած, դուրս եկայ փողոց։ Կ'ուզէի, որ ընկերներս ալ տեսնէին զիս իմ նոր հագուստ-կապուստիս մէջ։

Առաջին անգամ զիմացս ելաւ Թաղոսը, որ իմ ոխերիմ հակառակորդս էր։

2

Դէմ առ դէմ կանգնած էինք ես ու Թաղոսը, ան իր ազատ ցնցոտիներով, իսկ ես իմ նոր հագուստներովս։ Կատուի հանդարտ ու վտանգաւոր քայլերով մօտեցաւ ինծի, նայեցաւ ոտքէս մինչեւ գլուխս, ապա մատով շօշափեց ոսկեզօծ կոճակները։

— Ոսկի՞ են, — հարցուց չարութեամբ։

— Հա՛րկաւ։ Ոսկի ալ չըլլան, ոսկեզօծ են, — պատասխանեցի ես։

— Ի՛նչ ոսկի, պղի՛նձ են, — ըսաւ արհամարհոտ շեշտով։

— Ոսկեջուր են կ'ըսեմ քեզի, — պնդեցի ես։

— Ես ալ կ'ըսեմ, որ պղինձ են, — կրկնեց ան նոյն չարութեամբ։

Զգացի, որ կռիւ կը փնտռէ։ Ինք մեծ էր ինձմէ, կրնար ծեծել զիս։ Որոշեցի կամաց մը տուն դառնալ։ Բայց ժամանակ չձգեց ինծի, ոտքերովը կոխկռտեց նոր կօշիկներս եւ փոշի նետեց անոնց վրայ։

Ես ծռեցայ փոշին մաքրելու համար։ Ճիշդ այդ պահուն յանկարծ ուժգին հարուած մը տուաւ ետեւէս։ Ես գետին փռուեցայ երեսս ի վար։ Երբ կրկին ոտքի ելայ, ան շատոնց հեռացած էր արդէն։

Տուն դարձայ վրաս — գլուխս փոշոտած, աչքերս արցունքով լեցուն, շրթունքս արիւնոտած։ Հանեցի փայլուն կոճակներով զգեստս ու նորէն հագայ իմ հին, կարկատուած բաճկոնս։

Այն ժամանակ միայն համոզուեցայ, թէ զօրաւոր ըլլալու համար բաւական չէր փայլուն կոճակներով զգեստը։

Ուրիշ բան պէտք էր։

ԱՌԱՆ — Թշնամիդ մրջիւն ալ ըլլայ,
դարձեալ զզոյշ կեցիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնամաշ — Հինցած — մաշած։
Ոխերիմ — Անհաշտ, կատաղի։
Ցնցոտի — Հին հագուստ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ — Սպան ի՞նչ նուէր տուաւ մեկնելու առեն։ — Փոքրիկ տղան ինչո՞ւ հպարտ ու երջանիկ էր։ — Կիրակի առտու մը որո՞ւ հանդիպեցաւ։ — Ի՞նչ բանի համար կը վիճէին երկու հակառակորդները։ — Վերջը ի՞նչ եղաւ։ — Ի՞նչ պէտք է զօրաւոր ըլլալու համար։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Հետեւեալ բառերուն ծայրը դրէք յարմար յօդեր — իմ մայրիկ, քու գրիչ, իր տետրակ, մեր դպրոց, իրենց այգի, ձեր եկեղեցի։

24. ՆՈՐ ՏԱՐԻ

Խաղով ու տաղով,
Ծափ ու ծիծաղով
Ահա՛ եկաւ նոր տարին,
Բերաւ երգեր,
Անոյշ միրգեր
Մեր երջանիկ աշխարհին:
Կ'ապրինք ուրախ ու խնդուն
Տօնածառին շուրջ – բոլոր,
Տօնածառն է փայլփլուն՝
Իր աչքերով բիւրաւոր:

Կ'երգենք ահա՛ ցնծագին,
Մենք՝ դեռատի պարիկներ.
Կարծես աստղերն երկրնքին
Մեր բակին մէջ են ինկեր:
Հագած ներմակ վերարկուն՝
Զըմեռ պապին մեր բարի
Կ'ըսէ ձայնովն իր հրնչուն.
– Շընորհաւո՛ր նոր տարի...

ՀԱՆԵԼՈՒԿ Ը.— Զեռքեր չունի՝ ծափ կու տայ,
Հովի երգին չափ կու տայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տաղ.— *Երգ:*
Միրգ.— *Զոր պտուղ:*
Խնդուն.— *Ուրախ, խնդալով:*
Շուրջ – բոլոր.— *Բոլորտիքը, շուրջը:*

Բիւրաւոր.— *Անթիւ, անհամար:*
Ցնծագին.— *Ուրախութեամբ, ուրախ – զուարթ:*
Դեռատի.— *Տարիքով փոքր:*
Պարիկ.— *Բարի ոգի, փերի, յաւերժահարս:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Նոր տարին ի՞նչ կը բերէ մեզի: – Ի՞նչ է տօնածառը: – Ի՞նչ իմաստ ունի հոս «բիւրաւոր աչքեր» բացատրութիւնը: – Իրա՞ւ աստղեր ինկած են բակին մէջ: – Դուք ի՞նչպէս կը տօնէք նոր տարին: – Նոյն բաներ՞ն են նոր տարին եւ կաղանդը:

25. ՑՈՒՐՏԵՐԸ ՍԿՍԱՆ

1

Երբ աշունը գար, մեծ հայրս կը հագնէր մուշտակէ հաստ վերարկուն եւ կ'ուղէր, որ վառարանին մէջ կրակը անպակաս ըլլայ:

– Մեծ հայրիկը վերարկուն հագեր է, ձմեռը եկեր է, – ձայն կու տային մեր տնեցիները իրարու:

– Այո՛, ցուրտերը սկսան, – կը հաստատէր մեծ հայրս վերարկուին փէշերը ծունկերուն վրայ քաշելով: – Է՛, պարապ խօսք չը-կարծէք, եկողը հայկական ձմեռն է:

Ու մեր խնդրանքին վրայ կը պատմէր, թէ ի՛նչ բան է հայկական ձմեռը:

2

«Մեր երկրին մէջ, – կը սկսէր իր պատմութիւնը մեծ հայրս, – ընդհանրապէս ամառը շատ տաք կ'ընէ, ձմեռն ալ՝ շատ ցուրտ:

Տեղեր կան, ուր ցուրտը կը հասնի զերոյէն վար մինչեւ 35 աստիճանի: Այնպէս կ'ըլլայ, որ մարդուն շունչը կը սառի: Ամէն ինչ կը ծածկուի ձիւնի տակ: Կը տիրէ բուք ու բորան: Մարդիկ տուներէն դուրս չեն կրնար ելլել:

«Հիւսիսային Հայաստանի մէջ ձիւնը այնքան առատ կ'ըլլայ, որ յաճախ ճամբորդները կը թաղուին անոր տակ: Նախզգուշութեան համար իրենց հետ կը տանին երկար ձողեր. ձիւնակոյտերու տակ մնալու պարագային ծա-



կեր կը բանան անոնցմով, որպէսզի օդ մտնէ ներս: Ակէ զատ՝ ձողերը ծակերէն դուրս կ'երկարեն՝ ցոյց տալու համար, որ ձիւնին տակ մարդիկ կան»:

— Պրո՛ռ, — յանկարծ կը բացագանչէի ես, ընդհատելով մեծ հօրս պատմութիւնը, — այդ ցուրտին մարդ ի՞նչպէս կը դիմանայ ձիւնին տակ:

— Փա՛յտ նետեցէք վառարանը, — կը հրամայէր մեծ հայրս հատա վերարկուին փէշերը ծունկերուն վրայ քաշելով նորէն:

ԱՌԱԾ.— Մեծ լեռը մեծ ալ շուք ունի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշտակ.— *Կարկ մը վայրի կենդանիներու մորթ:*
Բուք ու բորան.— *Զիւնախառն հով:*
Ձիւնակոյտ.— *Ձիւնի կոյտ, իրարու վրայ դիզուած ձիւն:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Երբ աշունը գար, ի՞նչ կ'ընէր մեծ հայրիկը: — Ի՞նչ կ'ըսէին տնեցիները իրարու: — Ի՞նչ կը պատմէր մեծ հայրիկը: — Ուրիշ ո՞ր երկիրներուն մէջ ձմեռը խիստ կ'ըլլայ: — Ո՞ր երկիրները բարեխառն կլիմայ կ'ունենան:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ցոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած յօդերը: Դուք ալ գրեցէք վեց բառ ու յարմար յօդեր դրէք անոնց ծայրը:

26. ՀԱՅԿԱԿԱՆ ՁՄԵՌԸ

1

— *Բայց դեռ չվերջացուցի, — կը շարունակէր մեծ հայրս իր պատմութիւնը:*

Մենք ականջնիս սրած մտիկ կ'ընէինք:

«Մտիկ ըրէք, որ հասկնաք, թէ ի՞նչ կը նշանակէ հայկական ձմեռը:

«Դուք գիտէ՞ք, թէ ո՛վ է Քսենոփոն: Չէ՞ք գիտեր: Ցոյն զօրավար մըն է, որ Քրիստոսէ չորս հարիւր տարի առաջ Պարսկաստան գնաց Կրտսերն Կիւրոսի օգնութեան: Յետոյ, իր տասը հազար զինուորներուն հետ, Հայաստա-

նի մէջէն անցաւ իր հայրենիքը վերազառնալու համար»։

— Քսենոփո՞ն, Քսենոփո՞ն... փո՛ն — փո՛ն, — կը կրկնէինք մենք կատակի համար։

Սակայն մեծ հայրս իր պատմութեան թելը չէր կորսնցներ։

2

«Զիւնը, կը պատմէ այս յոյն զօրավարը, մինչև ձիերուն կուրծքը կը հասնէր։ Զինուորները չատ չարչարանք կրեցին, չատ տանջուեցան, մինչեւ իսկ չատերը մեռան ցուրտէն։

«Զիւնի ընդարձակ տարածութիւնները կը մնասէին մանաւանդ տեսողութեան։ Զինուորները ստիպուած էին իրենց աչքերուն առջեւ սեւ առարկայ մը բռնել, որպէս զի չկուրնան։

«Բայց ամբան խստութիւնը միայն բարձր դիրք ունեցող տեղերու յատուկ չէ։ Մեր Տիգրան Մեծ թագաւորի օրով Հռոմայեցիները պաշարած էին Արտաշատը, որ հայոց մայրաքաղաքն էր։ Միայն ատատկաշունչ ձմեռն էր, որ ազատեց Արտաշատը Հռոմայեցիներու ձեռքը իյնալէ։

«Արարատեան նահանգի սահմաններուն մէջ, Արածանի գետին վրայ յանկարծ ձիւն եկաւ աշնան, եւ սկսան ատատիկ ցուրտն ու ատատամանիքը։ Հռոմայեցի զինուորները չկրցան դիմանալ եւ մերժեցին աւելի առաջ երթալ։ Հրամանատարը ստիպուեցաւ տեղի տալ։ առաւ իր բանակը եւ հեռացաւ Հայաստանէն։

«Այսպէս է հայկական ձմեռը»։

Երբ մեծ հայրս վերջացուց իր պատմութիւնը, մենք աւելի եւս սկսանք դողալ։

Հայկական ձմեռը կարծես մեր դուռն էր եկեր։

ԱՌԱՆ։— Անոյշ ուտո՛ղը գիտէ լեղիին համը։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրտսերն Կիւրոս։— Պարսիկ իշխան մը, որ իր եղբօր դէմ ապստամբեցաւ, բայց յաղթուելով սպաննուեցաւ Քրիստոսէ 401 տարի առաջ։

Արտաշատ։— Հայաստանի հին մայրաքաղաքներէն մէկը, որուն հիմնադիրն է մեր Արտաշէս Բ. թագաւորը։

Տիգրան Մեծ։— կամ Մեծն Տիգրան, թագաւոր Հայաստանի (Քրիստոսէ առաջ (95 — 55), հիմնադիր՝ Տիգրանակերտ քաղաքին։

Սատկաշունչ։— Ուժգին փչող (հով)։

Սառնամանիք։— Սառոյցի պէս պաղ (օդ)։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Մեծ հայրիկը ուրիշ ի՞նչ ըսաւ հայկական ձմրան մասին։ — Ո՞վ է Քսենոփոն։ — Ի՞նչ կը պատմէ ան։ — Գիտէ՞ք անոյշ գիրքին անունը։ — Հռոմայեցի զինուորները ինչո՞ւ հեռացան Հայաստանէն։ — Ուրեմն ի՞նչ տեսակ կլիմայ ունի Հայաստան։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Ցօդը երկու տեսակ է, որոշիչ եւ անորոշ։ Որոշիչ յօդերն են ա, դ, ն եւ ը գիրերը։ օրինակ՝ գիրքս, գրիչդ, այգին, պարտէզը։

27. ԿՌՈՒԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

– Ապրի՛ս, ապրի՛ս, բա՛ջ Կոզբադին, –
Ըսաւ Մելիքն իր աթոռէն.–
Արժէ, որ ես վիզէդ կսլսեմ
Մեր արծիւի մեծ նըշանը,
Պարգեւ՝ քու մեծ յաղթութեանը:
Ո՞ւր են հապա, առջեւրս քեր
Սասմայ ոսկին ու աղջիկներ:

Ըսաւ Մելիք, ու Կոզբադին
Գըլուխ տուաւ մինչեւ գետին.
– Ապրած կենաս, մե՛ծ թագաւոր,
Հազիւ փախայ ես ձիաւոր,
Ո՞ւր քերէի Սասմայ ոսկին:
Խենդ մ'է ծրներ հայոց ազգին,
Ո՛չ ան գիտէ, ո՛չ տէր ու մեծ,
Այսպէս գլխուս զարկաւ, ջարդեց.
«Չեմ տար, ըսաւ, հօրս ոսկին,
Չեմ տար կանայքն իմ հայ ազգին,
Սասմայ երկիր ձեզ տեղ չրկայ...
Քու թագաւորդ, ըսաւ, թող գայ,
Թէ որ քաջ է, ուժով առնէ»:

Կատղեցաւ սաստիկ թագաւորն հըզօր.
– Կանչեցէք, ըսաւ, իմ զօրքը բոլոր,
– Կանչեցէ՛ք, թող գան, հագնին զէնք, զրահ.
Ես կռուի կ'երթամ Դաւիթի վրայ,

Սասունն աւերեմ,
Հեղեղեմ, քերեմ :

ՀԱՆԵԼՈՒԿ Թ.– Մէկը կանգնած կը խօսի,
Երկուքն ականջ կը դնեն,
Իսկ երկուքն ալ կը նային:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարգեւ.– *Նուէր, ընծայ:*

Ահ.– *Վախ:*

Զրահ.– *Երկաթէ կամ ուրիշ մետաղէ շինուած (դինուորի հագուստ):*

Հեղեղել.– *Հեղեղի պէս քշել տանիլ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ի՞նչ ըսաւ թագաւորը Կոզբադինին: – Իրա՞ւ պատուանշան պիտի տար անոր: – Կոզբադին ի՞նչպէս արդարացուց ինքզինք: – Որո՞ւ համար է ըսուած «խենդ մ'է ծներ»: – Ինչո՞ւ կատղեցաւ թագաւորը եւ ի՞նչ հրաման տուաւ: – Ձեզի համար ո՞վ է այս պատմութեան ամենէն սիրելի դէմքը. ինչո՞ւ:

28. ՊԶՏԻԿ ՄՀԵՐ

1

Պզտիկ Մհեր, Դաւիթի որդին, ելաւ հեծաւ հօրը ձին, հասաւ Վանայ դաշտը:

Օր մը, պտոյտի ատեն, տեսաւ ագռաւ մը. աղեղը լարեց, նշան առաւ եւ զարկաւ վիրաւորեց խեղճ թռչունը:

Բշեց ձին, հասաւ քարայրի մը առջեւ. տեսաւ՝ վիրաւոր ագռաւը մտաւ քարայրին բաց դուռնէն ներս: Ինքն ալ մտաւ ոնոր ետեւէն: Հոս նայեցաւ, հոն նայեցաւ, բայց ագռաւը չկար ու չկար:

Մհեր ուզեց ետ դառնալ, սակայն ձիուն ոտքերը խրեցան հողին մէջ. փորձեց քալել, չըկրցաւ: Կրկին հեծաւ ձին եւ քշեց առաջ, բայց ձիուն ոտքերը նորէն խրեցան կակուղ հողին մէջ:

— Առուն, լոյսը բացուելուն, կ'ելլեմ դուրս, — ըսաւ ինք իրեն:

Ձին կապեց հոն. յանկարծ քարայրին երկու դուռները փակուեցան, և Մհեր մնաց ներսը:

Այդ քարայրը հիմա կը կոչուի Մհերի Դուռ:

2

Դարերէ ի վեր մեր քաջ իշխանը կը մնայ այդ քարանձաւին մէջ փակուած. դուրս չի կրնար դալ: Աւանդութիւն մը կ'ըսէ, թէ տարին անգամ մը կը բացուի դուռը, երկինքէն մանանայ կ'իջնէ, Մհերն ու ձին կ'ուտեն եւ ամբողջ տարին ա՛լ չեն անօթենար:

Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի այսպէս, ո՛չ ոք գիտէ: Գիտենք միայն, որ Դաւիթի որդին օր մը կրկին լոյս աշխարհ պիտի գայ, պիտի առնէ թուր — կայծակին, պիտի հեծնէ իր հրեղէն ձին եւ պիտի պատժէ թշնամիները:

ԱՌԱՆ՝— Լայն օրը նեղ ապրէ,
որ նեղ օրը լայն ապրիս:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խրիլ՝— Ուտոյի կամ հողի մէջ մանել

Քարայր, քարանձաւ՝— Քարի կամ ժայռի մէջ փորուածք:

Մանանայ՝— Մեկրի համ ունեցող ճերմակ հիւթ մը, որ կը սառցուի կարգ մը ծառերէ եւ բոյսերէ:

Հրեղէն՝— Կրակի պէս, կրակոտ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝— Ո՞վ է Պզտիկ Մհեր: — Օր մը ի՞նչ պատահեցաւ: — Վերջը ի՞նչ եղաւ: — Աւանդութիւն մը ի՞նչ կ'ըսէ: — Մեր պատմութենէն ուրիշ աւանդութիւններ գիտէ՞ք:

29. ԶՈՒԿԵՐԸ, ԶՈՒԿԵՐԸ...

1

Թռչունները օդին մէջ կը թռչին, որովհետեւ թեւեր ունին, իսկ ձուկերը ջուրին մէջ կը լողան, որովհետեւ լողակներ ունին: Պիտի ըսէք, որ մարդիկ ալ օդին մէջ կը թռչին եւ ջուրին մէջ կը լողան, թէեւ ո՛չ թեւեր ունին, ո՛չ լողակներ: Է՛հ, չիտակ խօսքին ո՛վ ինչ կրնայ ըսել:



Ձուկերը ինչո՞ւ կրնան դիւրութեամբ ճեղքել ջուրը, պատճառը շատ պարզ է. որովհետեւ անոնց մարմինին երկու ծայրերը սուր են, կրնան արագօրէն դատնալ ջուրին մէջ եւ եա՛ ուստէ չարժիլ: Պուչը դեկի դեր կը կատարէ այս չարժումներուն մէջ:

Ձուկերը ջուրէն դուրս չեն կրնար ապրիլ, կը մեռնին: Բայց ասոնց ասոնց ջուրին երեսը կ'ելլեն եւ օդ կը շնչեն իրենց խռիկներով:

Ձուկերու բազմաթիւ տեսակներ կան: Կան մանրերը, հապիւ մատի մը չափ: Կան նաեւ խոշորները, որոնք կրնան նաւեր անդամ չրջել: Աշխարհի ամենէն մեծ կենդանին կէտ ձուկն է, որ կ'ապրի օվկիանոսներու մէջ:

2

Ձուկերուն մէջ ամենէն վտանգաւորը եւ ամենէն վայրագը շնաձուկն է, որ չորսէն վեց մեթր երկարութիւն ունի: Ակռաները շատ սուր են եւ զօրաւոր. կատաղութեամբ կը յարձակի մարդուն վրայ եւ կը խածնէ, մէկ հարուածով կը փրցնէ անոր թեւը կամ ոտքը եւ կտոր կտոր ընելով կ'ուտէ: Ցաւալի պատահած է, որ ամբողջ մարդ մը կլլէ:



Այս զարհուրելի կենդանին, որ ծովային գազան կը կոչուի, երբեմն օրերով կը հալածէ նաւերը: Երկաթէ սուր կեռերով կ'որսան զայն: Իր կարծր մորթը եւ իւղոտ լեարդը միայն կ'օգտագործուին:

Ձուկերը ընդհանրապէս իրարմով կը սնանին. մեծերը կը յարձակին փոքրերուն վրայ եւ կը կլլեն զանոնք: Փոքրերն ալ որդերով, ջրային միջատներով եւ ուրիշ զանազան ուտելիքներով կ'ապրին: Կան ձուկեր ալ, որոնք կրիայ, օձ, մուկ եւ նոյնիսկ բադ կ'որսան:

ԱՌԱԾ.— Գործ դրին՝ փախաւ, հաց դրին՝ հասաւ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լողակ.— *Զուկերուն թեւը:*
Խոիկ.— *Զուկերուն շնչառութեան գործարանը, որ կը գտնուի ականջին մէջ:*
Վայրագ.— *Վայրենի, անպուտ:*
Զարհուրելի.— *Սարսափելի, խիստ վախնալիք:*
Կեռ.— *Երկաթէ ճանկաւոր գործիք մը:*
Օգտագործել.— *Օգտակար կերպով գործածել:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Թռչունները ինչո՞վ կը թռչին: — Զուկերը ինչո՞վ կը լողան: — Ինչո՞ւ դիւրութեամբ կը նեղէն ջուրը: — Ի՞նչ տեսակ ձուկեր ծանօթ են ձեզի: — Ո՞րն է աշխարհի ամենէն խոշոր կենդանին: — Ի՞նչ գիտէք շանաձուկի մասին: — Զուկերը ինչո՞վ կը սնանին: — Ցամաքային կենդանիներուն մէջ ո՞րն է ամենէն վայրագը. ամենէն ուժո՞վը. ամենէն մե՞ծը:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Անորոշ յօդն է *մը* կամ *մըն*, որ անորոշ իմաստ ունի. օրինակ՝ մարդ *մը*, մարդ *մըն* է:

30. ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Հին, փառաւոր իմ հայրենիք,
Նորէն կանգներ ես անահ.
Աւերներէդ բիւր վարդենիք
Ծլած – ծաղկած են հիմա:

Հազար անգամ աւեր տեսար,
Շղթայուեցար բիւր անգամ.
Հազար անգամ ոտքի ելար,
Իմ հայրենիք արնաքամ:

Քու երկաթէ խօսքդ ես նետեր
Անցնող բոլոր դարերուն:
Ստրկութեան միշտ անընտել՝
Պիտի պանծաս կրկին դուն:

ՀԱՆԵԼՈՒԿ Ժ.— Անտառը կը մեծնայ,
Քաղաքը կ'երգէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անահ.— *Ահ, վախ չունեցող. անվախ:*
Արնաքամ.— *Արիւնը քամուած. ճիշդը՝ արիւնաքամ:*
Ստրկութիւն.— *Գերութիւն:*
Անընտել.— *Զընտելացած, չվարժուած:*
Պանծալ.— *Փառաւորուիլ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ «հին» ու «փառաւոր» կը կոչենք մեր հայրենիքը: — Որո՞նք աւերեցին կամ շղթայեցին մեր երկիրը: — Միշտ աւերուա՞ծ մնաց ան: — Ի՞նչ կը նշանակէ «երկաթէ խօսք»: — Ստրկութեան վարժուա՞ծ ազգ մըն ենք մենք: — Կրնա՞ք պատմութենէն օրինակներ յիշել մեր ազատասիրութեան մասին:

31. ԿԱՄՈՒՐՋ ԾԻՆՈՂՆԵՐԸ

1

Անգամ մը կենդանիները խորհուրդի նըստան անտառին մեծ կաղնիին տակ։ Խօսք առաւ առիւծը.

– Գիտէ՞ք, ազանե՛ր, այս ժողովը ինչո՛ւ ենք գումարեր։

Գայլը ոռնաց, արջը մռլտաց, բոլորն ալ ըսին, թէ պատճառը չեն գիտեր։ Այն տեղն անտառներու թագաւորը այսպէս ըսաւ.

– Դուք բոլորդ գիտէք, թէ այս անտառը նեղ կու գայ մեզի։ Աղուէսը կը գանդատի, որ երկու տարի է բերանը հաւու միս չէ մտած. գայլը բոլոտութիւն է առեր, եւ բժիշկները պատուիրեր են, որ գառնուկի արիւն լակէ։ Բայց ի՞նչպէս լակէ, իշխա՛ններ, երբ անտառին մէջ ո՛չ նախիր կը մնայ, ո՛չ ալ



ոչխար մը հիւր կու գայ։ Պատճառը շատ պարզ է. սա մեր քովի անիծեալ գետը աշխարհէն կտրած է մեզ։ Այսպէս որ մնայ, ամէնքս ալ կորսուած ենք։ Պէտք է ասոր մէկ ճարը գտնենք։

Կենդանիները մոնչեցին, ոռնացին, ճչացին, եւ ամէնքն ալ իրաւունք տուին առիւծին։

2

Շատ խորհեցան, քիչ խորհեցան, վերջապէս որոշեցին կամուրջ մը ձգել գետին վրայէն։

– Աղուէսը թող ճարտարապետ ըլլայ, – խօսք տուաւ առիւծը, – եւ թող պատրաստէ կամուրջին յատակագիծը։ Ի՞նչ կ՚ըսէք, իշխա՛ններ, աղուէսին քուէ կու տա՞ք այս պաշտօնին համար։

– Հրամա՞նք է, հրամանք է, – մռլտացին ժողովականները ամէն կողմէ։

– Շատ լաւ, – ըսաւ առիւծը, – հիմա աշխատանքը բաժնենք մէջերնիս. թող ամէն մէկը պաշտօն մը առնէ եւ սկսինք շինութեան։

Կապիկը ժողովին քարտուղարը եղաւ եւ արձանագրեց որոշումները։ Վագրը գործին վարիչը պիտի ըլլար, արջը անտառէն գերան պիտի կտրէր, փիղը կնճիթով ջուր պիտի կրէր, էշն ալ՝ կռնակով կիր ու աւազ։

Կենդանիները կը պատրաստուէին գետին մօտ երթալ՝ որոշելու համար ձգուելիք կամուրջին տեղն ու պարագաները։ Այդ միջոցին առաջ անցաւ էշը, խոնարհութիւն մը բրաւ առիւծին առջեւ եւ ժողովականներուն դառնալով յարեց.

— Աղա՛ներ, շատ աղէկ ըրիք, շատ լաւ որոշեցիք, — սակայն բան մը կայ, որուն խելքս չպառկեցաւ։ Ըսէ՛ք, կ՚աղաչեմ, այս կամուրջը որ պիտի չինենք, դեռին երկայնքի՞ն պիտի ձգենք թէ լայնքին...։



ԱՌԱԾ.— Էշն ի՞նչ գիտէ՝
Նուշն ի՛նչ է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լակել.— *Լափել։*

Նախիր.— *Եզներու, կովերու խումբ։*

Ճարտարապետ.— *Շէնքի մը յատակագիծը պատրաստող եւ շինութեան վրայ հսկող։*

Յատակագիծ.— *Շինուելիք շէնքի մը ծրագիրը, գծագրուած պատկերը։*

Գարտուղար.— *Գրագիր։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Անգամ մը ի՞նչ ըրին կենդանիները։ — Ի՞նչ ըսաւ առիւծը։ — Ժողովը ի՞նչ որոշում տուաւ։ — Ի՞նչ պաշտօններ բաժնուեցան կենդանիներուն միջեւ։ — Էշը ի՞նչ հարցուց։ — Ի՞նչ կ՚ըսէք այդ հարցումին։ — Կամուրջը շինուեցա՞։

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ցոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած որոշիչ եւ անորոշ յօդերը։

---

32. ԶԱԼՈՆ

1

Զալոն, մեր բարեկամ շունը, փողոց կ՚ելլէր գուարթ հայլիւն մը արձակելով։ Կը խառնուէր զպրոցէն տուն վերադարձող տղոց, դունչը կը քսէր անոնց ձեռքերուն, կը մռլտար, աջ ու ձախ կը դառնար, պոչը կ՚երերցնէր, եա ու առաջ կը վազէր։

Գիւղին տղաքը շատ կը սիրէին զայն։ Անոր ընտանի ձայնը, միշտ ուրախ դիմադիծը, մանաւանդ կատակի հանդուրժող բնաւորութիւնը բաւական էին, որ տղաքը անոր հետ բաժնէին իրենց հացն ու պանիրը։ Երբեմն վրան կը հեծնէին ձիու պէս, պոչը կամ ականջները կը քաշէին, բերանը լաթ կը թիմէին։



Յանկարծ հեռուէն կը լսուէր շուներու դղրդաւուքի ձայն մը։ այն ատեն Զալոն ականջները կը ցցէր, վար կը նետէր իր վրայ հեծնողները եւ կը վազէր կռուի վայրը։

Կը պատահէր, որ այս իրարանցումի պահուն տղու մը գլուխը գետին զարնուէր, տղան խկոյն դանդաղի կ՚երթար մօրը։

— Ո՞վ զարկաւ, զաւա՛կս, — կը հարցնէր մայրը։

— Զալոն, — կը պատասխանէր տղան եւ միտքը կը դնէր այլեւս Զալոյին հետ չխօսիլ, քէն պահել։

2

— Զա՛լո, Զա՛լո, — կը կանչէր ճպռոտ աչքերով Սերդոն։

Զալոն, պատերուն տակէն քալելով, ուրախ — ուրախ կը մօտենար տղոց ու անոնց քով կը նստէր հին բարեկամի մը պէս։ Սերդոն պայուտակէն կը հանէր քերականը եւ Զալոյի քիթին դէմ բռնելով կ՚ըսէր.

— Կարդա՛, Զալո՛, այր — բեն — դիմ։

— Այր — բեն — դիմ, — կը կրկնէին միւսները։

Զալոն, լեզուն դուրս ճղած, տղոցը երեսին կը նայէր ծոյլ աչակերտի մը նման։ Սերդոն կը բարկանար եւ՝ չրա՛խկ՝ ուժգին ապտակ մը կ՚իջեցնէր խեղճ Զալոյի դունչին, ճիշդ ինչպէս վարժապետը յանախ կ՚իջեցնէր իր քիթ ու բերանին։

Ամէն առաւ, երբ տղաքը խումբ — խումբ դպրոց կ՚երթային, Զալոն ալ անոնց հետ կը վազէր մինչեւ դպրոցին դուռը։ Յետոյ, մբռուքը կախ, կը դառնար եւ, երբ դպրոցին դուռը գոցէին իրեն դէմ։

Այսպէս էր Զալոն, ուշիմ, խելացի, ամէն բան հասկցող։ Միայն խօսիլն էր պակաս։

ԱՌԱԾ։— Շուները կը զզուըտին իրարու հետ,
բայց գայլին դէմ կը միանան միշտ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դունչ։— *Կենդանիներուն կզակը, քիթ ու բերանը։*
Ընտանի։— *Մանրիմ, մօտիկ։*
Ճպռոտ։— *Աչքերը ապատ. ճիպռ՝ աչքի ապտեղութիւն։*
Մռուք։— *Վարի շրթունքը, մռութը կախ՝ դժգոհ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ կ՚ընէր Զալոն։ — Գիւղին տղաքը ինչո՞ւ կը սիրէին զայն։ — Երբեմն ի՞նչ կը պատահէր։ — Սերգոն ի՞նչ կ՚ըսէր Զալոյին։ Ինչո՞ւ կ՚ապտակէր զայն։ — Ի՞նչ տեսակ շուն էր Զալոն։ — Աչքի զարնող ի՞նչ յատկութիւններ ունին շուները։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Որակական ածականը բառ մըն է, որ գոյականին ճով կը դրուի եւ անոր ինչպէս ըլլալը ցոյց կու տայ։ Օրինակ՝ խաղաբավար տղայ, աշխատասէր աղջիկ։ Խաղաբավար եւ աշխատասէր բառերը որակական ածական են։

33. ԱՆՈՒՐԸ

Շուն մը, ճանճրացած, օր մ'անտառ ելաւ,
Հոս – հոն շրջեցաւ ու գայլ մը տեսաւ:
Գայլը նիհար էր, քաղցած ու նրկուն,
Անյոյս ման կու գար մինչեւ իրիկուն:

Շունը գիրուկ էր, լեցուն, թաւամազ,
Կռնակը տաքուկ, քալուածքը նազ–նազ.
Երբ գայլը տեսաւ, մէկէն կանգ առաւ,
Պոչը ժողվըտեց ու մը՛ռ – մը՛ռ ըրաւ:

«Բարեւ քեզ, ե՛ղբայր, – ըսաւ մեր գայլը.
Ի՞նչ է վիճակդ, այդ կարծրը բանը»:
«Անուր է, – յարեց շունն ամչնալէն.
Ասով կը կապեն զիս, երբ որ ուզեն:

Ատոր փոխարէն, – ձայնը բարձրացուց, –
Կը կերակրեն զիս»: Ու փորը ցուցուց:
«Ես պարարտ ու գէր՝ ժուռ կու գամ հոս հոն,
Դուն խեղճ ու քաղցած՝ կ'ոռնաս միշտ
անքուն»:

Գայլը, այն ատեն, կուշտ ու կուռ խնդաց.
«Ա՜յ խեղճուկ եղբայր, – ուժով մը պոռաց, –
Աւելի լաւ է պտըտիլ քաղցած,
Քան թէ ըլլալ կուշտ, բայց անուր կապած...»:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԱ.– Տնակ մը կայ, դուռ չունի,
Վրան արծաթ, մէջն ոսկի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անուր.– *Երկաթէ օղակ:*
Քաղցած.– *Անօթի:*
Նկուն.– *Խոնարհ, նուաստացած:*
Թաւամազ.– *Խիտ, առատ մազ ունեցող:*
Նազ–նազ.– *Նազանքով, նազ ընելով:*
Պարարտ.– *Գէր:*
Ժուռ գալ.– *Շրջիլ, պտըտիլ, ման գալ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ո՞ւր գնաց շունը եւ ո՞վ տեսաւ: – Կրնա՞ք նկարագրել շունն ու գայլը: – Ի՞նչ ըսին անոնք իրարու: – Ինչո՞ւ ամչցաւ շունը: – Իսկ ինչո՞ւ խնդաց գայլը: – Դուք ո՞ր մէկուն իրաւունք կու տաք, գայլի՞ն թէ շունին:

34. ԿԱՏՂԱԾ ՇՈՒՆԸ

1

– Լսեցի՞ր, Վա՛րդան, – հարցուց Մարտոն, – մեր գեղի շունը՝ Զալոն՝ կատղեր է: Երէկ յանկարծ յարձակեր է հովիւին վրայ եւ ուզեր է խածնել. հովիւը հազիւ կրցեր է ինքզինք ազատել: Այսօր գիւղացիները հաւաքուեր են, որ սպաննեն Զալոն:

– Մեղք չէ՞ Զալոյին, ինչո՞ւ կը սպաննեն:

– Խե՞նդ ես, ի՞նչ ես, – ըսաւ Մարտոն, – եթէ չսպաննեն, կը խածնէ գիւղացիները:

Վարդան չէր գիտեր, թէ ի՛նչ ըսել է չան

կառղիլը. Մարտոն ալ շատ բան չէր գիտեր։ Խօսելով – խօսելով դացին դպրոց։

2

Ուսուցիչը ինք ալ իմացեր էր Զալոյին կառղիլը։ Տղաքը ամէնքն ալ կառղած չան վրայ կը խօսէին եւ շատ կ'ափսոսային, որ խեղճ Զալոն պիտի սպաննեն։

– Այո՛, զաւա՛կներս, մեղք է Զալոյին, – ըսաւ ուսուցիչը, – բայց գիտէ՞ք, թէ ի՛նչ գէշ բան է շուներուն կառղիլը։ Զալոն հիմա հանդիպած մարդը խածնել կ'ուզէ եւ անգամ մը որ խածաւ, ա՛լ այդ մարդուն կեանքը վտանգի տակ է։

– Ի՞նչպէս, ի՞նչպէս, – հարցուցին տղաքը։

– Ըսեմ, թէ ի՛նչպէս. օրինակի համար, եթէ Զալոն խածնէր Հովիւ Սահակը, Սահակն ալ կը կառղէր քանի մը շաբաթ ետք, կը յարձակէր դէմը ելլողին վրայ, կը խածնէր, կը վարաւէր։ Բայց ինք այլեւս չէր աղատեր եւ մեծ տանջանքներով կը մեռնէր։

3

Տղաքը մտիկ ըրին այս խօսքերը, յետոյ հարցուցին.

– Դարման չկա՞յ այս հիւանդութեան։

– Հա՛րիւր կայ։ Կառղութիւնն ալ հիւանդութիւն մըն է ուրիշ ամէն հիւանդութեան պէս։ Այդ հիւանդութեան թոյնը կը գտնուի կառղած չան շողիքին մէջ. երբ չունը խածնէ, շողիքը կը խառնուի մարդուն արեան հետ եւ մարդն ալ կը վարակուի։ Փասթէօր անուն Ֆրանսացի գիտուն մը գտաւ կառղութեան դարմանը։ Անոր գտած դեղը հեղուկ մըն է, որ չիճուկ կը կոչուի։

– Ի՞նչ կ'ընեն այդ չիճուկը։

– Կը ներարկեն վարակուած մարդուն մարմնին մէջ։ Այս ձեւով մարդը կ'ապէկնայ։ Բայց ժամանակ կորսնցնելու չէ, պէտք է որ հիւանդը անմիջապէս բժիշկին տարուի։

– Հապա մեր գիւղին մէջ որ չիճուկ չկա՞յ ... ի՞նչ պէտք է ընենք, – հարցուց Սարգիս։

– Այն տեղն ուրիշ ճար մը խորհելու է, – ըսաւ ուսուցիչը, – կա՛մ անմիջապէս տաղելու է խածուած տեղը եւ կամ շուտով քաղաք տանելու է հիւանդը։

– Այդ չիճուկը գտնուելէ առաջ ի՞նչ կ'ընէին, – հարցուց Գէորգ։

– Ի՞նչ պիտի ընէին, զաւա՛կս, բան մըն ալ չէին կրնար ընել։ Հապարաւոր մարդիկ կը մեռնէին պտրտոց տեղը։ Գիտուն Փասթէօր գիրը գտաւ եւ ամբողջ աշխարհի բարիք բրաւ։ Անոր համար է, որ անիկա մէկն է մարդկութեան մեծ բարեբարներէն։

ԱՌԱՔ.– Հաջան շունը խածան չ'ելլար։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ափսոսալ։— *Մեղքնալ, ցաւ զգալ։*

Փարատել։— *Բզիկ-բզիկ, կտոր-կտոր ընել։*

Շողիք։— *Թուք, լորձունք։*

Վարակուիլ։— *Հիւանդութենէ բռնուիլ։*

Փասքէօռ։— *Ֆրանսայի դիտուն մը, որ կարդ մը վարակիչ հիւանդութիւններ դարմանելու յատուկ դեղեր գտաւ* (1822–1895)։

Ներարկել։— *Մարմնին մէջ մտցնել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ինչո՞ւ պիտի սպաննէին Զալոն։ — Տղաքը ինչո՞ւ կը մեղմային զայն։ — Ի՞նչ հարցուցին ուսուցչին։ — Ուսուցիչը ի՞նչ բացատրութիւն տուաւ։ — Ո՞վ գտաւ կատաղութեան դարմանը։ — Եթէ շինուկ չգտնուի, ի՞նչ պէտք է ընել։ — Ուրիշ ի՞նչ հիւանդութիւններ կը դարմանուին շինուկով։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Ցարմար զոյականներ դրէք հետեւեալ որակական ածականներուն քով եւ անոնցմով խօսքեր կազմեցէք։— քաջ, մաքուր, բարձր, փայլուն, խոշոր։

---

35. ԲԵՐՆԻՆ ՀԱՄԸ ԳԻՏՑՈՂ ՇՈՒՆԸ

1

Մեծ քաղաքի մը մէջ, օր մը, ճամբորդին մէկը հաց կը գնէր հացագործի մը խանութէն։ Ցանկարծ խոշոր շուն մը եկաւ, կեցաւ իր առջեւ եւ սկսաւ պոչը երերցնել բան մը խնդրելու ձեւով։

Ճամբորդը կտոր մը հաց նետեց անոր։

— Այս շունը ձե՞րն է, — հարցուց ապա հացագործին։

— Ո՛չ, — պատասխանեց հացագործը, — բայց մեր խանութին առջեւէն անդին չ'երթար եւ անցնող-դարձողէն դրամ կը մուրայ։



— Դրա՞մ կը մուրայ, — զարմացաւ ճամբորդը։ — Շունը ի՞նչ պիտի ընէ դրամը։

— Օ՜, պարո՛ն, շատ լաւ գիտէ, թէ ի՛նչ պիտի ընէ։ կը մանէ հացագործի մը խանութը եւ կարկանդակ կը գնէ, — բացատրեց հացագործը։

Ճամբորդը շատ զարմացաւ և ուզեց ստուգել ինչ որ հացագործը ըսած էր իրեն: Սկսաւ քալել փողոցն ի վար, շունը հետեւեցաւ իրեն: Կանգ առաւ քիչ մը անգին, շունն ալ կանգ առաւ եւ աչքերով կը հասկցնէր, թէ բան կ'ուզէ:

2

Այն տեղն ճամբորդը պղինձէ դրամ մը նետեց դեռին: Շունը խածաւ դրամը եւ սկսաւ քալել, հասաւ փուռի մը առջեւ, երկու թաթերը դրաւ հաշուեսեղանին վրայ եւ դրամը երկընցուց հացագործին:

Հացագործը հասկցաւ եւ փոքր կարկանդակ մը տուաւ շան: Շունը ուրախութեամբ ձգեց դրամը հաշուեսեղանին վրայ, առաւ կարկանդակը եւ պոչը երերցնելով սկսաւ ուտել:

Ճամբորդը ապշած կը նայէր եւ չէր հաւատար աչքերուն:

ԱՌԱԾ.— Մինչեւ առուն ջուր կու գայ,
Գորտին աչքը դուրս կու գայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարկանդակ.— *Խմորեղէնի տեսակ մը:*

Սուզել.— *ձշդել, հաստատել:*

Հաշուեսեղան.— *Հաշիւ ընելու սեղան, որուն մէջ խանութպանները կը պահեն նաեւ իրենց դրամը:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ տեսաւ ճամբորդը: — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ իր եւ հացագործին միջեւ: — Ճամ-

բորդը ի՞նչպէս ստուգեց հացագործին ըսածը: — Շունը ի՞նչ ըրաւ յետոյ: — Ինչո՞ւ զարմացաւ ճամբորդը: — Շուներու մասին ուրիշ պատմութիւններ գիտէ՞ք:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Որակական ածականներ դրէք հետեւեալ գոյականներուն քով եւ անոնցմով խօսքեր կազմեցէք.— Ճամբորդ, հաց, խանութ, շուն, դրամ:

36. ՄԻԱՄԻՏ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Շինական մը, գայրագին,
Իր մտրակով էշը սաստիկ կը ծեծէր:
Պալատական մ'անցաւ քովէն դիպուածով,
Գաւազանը վերցուց իսկոյն,
Ցարձակեցաւ խեղճին վրայ՝ պոռալով.
«Կը սպաննեմ քեզ, վա՛տ անասուն,
Եթէ դպչիս այս էշուն,
Որ քեզ բարիք ըրաւ անվերջ,
Երբեք չարիք՝ կեանքին մէջ»:

Շինականը ցուպը ձեռքէն ձգեց վար,
Ծունկի եկաւ առջեւն էշուն.
«Մեղա՛յ, ըսաւ, ես քեզ մեղա՛յ,
Չէի գիտեր, Ա՛ստուած վրկայ,
Թէ պալատին մէջ բարեկամ ունիս դուն...»:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԲ.— Նեղ ճամբայ, լայն՝ պտուկ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շինական՝— *Գիւղացի։*
Զայրագին՝— *Սաստիկ բարկացած։*
Մտրակ՝— *Խարազան։*
Ցուպ՝— *Փոքր գաւազան։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ՝— Շինականը ինչո՞ւ կը ծեծէր իր էշը։ — Ո՞վ անցաւ այդ պահուն եւ ի՞նչ ըսաւ։ — Այն ատեն ի՞նչ ըրաւ շինականը։ — Ո՞րն է «միամիտ ակնարկութիւն»ը ըսուած խօսքերուն մէջ։ — Ի՞նչ պատասխան կը կարծէիր, որ տուաւ պալատականը։ — Որո՞ւն իրաւունք կու տաք դուք, պալատականի՞ն թէ գիւղացիին՝ ինչո՞ւ։

37՝ ՄԱՍԻՍԸ, ՄԱՍԻՍԸ…

1

Մասիսը հայ ժողովուրդի պաշտպան լեռն է, մեր երկրին նահապետն է։ Դարերէ ի վեր կը հսկէ մեր վրայ եւ կարծես ըսել կ՚ուզէ՝

— Քանի՞ ես այստեղ եմ, մի՛ վախնաք։

Անիկա կը նմանի սպիտակ բաշով առիւծի։ Հսկայի մը պէս կը բարձրանայ Արարատեան դաշտին վրայ, Արագածի հետ դէմ — դիմաց։

Ճամբորդ ու անցորդ հիացումով կը դիտեն զայն, կը նային անոր զոյգ գագաթներուն,

խորունկ պատկառանքով, ու կարծես կը սպասեն, որ անիսօս լեռը յանկարծ լեղու ելլէ ու սկսի խօսիլ։

Մինչեւ Արաքսի ափերը ու քիչ մըն ալ անդին, Մասիսը միշտ զոյգ է, հայը ու գաւակի պէս կողք-կողքի։

2

Հայկական աւանդութիւն մը կ՚ըսէ, թէ Ջրհեղեղի ատեն Նոյի տապանը կը ծփար անսահման ջուրերուն վրայ եւ ի զուր կայան մը կը փնտռէր։

Վերջապէս տապանը կ՚անցնի Գրգուռ լեռան քովէն եւ կանգ կ՚առնէ Փոքր Մասիսի առջեւ։ Նոյ նահապետ կ՚ըսէ անոր՝ «Սի՛ս, Սի՛ս, ա՛ռ դիս»։ Փոքր Մասիսը կը պատասխանէ՝ «Դնա՛ Մասիս, ան մեծ է քան դիս»։

Տապանը կ՚ուղղուի դէպի Մեծ Մասիս եւ կը կենայ անոր գագաթին վրայ։

Այս աւանդութիւնը ցոյց կու տայ, որ մեր նախահայրերը յարգանք ունէին մեծին, բարձրին ու վսեմին հանդէպ։ Անոնք կ'ուզէին, որ իրենց որդիներն ալ ըլլան իրենց պէս, սիրեն ու յարգեն ինչ որ մեծ է ու վսեմ։

Մասի՞սը, Մասի՞սը··· ան հիմա ալ կարծես ըսել կ'ուզէ·

— Քանի՞ ես այստեղ եմ, մի՛ վախնաք։

ԱՌԱՆՑ·— Դարվերը դարվար ալ ունի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նահապետ·— *Ընտանիքի մը մեծը, պետը։*
Պատկառանք·— *Խոր յարգանք։*
Կողք — Կողքի·— *Քով — քովի։*
Տապան·— *Նոյի շինած նաւը։*
Ծփալ·— *Ջուրերուն վրայ շարժիլ։*
Կայան·— *Կենալու տեղ։*
Գրգռուր·— *Հայկական լեռ մը Մշոյ դաշտին մէջ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Մասիսը ինչո՞ւ նահապետ կը կոչուի։ — Ինչո՞վ պատկառանք կ'ազդէ ան։ — Հայկական աւանդութիւն մը ի՞նչ կ'ըսէ։ — Ի՞նչ է այս աւանդութեան իմաստը։ — Հայաստան լեռնայի՞ն թէ դաշտային երկիր մըն է։ — Ուրիշ ի՞նչ լեռներ կան մեր երկրին մէջ։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ·— Բացի որակականէն, կան նաեւ թուական, ցուցական, ստացական եւ անորոշ ածականներ։

38· Ի՞ՆՉՊԷՍ ԴԱՐԲԻՆ ԵՂԱՑ

1

Ես կը սիրէի հօրս զարթնոցը, կը սիրէի մուրճերը, կը սիրէի սալը, որուն վրայ կը դընեն չիկացած երկաթը ու կը ծեծեն տաք-տաք։

Հնոցին մօտ կար ուրիշ սալ մը, մխոնելէն աւելի փոքր· կը սիրէի անոր վրայ երկաթ ծեծել իմ փոքրիկ մուրճովս։

— Դարբի՞ն կ'ուզես ըլլալ, — հարցուց օր մը հայրս ժպտելով։

— Այո՛, հայրիկ, կ'ուզեմ մարդկա՛ զառնալ քեզի պէս, — վրայ բերի ես ուրախութեամբ։

— Հասակդ փքոցին չի հասնիր, ապա՛ս։

— Կը հասնի՛· բայց պէտք է դրամ տես։

— Կու տամ, — համառեցաւ հայրս, — օրը տասը փարա։

— Պիտի տաս, հա՞, չխաբես։

Մեծ եղբայրս՝ Գասպարը քահ — քահ խնդաց եւ հնոցին եռեւեռ տարաւ զիս, ասքերուս տակն ալ հատա կոճդ մը դրաւ, որպէսզի ձեռքս հասնի փքոցին։

2

Երբ իրիկուն եղաւ, արդէն բոլորովին յոգնած էի։ Վերադարձայ տուն, չուտ մը ընթրե-

ցի և անմիջապէս անկողին մտայ։ Յաջորդ օրը առաւն կանուխ գործիս գլուխն էի դարձեալ։ Եւ այսպէս՝ ամբողջ շաբաթ մը։ Ամբերուս մէջ փոքրիկ ըշտիկներ գոյացած էին, մորթը ուռած էր ու սաստիկ կը ցաւէր։

Շաբաթ օր հայրս վեց հատ տասը փարանոց տուաւ ինծի. շաբաթականս էր։ Ո՛րքան ուրախ էի։ Կիրակի առաւ, անկողնէն ելածիս պէս, վազեցի մանրավաճառին խանութը, գնեցի ընկոյզ, չաքար, չամիչ ու կպին, եւ գրպանս ալ դեռ բաւական դրամ մը նաց։

Բայց յաջորդ երկուշաբթի այլեւս ինաւ փափաք չունէի գործի սկսելու։

— Թող ասիերս ապէկնան, նորէն կու գամ, — ըսի հօրս։

— Զէ՛, ապաս, կոանն ու փքոցը քու գործդ չեն, դուն գիրքերդ կարդա, — յարեց հայրս։

Այսպէս վերջացաւ իմ դարբնութիւնս։

Զեմ գիտեր լա՞ւ եղաւ թէ վատ։

ԱՌԱՆ։— Գոց ձեռքով նանն չի բռնուիր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սալ։— Դարբինները յատուկ երկաթէ գործիք մը, որուն վրայ մետաղ կը ծեծեն։

Շիկացած։— Կրակի պէս կարմրած։

Հնոց։— Երկաթագործի կրակարան։

Փոց։— Կրակը արծարծելու գործիք։

Կոնդ։— Մասի բուն։

Բշտիկ։— Փոքր ուռեցք։

Մանրավաճառ։— Մանր – մուր բաներ ծախող։

Կռան։— Երկաթ ծեծելու յատուկ մուրճ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Փոքրիկ տղան ի՞նչ բան կը սիրէր։ — Օր մը ի՞նչ խօսակցութիւն ունեցաւ հօրը հետ։ — Ի՞նչ համակայնութեան եկան հայր ու որդի։ — Շաբաթականն քանի՞ փարա ստացաւ փոքրիկ տղան։ — Ի՞նչ ըրաւ այդ դրամը։ — Շարունակե՞ց գործը։ — Ինչո՞ւ։ — Արհեստը լաւ է թէ ուսումը։ — Դուք ի՞նչ կ'ուզէք ըլլալ ապագային։

39. ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Գարնան անոյշ աղմուկով,
Գարնան երգով դու եկար։
Փայլով, փառքով ու շուքով,
Խնդութիւնով դու եկար։

Սիրտս լի էր մութ մէգով,
Սիրտս թոյլ էր ու տրկար.
Գարնան անոյշ աղմուկով,
Գարնան երգով դու եկար։

Արեւավառ քու հուրով,
Գեղեցկութեամբ դու եկար.
Փայլով, փառքով ու շուքով,
Խնդութիւնով դու եկար:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԳ.— Ծակեմ, ծակեմ, ծակը ձգեմ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուք.— *Այստեղ կը նշանակէ չքեղութիւն:*
Մէգ.— *Մշուշ. մառախուղ:*
Արեւավառ.— *Արեւի պէս վառուող, խիստ տաք:*
Հուր.— Կրակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ է զարմանք երգով, փայլով ու փառքով եկողը: — Այս ուռանուորը գրողին սիրտը ինչո՞ւ տխուր էր: — Ան կը սպասէ՞ր, որ մէկը պիտի գար: — Ինչո՞ւ անպատճառ փառք ու խնդութիւն կը տեսնէ եկողին մէջ:

40. ԱՅՈ ԵՒ ՈՉ

1

Այոն փոքրիկ աչխոյժ աղջիկ մըն էր, ժըպտուն աչքերով, զուարթ ու բարեկիրթ: Երբ մայրիկը ըսէր իրեն «երեսդ լուա, ղգեստներդ մաքրէ», փոքրիկ աղջիկը կը պատասխանէր խնդոյն.

— Այո՛, մայրիկ:

Անոր երեսը մաքուր էր միշտ, մազերը սանտրուած, հագուստները կոկիկ եւ արդուկուած:

Ոչը պզտիկ դանդաղ տղայ մըն էր, յոնքերը կախ, աչքերը մռայլ, շրթունքը ուռած: Երբ մայրիկը ըսէր «երեսդ լուա, ղգեստներդ մաքրէ», փոքրիկ տղան կը պատասխանէր կոպտութեամբ.

— Ո՛չ, չեմ ուզեր:

Անոր երեսը մրոտ էր, մազերը խառն ի խուռն, հագուստները փոշոտ ու թափթփած:

Երբ մայրիկը ըսէր Այոին «դնա թաշկինակս բեր», փոքրիկ աղջիկը կը պատասխանէր զուարթ շեշտով մը.

— Այո՛, մայրիկ, հի՛մա:

Եւ կը վազէր բերելու մայրիկին թաշկինակը:

Ոչը երբեք մեծերուն խօսքը մտիկ չէր ըներ: Երբ հայրիկը ըսէր «դնա ջուր մը բեր», անիկա ուսը վեր կը քաշէր եւ կը մրթմրթար.

— Ո՛չ, չեմ երթար. ո՛չ:

2

Ճաշի ժամանակ, երբ մայրիկը Այոին ըսէր «անձեռոցդ կապէ, նստէ կերակուրդ կեր», փոքրիկ աղջիկը կը պատասխանէր անմիջապէս.

— Այո՛, մայրիկ: Ա՜խ, այս ի՜նչ լաւ կերակուր է:

Իսկ երբ Ոչին ըսէին «անձեռոցդ կապէ, նստէ կերակուրդ կեր», կոշտ ու կոպիտ կերպով կը պոռար ան.

— Ո՛չ, չեմ կապեր, ո՛չ: Ո՜ւֆ, այս ի՜նչ դէշ կերակուր է:

Երբ մութը կոխէր եւ մայրիկը ձայն տար Այոին «ժամանակ է քնանալու, դնա պառկէ», բարեկիրթ աղջիկը իսկոյն ոտքի կ'ելլէր եւ կ'ըսէր·

— Այո՛, այո՛, երթամ պառկիմ։ Գիշեր բարի, հա՛յրիկ, գիշեր բարի, մա՛յրիկ։

Իսկ Ոչը երբեք առանց լացի չէր երթար քնանալու, ոտքերը գետին կը զարնէր, կը պոռար — կը կանչէր·

— Ո՛չ, չեմ պառկիր· ո՛չ, չեմ քնանար։

Դժուարաւ կը հանէին հագուստները եւ կը տանէին պառկեցնելու։

Ամէնքը կը սիրէին Այոն, իսկ Ոչին երեսն անգամ չէին ուզեր տեսնել։

ԱՌԱԾ·— Մարդ կայ՝ վարդ է,
Մարդ կայ՝ յարդ է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոպտութեամբ·— *Կոշտութեամբ, անկրթութեամբ։*

Մրոտ·— *Մուր՝ մոխի եւ ծուխի ձգած սեւ արատը· մրոտ՝ աղտոտ։*

Անձեռոց·— *Ճաշի առեն գործածուած սրբիչ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ—։ Ի՞նչ տեսակ աղջիկ էր Այոն։ — Ի՞նչ տեսակ տղայ էր Ոչը։ — Ի՞նչ առաւելութիւններ ու թերութիւններ ունէին անոնք։ — Ոչը չէ՞ր ճանչնար իր թերութիւնները· ինչո՞ւ չէր սրբագրեր։ — Դուք որո՞ւն պիտի ուզէիք նմանիլ, Այո՞ն թէ Ոչին։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ·— Բայ կը կոչուին այն բառերը, որոնք բան մը ընել կամ ըլլալ կը ցուցնեն, օրինակ՝ պատռել, հիւանդանալ։

41· ԱՌԱՋԻՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄԸ

1

Ես հապիւ չորս — հինգ տարեկան կայի այն առեն, բայց այսօրուան պէս կը յիշեմ մեր սենեակին մէկ անկիւնը դրուած այն ահագին պահարանը, որուն մէջ մայրս ու հօրեղբօրս կինը կը պահէին մեղր, կարագ, մածուն, թարմ պանիր, միրգեր եւ ուրիշ զանազան ուտելիքներ։

Օր մը, մանկական հետաքրքրութենէ մղուած, բացի պահարանը եւ աղէկ մը քննեցի մէջն ու դուրսը։ Աչքիս զարկաւ չաքարամանը· մատյ ներս, դուռը դոցեցի վրայէս, առի կտոր մը չաքար եւ սկսայ ուտել։

Յանկարծ բացուեցաւ պահարանին դուռը, ու ես տեսայ հօրեղբօրս մօրուսաւոր դէմքը։

— Ա՛յ դու··· ի՞նչ կ'ընես հոս։

Եւ իր չար կանաչ աչքերով ծուռ — ծուռ նայեցաւ ինծի։

Ես ամուր մը դոցեցի բերանս, որպէս զի ինչ ուտելս չտեսնէ։ Բայց անօգուտ· ան ամէն ինչ հասկցած էր արդէն։

2

— Ուրեմն դուն այսպէս կը մտնես այստեղ եւ չաքար կ'ուտես հա՞, — պոռաց հօրեղբայրս մեծ–մեծ բանալով իր կանաչ աչքերը։

Ապա, ցաւցնելու ատիճան սեղմելով ձեռ-

քրս, դուրս քաշեց գիս պահարանէն, տարաւ սենեակին մէջտեղը եւ աւելցուց.

—Բերանդ բա՛ց նայիմ:

Վախէս աւելի ուժով սեղմեցի բերանս, սակայն ան ձեռքը խոթեց ներս, մատներով դուրս հանեց շաքարը եւ յանկարծ... երեսիս վրայ զգացի ծանր հարուած մը ու ինկայ գետին:

Ամբողջ կեանքիս մէջ իմ առաջին ու վերջին գողութիւնս եղաւ ասիկա:

Բայց ես շատ զարմացած էի հօրեղբօրս խելքին վրայ եւ կը մտածէի, թէ ի՛նչպէս առանց տեսնելու հասկցաւ, որ կերածս շաքար էր:

ԱՌԱՆ.— Սուրին վէրքը կ'անցնի,
Լեզուին վէրքը չ'անցնիր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միրգ.— *Զոր պտուղ:*
Մօրուսաւոր.— *Մօրուք ունեցող:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Փոքրիկ տղան ի՞նչ կը ցիշէր իր մանկութենէն: — Օր մը ի՞նչ պատահեցաւ: — Ո՞վ եկաւ յանկարծ: — Ի՞նչ ըրաւ հօրեղբայրը: — Իսկ ի՞նչ ըրաւ փոքրիկ տղան: — Ամենէն աւելի ի՞նչ զարմանք կը պատճառէր իրեն:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բայերը իրենց ծայրը կ'ունենան *ել, իլ, ալ* վերջաւորութիւնները, որոնք լրծորդութիւն կը կոչուին. օրինակ՝ *երգել, նստիլ, կարդալ:*



42. ԵՍ ԻՄ ԱՇԽԱՐՀԻ...

Ես իմ աշխարհի գարունը կ'ուզեմ,
Զուարթ ու վրսեմ,
Գետակը փրփուր, հաւքերը կայտառ,
Ծաղիկը պայծառ:

Այս օտար երկրի գարունն է մրոայլ,
Ծաղիկը անփայլ,
Արեւը կրրակ, գետակը տրխուր,
Թռչունները լուռ:

Մեր սիրուն ձորի գեփիւռն է քնքուշ,
Արեւը անոյշ:
Ա՜խ, իմ աշխարհի գարնանն եմ կարօտ,
Նախշուն ու ծաղկոտ:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԻ.— Բոլորքը փուշ,
Մէջինը նուշ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաւք.— *Թռչուն։*
Կայտառ.— *Աշխոյժ, եռանդուն։*
Զեփիւռ.— *Մեղմ հով։*
Նախշուն.— *Զարդարուն, գեղեցիկ։*
Ծաղկոտ.— *Ծաղկած, ծաղիկներով լեցուն։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ մեր երկրի գարունը կը փնտռենք միշտ։ — Օտար երկիրներու գարունը ինչո՞ւ անփայլ կ'երեւայ մեզի։ — Ամէն երկրի գարուն նո՞յնը կ'ըլլայ։ — Ո՞ր ամսուն կը սկսի գարունը. ամա՞ռը. աշո՞ւնը. ձմե՞ռը։ — Եղանակներուն մէջ ո՞րն է ամենէն հաճելին։

---

43. ԱՌԱՋԻՆ ԱՌՈՒՏՈՒՐԸ

1

— Ա՛խ, մայրիկ, ե՛ս երթամ շուկայ, ե՛ս երթամ բերեմ, — կ'ըսէր փոքրիկ Սիսակը իր մայրիկին։

Այդ օրը Սիսակին մայրիկը լուացք կ'ընէր եւ յանկարծ օճառն էր պակսեր։ Է՛, ի՞նչ ընէր, լուացքը կիսա՞տ թողուր։

— Հա՞, մայրիկ, ե՛ս երթամ շուկայ, ե՛ս երթամ, — միշտ կը պնդէր Սիսակ։

— Է՛, լաւ, — ըսաւ մայրիկը ճարահատ, — տեսնեմ պիտի կրնա՞ս ըսածներս բերել։ Ա՛ռ զամբիւղը, ա՛ռ սա տասը դահեկաննոցն ալ. կը դնես մէկ օխա օճառ, մէկ տուփ լեղակ եւ չորս դահեկան ալ ետ կը բերես, հասկցա՞ր։ Անգամ մը կրկնէ տեսնեմ, ի՞նչ պիտի բերես։

— Մէկ օխա օճառ, մէկ տուփ լեղակ, չորս դահեկան ալ ետ, — արագ — արագ կրկնեց Սիսակ։

— Լա՛ւ, տղրիս. չո՛ւտ, վազէ՛, բայց չուշանաս, — պատուիրեց մայրիկը։

Սիսակ խկոյն զամբիւղը գլուխն անցուց եւ ուրախ — ուրախ դուրս թռաւ տունէն։

— Մէկ օխա օճառ, մէկ տուփ լեղակ, չորս դահեկան ալ ետ, — կը կրկնէր ճամբան, աշխատելով որ չմոռնայ։

2

Քիչ մը անդին դէմն ելաւ Մարիամը, դրացիենց աղջիկը։ Սիսակ, ցոյց տալով գլուխն անցուցած զամբիւղը, ըսաւ հպարտութեամբ.

— Տե՛ս, Մարիամ, շուկայ կ'երթամ։

— Եկուր, որ ես ալ տիկնիկս ցուցնեմ քեզի, տեսնե՛ս, ի՛նչ սիրուն է, — վրայ բերաւ Մարիամ։

— Չէ՛, չէ՛, կ'ուշանամ, — պատասխանեց Սիսակ եւ շարունակեց վազել։

— Մէկ օխա լեղակ, չորս տուփ օճառ, չորս դահեկան ալ ետ, — արագ — արագ կը կրկնէր միտքին։

ԱՌԱԾ.— Մինչեւ որ հաստը բարակնայ,
բարակին հոգին կ'ելլէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զամբիւղ.— *Կողով։*

Լեղակ.— *Մանիշակագոյն ներկ մը, որ լուացքի համար կը գործածուի։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Սիսակին մայրիկը ինչո՞ւ շուկայ դրկեց զինք։ — Ի՞նչ ըսաւ անոր։ — Ճամբան ո՞վ հանդիպեցաւ։ — Ինչո՞ւ հպարտ էր Սիսակ։ — Մարիամէն բաժնուելէ ետք ի՞նչ կը կրկնէր ինքն իրեն։ — Ճի՞շդ էր ըսածը։ — Ինչո՞ւ մոռցեր էր։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ցոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած բայերը եւ ըսէք, թէ ո՛ր լծորդութեան կը պատկանին։

---

44. Ի՞ՆՉ ԸՍԵՐ ԷՐ ՄԱՅՐԻԿԸ

Սիսակ հապիւ բաժնուեր էր Մարիամէն, յանկարծ մօտիկ փողոցէն դուրս ելաւ բարձրահասակ ու նիհար ծերունի մը, թեւին տակ մեծ հոփանոց մը սեղմած։ Դպրոցին ուսուցիչն էր, պարոն Հայրապետը։

Տեսնելով իր ուսուցիչը, Սիսակ անմիջապէս զամբիւղը հանեց գլխէն, քղանցքները շտկեց եւ մեծի պէս բարեւ տուաւ։

— Ա՜, շուկա՞յ կ'երթաս, Սիսա՛կ, — հարցուց պարոն Հայրապետը։

— Այո՛, պարոն, մայրիկս դրկեց, — պատասխանեց Սիսակ։

Յետոյ ինքն իրեն կրկնեց նորէն.

— Մէկ օխա դահեկան, մէկ տուփ օճառ, չորս լեղակ ալ եւ։

Ու շարունակեց քալել արագ — արագ։

2

Շատ դնաց թէ քիչ, յանկարծ դիմացն ելաւ գիւղին նախիրը։ Եզ մը, կոտոշները արնկած, ուղղակի իր վրայ կու գար։ Սիսակ վախէն սկսաւ աւելի արագ քալել. քիչ մը վազեց, ետեւէն նայելու, յետոյ կեցաւ ու մտածեց։

Ի՞նչ ըսեր էր մայրիկը։

— Հա՛, — մտաբերեց ուրախութեամբ, — մէկ օխա լեղակ, մէկ տուփ դահեկան, չորս օճառ ալ եւ։

Վերջապէս հասաւ խանութ։ Ներս մտաւ ու հպարտ-հպարտ բաւ խանութպանին.

— Մէկ դահեկան լեղակ, մէկ օճառ տուփ, չորս օխա ալ եւ։

— Ի՞նչ, ի՞նչ, — խնդալով հարցուց խանութպանը։

— Մէկ դահեկան օճառ, մէկ լեղակ տուփ, չորս օխա ալ եւ, — կրկնեց Սիսակ։

— Երեւի մէկ օխա օճառ, մէկ տուփ լեղակ, չորս դահեկան ալ եւ, — սրբագրեց խանութպանը։

— Այո՛, այո՛, ճիշդ այդպէս, — կարմրելով հաստատեց Սիսակ։

3

Երջանիկ եւ ուրախ՝ տուն կը վերադառնար փոքրիկ Սիսակը. զգուշութեամբ բռնած էր զամբիւղը եւ ափին մէջ ամուր սեղմած չորս դահեկանը:

Վազելով հասաւ տուն, ներս մտաւ խոհանոցէն եւ պոռաց դրեթէ շնչասպառ.

— Մայրի՛կ, մայրի՛կ, տե՛ս, բերի ամէնը. ա՛ռ քեզի մէկ լեղակ օխա, մէկ օճառ տուփ, չորս դահեկան ալ ետ...:

ԱՌԱԾ.— Մարդ մը իր տան թէ՛ աղան է,
թէ՛ ծառան:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բղանցք.— *Զգեստին ծայրի մասը, փէշ:*
Մտաբերել.— *Միտքը բերել, յիշել:*
Շնչասպառ.— *Շունչը հատած:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Մարիամէն ետք ո՞վ հանդիպեցաւ Սիսակին: — Ցետոյ ի՞նչ պատահեցաւ: — Խանութպանէն ի՞նչ ուզեց Սիսակ: — Ինչո՞ւ ուրախ էր տուն վերադարձած ատեն: — Ճիշդ կատարե՞ց մայրիկին պատուէրը. շնորհիւ հրո՞ւ: — Ձեր մայրիկն ալ շուկայ դրկո՞ծ է ձեզ:



45. ԻՄ ՆԺՈՑԳՍ

Ունի նժոյգս փրրփրրաբաշ
Երկու փունջ մազ իր նակատին.
Անոր թեւեր կու տայ քամին.
Ընկերս է ան արագավազ:

Երբ սուր ու լայն իր ականջին
«Հապա՛, Սեւո՛ւկ, թրռի՛ր» ըսեմ,
Կը դոփէ հողը ցնծագին,
Հուր կը ցայտէ սեւ աչքերէն:

Կը սրլանայ հովէն արագ
Ճամբուն վրայ կանաչ դաշտին,
Բոժոժներն ալ կը զարնեն ծափ.

Զրրա՛նգ — զրրա՛նգ...
Զրրա՛նգ — զրրա՛նգ...

Թէեւ փոքրիկ ու մանկատի,
Քաջ հեծեալ եմ՝ սրտոտ, արի.
Իմ Սեւուկիս մէջքին կրպած՝
Մենք կը թռչինք հովէն արագ:

Ոտքերն ուժեղ, մէջքը բարակ,
Բոժոժներն ալ հընչուն, զուարթ,
Կը զրրընգան
Զրրա՛նգ – զրրա՛նգ...
Իմ ճժոյգս է արագավազ,
Ճակո՛ն երկու փունջ ոսկի մազ:

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԵ.– Ես երկար կ'ուտեմ.
Անունս գիտէ՞ք:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճժոյգ.– *Ձանիւ ցեղէ ձի:*
Փրփրաբաշ.– *Փրփուրի պէս բաշեր ունեցող:*
Քամի.– *Հով:*
Դոփել.– *Ոտքով գետինը զարնել:*
Բոժոժ.– *Փոքր զանգակ:*
Մանկատի.– *տարիքով փոքր:*
Արի.– *Քաջ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.– Ի՞նչ յատկութիւններ ունի փոքրիկ տղուն ճժոյգը: – Ի՞նչ էր անունը: – Ի՞նչ տեսակ մէկն էր փոքրիկ տղան: – Իրա՞ւ ճժոյգ էր անոր ունեցածը. հապա ի՞նչ էր: – Ի՞նչ է տարբերութիւնը ճժոյգին, ձիուն եւ երիվարին:

46. ՓՈՔՐԻԿ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ

1

Փոքրիկ Երուանդը կ'ուզէր խանութ բանալ, խանութպան ըլլալ: Բերաւ մէկ երկու աթոռ ու դրաւ իրարու քով;

– Ասիկա սեղանն է, – ըսաւ ուրախ – ուրախ:.



Վրան շարեց տուփեր, գիրքեր, լրագիրներ, մէկ երկու շիշ, իր փայտէ ձին, մայրիկին տուած խնձորը, գրպանի զմելին, հոլը եւ ուրիշ խաղալիկներ: Խանութը պատրաստ էր:

Վազեց քովի սենեակը եւ, հոնկէ բերաւ պապիկին գունաւոր մեծ թաշկինակը, կապեց առջեւը գոգնոցի պէս, երկար մատիտ մը ան–

ցուց ականջին եաեւ ու կեցաւ խանութին առջեւ:

— Այս կողմ հրամեցէք, այս կողմ հրամեցէք: Ո՞վ կ'ուզէ լաւ խնձոր, խոշո՛ր — խոշո՛ր: Ո՞վ կ'ուզէ գինի, անոյշ գինի: Ո՞վ կ'ուզէ բողկ, կարմի՛ր — կարմի՛ր: Պա՛հ, պա՛հ, պա՛հ...:

2

— Շաքար ունի՞ս, խանութպա՛ն ախպար, — հարցուց մամիկը:

— Ինչքան որ ուզէք, — պատասխանեց փոքրիկ խանութպանը:

— Լա՛ւ, հինգ մեթր շաքար տուր ինծի:

Փոքրիկ խանութպանին խնդալը եկաւ, բայց կրցաւ զսպել իր խնդուքը:

— Ներեցէ՛ք, տիկին, մենք շաքարը մեթրով չենք ծախեր, քիլոյով կը ծախենք, — ըսաւ քաղաքավար կերպով:

— Քիլոյո՞վ· լաւ հինգ քիլո շաքար տուր, երկու քիլո ալ հաւկիթ:

— Ներեցէ՛ք, տիկին, — ժպտեցաւ խանութպանը, — մենք հաւկիթը քիլոյով չենք ծախեր, հատով կը ծախենք:

— Հատո՞վ· ապէ՛կ, քսան հատ հաւկիթ տուր, հարիւր հատ ալ գինի:

Փոքրիկ խանութպանը այս անգամ արդէն չկրցաւ խնդուքը բռնել:

— Ներեցէ՛ք, տիկին, մենք գինին հատով չենք ծախեր, չիշով կը ծախենք:

— Հա՞, իրա՛ւ որ, — վրայ բերաւ մամիկը, — տա՛ւր ինծի երկու չիշ գինի, երեք չիշ ալ բողկ:

— Բայց, տի՛կին, ո՞վ է լսեր, որ բողկը չիշով ծախեն, — զարմացած գոչեց փոքրիկ խանութպանը:

— Բողկը կը ծախեն... բողկը... բողկը..., — կմկմաց խանութպանը:

Ինքն ալ չէր գիտեր, թէ ինչո՛վ պէտք է ծախէր բողկը:

ԱՌԱԾ.— Ուղտին հարցուցեր են.—
Ինչո՞ւ վիզդ ծուռ է:
Ըսեր է.— Ո՞ր տեղս շիտակ է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պապիկ.— *Մեծ հայրիկ:*

Բոզկ.— *Տեսակ մը բոյս, որուն արմատը կ'ուտուի:*

Մամիկ.— *Մեծ մայրիկ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Փոքրիկ երուանդը ի՞նչ կ'ուզէր բլլալ: — Ի՞նչ ըրաւ խանութ բանալու համար: — Ո՞վ էր իր առաջին յաճախորդը: — Ի՞նչ ուզեց գնել: — Մամիկը չէ՞ր գիտեր, որ շաքարը քիլոյով կը ծախեն· հապա ինչո՞ւ սխալ ըսաւ: — Դուք գիտէ՞ք, թէ ինչո՛վ կը ծախեն բողկը:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հետեւեալ բառերուն ծայրը դրէք իրենց յարմար լծորդութիւնները.— ծախ, ծամ, բարակ, սեղմ, ծեծ, գործ, նման, խօսք, յարգ, մեծ, փայլ:

47. ԻՄ ՍԱՆԻԿՍ

1

Արձանիկի պէս սիրուն մանչուկ մըն է իմ սանիկս, գուռուզ մազերով եւ փայլուն աչուկներով։ Բաֆֆի է անունը։ Դեռ հազիւ երեք տարեկան կայ, բայց այնքան անառակ է, որ տընեցիները չարունակ կը պոռան երեսին.

— Հերի՛ք տունը տակն ու վրայ ընես, երեք տարեկան եղար. ա՛լ քիչ մը խօսք հասկըցիր։

Երբեմն իր մատաղաշ թեւիկներով վիզս կը փաթթուի եւ ականջս ի վար կը փըսփսայ.

— Դուրս երթանք, շաքար առնենք, ուլիկին տանինք։

Կ'երթանք տեսնելու մեր բարեկամ ուլիկը։ Բաֆֆին իր թուղթէ պայուսակին մէջէն կ'ընտրէ ամենէն ագուռը շաքարները եւ ափին մէջ դրած կը հըրամցնէ ուլիկին։ Բայց ուլիկը կը մերժէ ուտել։

— Կարմիր շաքար տա՞մ, — կը հարցնէ կարծելով, որ ուլիկը շաքարի գոյնին չի հաւնիր։

Բայց կարմիրին տեղ դեղին մը կու տայ, իսկ ուլիկը քիթն անդամ չի մօտեցներ շաքարին։

— Ինչո՞ւ չ'ուտեր, — կը գանգատի Բաֆֆին՝ աղէկ մը չհասկնալով այս արհամարհանքին պատճառը։

2

Կ'երթանք մեր տան պարտէզը։ Մեր սեւուկ հաւը իր ճագուկներով կը պտըտի հոն, ուտելիք փնտռելով։ Բաֆֆին երեսս կը նայի հարցական ձեւով եւ կ'ըսէ.

— Հաւիկին ալ շաքար տա՞մ։

— Չէ՛, — կը պատասխանեմ ես, — շաքարը խոշոր է, հաւիկները չեն կրնար ուտել։

— Է՛, կոտրեմ, կոտրեմ, վերջը տամ։

Այդպէս ալ կ'ընէ։ Հաւն ու ճագուկները անմիջապէս կը վազեն ու չուտ մը կ'ուտեն կը լմնցնեն շաքարի մանր կտորները։ Փոքրիկ Բաֆֆին, փոխն ի փոխ դիտելէ ետք մայր հաւրն ու վառեակները, կը հարցնէ դարձեալ.

— Ինչո՞ւ ան մէկ հաւիկը մեծ է։

— Անիկա մաման է, — կը պատասխանեմ ես։

Եւ որովհետեւ յոգնակիի կազմութեան կանոնին անտեղեակ է դեռ, բազմութեան գաղափարը արտայայտելու համար մէկիկ — մէկիկ վառեակները ցոյց կու տայ եւ կը հարցընէ.

— Ինչո՞ւ ան մէկ հաւիկը պզտիկ է, ան մէկ հաւիկն ալ, ան մէկ հաւիկն ալ։

— Անոնք ալ պէպէքներն են, — կը բացատրեմ ես։

— Է՛, ինչո՞ւ գոգնոց չունին։

Զեմ կրնար սանիկիս բոլոր հարցումներուն պատասխան դտնել։ Եւ ստիպուած կը լռեմ։

ԱՌԱԾ։— Շատ մի՛ ատեր, սիրել կայ,
Շատ մի՛ սիրեր, ատել կայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հերիք։— *Բաւական, հերիք է՝ կը բաւէ։*
Մատղաշ։— *Փափուկ՝ կակուղ, պզտիկ։*
Արհամարհանք։— *Բանի տեղ չդնել։*
Հարցական։— *Բան մը հարցնելու ձեւով։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ի՞նչ տեսակ մանչուկ մըն էր Բաֆֆին։ — Տնեցիները ի՞նչ կ'ըսէին իրեն։ — Ուլիկը ինչո՞ւ չէր ուտեր շաքարը։ — Ի՞նչ բան կը սիրեն ուլիկները։ — Ուրիշ որո՞ւ կ'ուզէր շաքար տալ Բաֆֆին։ — Բաֆֆի անունով հայ գրագէտ մը կը ճանչնա՞ք։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Գտէք հետեւեալ բայերուն արմատները։— արհամարհել, հարցնել, աշխատիլ, ուսանիլ, կրթել, սիրել, անուանել, աղմկել, հանդարտիլ։

48. ՏՂԱՆ ՈՒ ԹՌՉՆԻԿԸ

— Սիրո՛ւն թռչնիկ, ո՞ւր կ'երթաս դուն,
Այսպէս ձրգած բոյն, տեղ ու տուն.
Կեցի՛ր իմ մօտ, երգէ՛ երգեր,
Ապրէ՛ այստեղ ամբողջ ձրմեռ։

— Ձեր աշխարհն է աշուն, անձրեւ,
Ծառ ու նիւղեր չունին տերեւ.
Ցրկան արեւ, տաքուկ օրեր,
Ի՞նչպէս երգեմ զուարթ երգեր։

Սիրո՛ւն տղայ, ուրա՛խ տղայ,
Երբ որ նորէն գարունը գայ,
Ես չեմ մոռնար իմ տունս ու բոյն,
Կու գամ, կ'երգեմ հոս օրն ի բուն։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԶ։— Մարմինը՝ միսէ,
Հագուստը՝ ասեղէ։
Ի՞նչ է։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զուարթ։— *Ուրախ։*
Օրն ի բուն։— *Ամբողջ օրը։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ո՞վ է թռչնիկին հետ խօսողը։ — Ի՞նչ կը խնդրէ անկէ։ — Թռչնիկը ի՞նչ պատասխան կու տայ։ — Ի՞նչ տեսակ կլիմայ ունեցող երկիրներու մէջ կ'ապրին թռչունները։ — Դուք ո՞ր թռչունը կը սիրէք ամենէն աւելի։

49. ՕԴԸ, ՀՈՎԸ...

1

– Գիտէ՞ք, տղաք, բան մը կայ ,որ մեզի հետ է տան մէջ, տունէն դուրս, դաշտին վրայ, լերան գլուխը, ամէն տեղ, ո՛ւր որ երթանք: Ըսէ՛ք նայիմ, ի՞նչ է այս անտեսանելի ու անչօշափելի բանը, – հարցուց ուսուցիչը աշակերտներուն:

Տղաքը սկսան մտածել, բայց չկրցան պատասխան մը տալ:

– Ա՛ռ այս տետրակը, Աւետի՛ս, եւ արագ – արագ շարժէ երեսիդ առջեւ, – ըսաւ ուսուցիչը:

Աւետիս առաւ տետրակը եւ սկսաւ շարժել արագ – արագ:

– Ի՞նչ կը զգաս երեսիդ վրայ, – կրկին հարցուց ուսուցիչը:

– Հո՛վ, – պատասխանեց Աւետիս:

– Հիմա դուն բակ, Եղուա՛րդ, երբ ուժով վազես փողոցին մէջ, ի՞նչ կը զգաս դէմքիդ վրայ:

– Հո՛վ, – պատասխանեց Եղուարդ:

– Լա՛ւ, ի՞նչ բան է հովը:

Տղաքը նորէն լռեցին, որովհետեւ չէին գիտեր, թէ ի՛նչ է հովը:

2

– Հիմա մտիկ ըրէք, որ ըսեմ ձեզի, թէ ի՛նչ է հովը:

«Հովը պարզապէս օդ է, իսկ օդը թեթեւ ու թափանցիկ նիւթ մըն է, որ չի տեսնուիր: Ո՛չ համ ունի, ո՛չ ձեւ: Երկրի վրայ չկայ տեղ մը, ուր օդ գոյութիւն չունենայ:

«Մենք օդ կը շնչենք քիթով: Ձեռքերնիդ մօտեցուցէք ձեր բերանին եւ հո՛ ըրէք. ձեր ներս քաշած օդն է, որ դուրս կու տաք: Եթէ օդ չըլլայ, ո՛չ մարդ կրնայ ապրիլ երկրի վրայ, ո՛չ կենդանի, ո՛չ բոյս:

– Ցեսո՞յ, յեսո՞յ..., – կը հարցնէին տղաքը հետաքրքրութեամբ:

– Պէտք է գիտնաք, որ մաքուր օ՛դը միայն օգտակար է, – շարունակեց ուսուցիչը: – Փակ տեղերու մէջ, ուր թարմ օդ չի մտներ, անկարելի է ապրիլ: Վնասակար է երկար ատեն մնալ տեղ մը, որ լեցուած է մեր արտաշնչած օդով: Այսպէս է, օրինակ, դասարաններուն օդը, մեր ննջասենեակներուն օդը, շարժանկարի սրահներուն օդը: Այս պատճառով ալ պէտք է շուտ – շուտ բանալ լուսամուտները, որպէսզի թարմ ու մաքուր օդ մտնէ ներս:

«Ով որ անմաքուր ու ապականած օդի մէջ մնայ երկար ատեն, անպատճառ կը հիւանդանայ: Մաքուր օդի մէջ ապրողները առողջ կ՚ըլլան: Հացի ու ջուրի չափ անհրաժեշտ է մաքուր օդը մարդոց համար»:

Տղաքը ուրախ էին, որ նոր բաներ սորվեցան այդ օրը:

ԱՌԱԾ.– Շատախօս մարդը անխելք կ՚ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թափանցիկ.— *Թափ եւ անցնիլ բառերէն կազմուած բարդ բառ. մէկ կողմէն միւսը անցնիլ։ Օրինակ՝ ապակին թափանցիկ է, մէկ կողմէն միւսը կը տեսնուի։*

Փակ.— *Գոց, զոցուած։*

Արտաշնչած.— *Դուրս տուած (օդ)։ Ներշնչել՝ ներս քաշել (օդը), արտաշնչել՝ դուրս տալ (օդը)։*

Լուսամուտ.— *Լոյս մտնելու տեղ, պատուհան։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հիմա կրնա՞ք ըսել, թէ ի՞նչ է օդը, ի՞նչ է հովը։ — Ձմեռ ատեն ձեր արտաշնչած օդը կը տեսնէ՞ք. ամա՞ռ ատեն։ — Ո՞ւր աւելի մաքուր է օդը։ — Ի՞նչ պէտք է ընել մաքուր օդ ունենալու համար։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բայերը կը խոնարհուին, այսինքն անոնց վերջաւորութիւնը զանազան փոփոխութիւններու կ'ենթարկուի. օրինակ՝ կը գրէի, եթէ գրեմ, թող գրէ, գրեցի, պիտի գրեմ, գրած եմ։



50. ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

1

Մտաբերելու ատեն իմ մանկութիւնս, եռ կը լեցուիմ անբացատրելի յուզումով։ Աչքիս առջեւ կը պատկերանան ծնողքս, մեր գիւղը, ջրառատ առուն, զայն եզերող ուռիները, կապտորակ երկինքը, որուն աստղերը կը սիրէի համրել գիշեր ատեն։

Զեմ մոռցած գիւղին շունները, հինաւուրց եկեղեցին, դպրոցն ու դպրոցակից ընկերներս։

Կը յիշեմ Սուրիկին ծուռ քիթը, Բիւզանդին չէկ մազերը եւ կապոյտ տարատը, որ շարունակ վար կ'իյնար։ Կը յիշեմ Կարոյին խոշոր սեւ աչքերը եւ Վաչէին ծաղկաւեր դէմքը, որ չափահաս մարդու խրոխտ կերպարանք մը կու տար իրեն։

Այս չորսը իմ սիրած ընկերներս էին. միշտ միասին կը խաղայինք, միասին կը մտնէինք այգիները խաղող գողնալու, ծեծ կ'ուտէինք

միասին եւ կ'երդէինք կամ կու լայինք դարձեալ միասին։

2

Կիրակի եւ տօն օրերուն, դպրոցէն եկեղեցի կը տանէին մեզ աղօթելու։ Ես մինչեւ հիմա ալ կը յիշեմ իմ շատ սովորական աղօթքս։

«Աստուա՛ծ պապ, — կ'ըսէի աչքերս կէս մը գոցելով, — հայրիկիս ու մայրիկիս երկար կեանք տուր։ Հայրիկիս դրամ տուր, որ շաքար գնէ ինծի։ Այն հատ գաւազանը, որով մայրիկը կը ծեծէ դիս ատեն — ատեն, դրան ետեւն է. ա՛ռ, օճախը նետէ ու վառէ։ Կլորիկենց Թումիկը վէգս ու լուցկիի տուփս գողցաւ. անկէ ա՛ռ եւ ինծի տուր. կամ, եթէ դուն չես առներ, ինծի ուժ տուր, որ ես առնեմ. ամէն»։

3

Անգամ մը ալ եկեղեցին կնունքի ներկայ գտնուեցանք։ Կարոն ու Վաչէն էին հետս, իսկ Բիւզանդին փորը կը ցաւէր շատ սեխ կերած ըլլալուն համար։

Քահանան պզտիկ տղուն ձեռքերէն ու ոտքերէն բռնած ջուրը կոխեց, ապա հարցուց ճերմակ ժամաչափիկ հագած կնքահօր.

— Երախան ի՞նչ կը խնդրէ։

— Հաւատք, յոյս եւ սէր, — պատասխանեց կնքահայրը։

— Հաւատքը Աստուծոյ հաւատալն է, սէրը չամիչն ու շաքարը սիրելն է, — թարգմանեց Կարոն։

— Հապա յո՞յսը...

Մեր մանուկ ուղեղներուն միացեալ ուժերով չկրցանք բացատրութիւն մը գտնել։

Ո՞վ ունէր այնքան իմաստութիւն քահանային ամէն ըսածն ու կարդացածը հասկնալու։

ԱՌԱԾ.— Կծծի մարդուն ծառան գող կ'ելլայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զրառատ.— Առատ ջուր ունեցող։

Հինաւուրց.— Հին օրերէ մնացած։

Շէկ.— Դեղինի զարնող կարմիր։

Ծաղկաւեր.— Ծաղիկէն աւրուած («ծաղիկ»՝ հիւանդութեան մը անունն է)։

Խրոխտ.— Հպարտ, անվախ, յանդուգն։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Փոքրիկ տղան ինչո՞ւ կը յուզուէր իր մանկութիւնը մտաբերած ատեն։ — Ի՞նչ եւ որո՞նք կը յիշէր ամենէն աւելի։ — Աստուծմէ ի՞նչ կը խնդրէր։ — Եկեղեցիին մէջ ի՞նչ տեղի ունեցաւ անգամ մը։ — Կրնա՞ք բացատրել հաւատք, յոյս եւ սէր բառերուն իմաստը։

51· ՎԵՐՑՈՒՐ ԶԻՍ

Կիրակի է· խաչ հանելէն
Ներս կը մտնեմ ժամուն դրռնէն։
Գոց խորանին առջեւ՝ թաւշեայ
Վարագոյր մ'է քաշուած հիմա·
Ու քահանան ծունկի եկած
Կը պաղատի· «Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց···»։

Ճիշդ նոյն պահուն, պզտիկ մ'աղուոր
Այսպէս կ'ըսէր իր աղօթող մօր·
«Գրկէ՛, մա՛յրիկ, շատ պզտիկ եմ,
Վերցո՛ւր զիս, որ ես ալ տեսնեմ···»։

Անմեղունակ այդ մանկան պէս՝
Կը մրրմրնջէ ձայն մը ներսէս,
Մրշուշներու մէջ կորսուած·
«Շատ փոքր եմ ես, վերցո՛ւր, Ա՛ստուած,
Վերցո՛ւր զիս, որ տեսնեմ կապոյտ
Խորհուրդները բարձունքներուդ···»։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԷ·— Կը թաղուի՝ ապրելու համար։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաղատիլ·— *Խնդրել, աղաչել։*
Անմեղունակ·— *Անմեղ, մեղք չունեցող։*
Բարձունք·— *Բարձրութիւն, գագաթ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Այս ոտանաւորին հեղինակը ե՞րբ գնաց եկեղեցի։ — Ի՞նչ տեսաւ հոն։ — Քահանան ի՞նչ կը խնդրէր։ — Նոյն պահուն պզտիկ մը ի՞նչ ըսաւ մօրը։ — Իսկ ի՞նչ կ'ուզէր տեսնել ինք, այս ոտանաւորին հեղինակը։ — Նկարագրուած եկեղեցական արարողութիւնը ո՞ր օրը տեղի կ'ունենայ։

52· ԱՄԵՆԱՊԻՏԱՆԻ ԲԱՆԸ

1

Շատ դարեր առաջ Արեւելքի մէջ կ'ապրէր արդարամիտ եւ իմաստուն թագաւոր մը։ Ունէր երեք որդի։

Օր մը, կանչեց երեք որդիները եւ ըսաւ անոնց·

— Սիրելի՛ զաւակներս, կը տեսնէք որ արդէն ծերացեր եմ ու չեմ կրնար կառավարել երկիրը։ Կ'ուզեմ իմ թագաւորութիւնս յանձնել ձեզմէ անոր, որ կարենայ աշխարհի ամենապիտանի բանով լեցնել այս սահմանին չտեմարանը։

Եւ ցոյց տուաւ ընդարձակ չտեմարան մը, որ տարիներէ ի վեր պարապ կը մնար պալատին ներքնայարկը։

Երեք եղբայրները համբուրեցին իրենց հօր ձեռքը եւ ճամբայ ինկան առանձին-առանձին, գտնելու համար աշխարհի ամենապիտանի բանը։

2

Եօթն անդամ եօթանասուն օր անոնք չըրջեցան երկրէ երկիր, ապա վերադարձան հայրենիք, իրենց հօրը մօտ:

— Բարով էք եկեր, իմ անդի՛ն զաւակներս, — ուրախացաւ հայրը.— դաս՞ք աշխարհի ամենապիտանի բանը:

Առաջ անցաւ անդրանիկ որդին:

— Հացն է աշխարհի ամենապիտանի բանը, հա՛յր, — ըսաւ ան, — եւ ես հացով կը լեցնեմ այս ահագին չտեմարանը: Շատ թափառեցայ, շատ աշխարհներ տեսայ, բայց հացէն աւելի անհրաժեշտ բան չգտայ:

Ապա մօտեցաւ միջնեկ որդին:

— Հողով կը լեցնեմ այս աճիւղին չտեմարանը, հա՛յր, — ըսաւ ան, — առանց հողի հաց չկայ: Շատ թափառեցայ, շատ աշխարհներ տեսայ, բայց հողէն աւելի անհրաժեշտ բան չգտայ:

Կարգը եկաւ կրտսեր որդիին: Հասատաւ քայլերով մօտեցաւ ան, գրպանէն հանեց փոքրիկ մոմ մը, վառեց եւ ըսաւ.

— Լոյսով կը լեցնեմ այս ահագին չտեմարանը, իմաստո՛ւն հայր: Շատ թափառեցայ, շատ աշխարհներ տեսայ, բայց լոյսէն աւելի անհրաժեշտ բան չգտայ: Առանց լոյսի ո՛չ հաց կայ, ո՛չ կեանք: Լոյսն է ամենապիտանի բանը:

— Ապրի՛ս, — գոչեց ուրախացած հայրը, — գո՛ւն մի՛այն արժանի ես իմ դահիս, քանի որ լոյսով պիտի լեցնես քու երկիրդ ու թագաւորութիւնդ:

Եւ հայրը սիրով ողջագուրեց իր որդին, անոր ուսերուն վրայ նետեց արքայական ծիրանին եւ նստեցուց իր գահին վրայ:

ԱՌԱԾ.— Ծանր կեցիր, որ լիտր գաս:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամենապիտանի.— *Ամենէն աւելի պէտք եղած, պէտքցու:*

Շտեմարան.— *Ամբար, ուր ընդհանրապէս ցորեն կամ ալիւր կը պահեն:*

Ներքնայարկ.— *Ներքեւի, վարի յարկը:*

Անդրանիկ.— *Առջինեկ:*

Կրտսեր.— *Փոքր:*

Արքայական.— *Թագաւորական:*

Ծիրանի.— *Թագաւորական զգեստ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Թագաւորը ի՞նչ ըսաւ իր որդիներուն: — Անդրանիկ որդին ինչո՞վ կ'ուզէր լեցնել շտեմարանը, միջնե՞կը, կրտսե՞րը: — Ի՞նչն է եղեր ամենապիտանի բանը: — Ի՞նչ տեսակ մէկն էր ուրեմն թագաւորը: — Ուրիշ ի՞նչ պիտանի բաներ գիտէք դուք:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բայը երեք ժամանակ ունի, — ներկայ, անցեալ եւ ապառնի: Ներկայ ժամանակը ցոյց կու տայ ներկայիսի մէջ ըլլալիք գործողութիւնը. օրինակ՝ կը գրեմ, կը գրես, կը գրէ:

53. ԻՆՔՆԱՇԱՐԺՈՎ ՊՏՈՅՏ

1

Իրիկուն մը սանիկս ու ես տուն կը վերադառնայինք ծովեզերքէն, ուր գացեր էինք քիչ մը գով օդ շնչելու: Հանրակառքի կայարանը հասնելու համար ընարեցի պողոտայ մը, որ եղերուած էր միայարկ զեղեցիկ տուներու շարքով:

Իրարանցիւր տան դրան առջեւ ինքնաշարժ մը կեցած էր: Սանիկս ուշի ուշով աչքէ անցուց այդ զանազան ինքնաշարժները, յետոյ վերջապէս հասնելու անոնցմէ մէկուն: Անանց ժամանակ կորսնցնելու, փարձեց բանալ զանակը եւ ներս մտնել, իբր թէ իրենը եղած բլլար ան:

Չինք հեռացնելու բոլոր խնդրանքներս անօգուտ անցան:

Ինքնաշարժին տէրը ապայ մըն էր եւ պարբշդամբ կեցած մեզ կը դիտէր իր տիկնոջ հետ:

— Ա՛լ բաւական է, — ասաւեցի ես եւ քիչ մը բիրտ շարժումով ուզեցի առնել տանիլ իմ անհանգարտ սանիկս:

2

Բայց ան սկսաւ լալ, ոտքերը դետին զարնել, մինչեւ իսկ ձեռքս բերնին տանելով ուժով մը խածաւ:

— Ի՞նչ կ'ուզէ այդ փոքրիկը, — հարցուց այն տուն ապան:

— Պարո՛ն ապայ, — պատասխանեցի ես, — իմ սանիկս ձեր ինքնաշարժին հաւնեցաւ:

— Ցեռո՞յ:

— Բնականաբար կ'ուզէ մէջը նստիլ եւ պարտիլ:

— Ես շատ իրաւացի կը գտնեմ իր պահանջը, — ըսաւ տիկինը:



Ապան կանչեց ինքնաշարժին վարիչը եւ յանձնարար է ց մինչեւ տուն տանիլ մեզ:

Սանիկս հիմա ուրախ է այլեւս: Կառքին բազմոցին վրայ կը ցատկռտէ, ծափիկ կ'ընէ: Իսկ ես, ցոյց տալով իր ակռաներուն հետքը ձեռքիս վրայ, կը յարեմ.

— Նայէ՛, խա՛յտառակ, ի՞նչ ընիր թաթիկս:

Կը նայի ձեռքիս եւ աչուկները արցունքով կը լեցուին: Ցաւոնի է, որ ներողութիւն կը խնդրէ ըրածին համար:

Դո՛ւք ըսէք, կարելի՞ է չներել սանկ մանչուկի մը:

ԱՌԱԾ — Գէշ կ'ընես՝ բեզի կ'ընես,
Աղէկ կ'ընես՝ բեզի կ'ընես:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պողոտայ — Լայն ու մեծ փողոց:
Միայարկ — Մէկ յարկով:

Սաստել։— *Նեղանալ, յանդիմանել։*
Բիրտ։— *Կոշտ, կոպիտ։*
Հետք։— *Նշան։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Իրիկուն մը տուն դառնալու ատեն ի՞նչ տեսան սանիկն ու կնքահայրը։ — Ի՞նչ ըրաւ սանիկը։ — Ի՞նչ ըսին ապան ու տիկինը։ — Վերջը ի՞նչ եղաւ։ — Ինչո՞ւ անպատնառ ինքնաշարժ նստիլ կ'ուզէր սանիկը։ — Ի՞նչ տեսակ տղայ մըն էր ան։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։— Բայերուն անցեալ ժամանակը ցոյց կու տայ անցեալին մէջ կատարուած գործողութիւն մը։ օրինակ՝ գրեցի, գրեցիր, գրեց։

54. ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԱՐԾԻՒԸ

Մանուկը, ուղղած՝ աչքերն օդն ի վեր,
Խիզախ արծիւին նապէս կը խօսէր։
«Ո՞ւր կ'երթաս, ա՛րծիւ, դուն այդքան հեռու,
Կը թռչիս միշտ վեր հովէն ու ծովէն,
Լուռ ու ամայի ծայրը սարերու։
Ի՞նչ գանձ, ի՞նչ վայելք ըզքեզ կը թովեն»։
Եւ արծիւն ըսաւ։ «Ո՛չ վայելք, ո՛չ գանձ
Զեն ազդեր երբեք իմ սըրտիս նախանձ։
Իմ ծրնած օրէս ըսաւ ինձ Աստուած։—
Աշխարհի մարդոց չըլլաս դուն գերի։
Եւ ես աշխարհը մարդոց եմ թռղած,
Լոկ ազատութիւնն եմ պահած ինձի...»։

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԸ.— Ան ի՞նչ է, որ ջուրէն կ'անցնի,
բայց ինք անշարժ կը մնայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խիզախ։— *Համարձակ, անվախ։*
Ամայի։— *Անմարդաբնակ, հոն՝ ուր մարդ չի բնակիր։*
Թովել։— *Հրապուրել, հմայել, գերել։*
Լոկ։— *Միայն։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Մանուկը ի՞նչ ըսաւ արծիւին։ — Ի՞նչ էր, որ կը գրգռացնէր զինք։ — Արծիւը ի՞նչ պատասխան տուաւ։ — Ի՞նչ ըսած էր Աստուած իրեն։ — Միայն արծիւնե՞ր կը սիրեն ազատութիւնը։

55. ԱԾՈՒԽ, ՀԱՆՐԱԾՈՒԽ

1

— Քեռի՛ Օհան, — հարցուց Հայկ իր մօրեղբօր, որ արհեստով ածխագործ էր, — դուք ի՞նչպէս կը չինէք ածուխը։

Քեռի Օհան խնդաց։

— Է՛հ, աստ ալ չգիտնալիք բա՞ն է։ հապա դպրոցին մէջ ի՞նչ կը սորվեցնեն ձեզի։

— Դպրոցին մէջ մենք ածուխ պատրաստելու մասին դաս չենք առներ, — վրայ բերաւ Հայկ։

— Քանի որ այդպէս է, այդ դասն ալ ե՛ս տամ քեզի։ լսէ որ հասկնաս, — ըսաւ քեռի Օհան եւ աւելցուց։— Նախ անտառէն փայտ կը կտրենք, յետոյ գետնին մէջ խոշոր փոս մը կը

բանանք։ Այս վիսին մէջ կը շարենք կարուած փայտերը, կրակ կու տանք եւ...

— Կրա՞կ կու տաք, — ընդմիջեց Հայկ զարմանքով։

— Այո՛ եւ անմիջապէս կը ծածկենք հողով։ Փայտերը կը վառին, կը վառին եւ կը դառնան ածուխ։

— Բայց ինչո՞ւ հողով կը ծածկէք վառուած փայտերը, քեռի՛։

— Եթէ չծածկենք, փայտերը վառելով վառելով մոխիր կը դառնան։

2

Հայկ շատ հետաքրքիր ապայ էր։ Քիչ մը մտմտաց եւ հարցուց նորէն.

— Ա՛լ ուրիշ տեսակ ածուխ չկա՞յ։

— Կա՛յ, ի՛նչպէս չէ։ Հանքածուխը կայ։ բայց հանքածուխը մարդոց ձեռքով չի շինուիր։ անիկա հանք է եւ կը գտնուի հողին տակ։ Բանուորները կը փորեն դեռինը, խորունկ հորեր կը բանան եւ դուրս կը հանեն հանքածուխը։

— Յետոյ ի՞նչ կ'ընեն, — հարցուց Հայկ։

— Մասնաւոր գործարաններու մէջ կը մաքրեն, կը գտնեն եւ չուկայ տանելով կը ծախեն։ Մեծ մեքենաները, շոգեկառքը, շոգենաւը հանքածուխի կրակով կը բանին։ Շատ անդամ վառարաններու մէջ ալ հանքածուխ կը վառեն։

— Հայաստանի մէջ հապա ինչո՞ւ հանքածուխ չկայ։

— Ի՞նչպէս չկայ, կա՛յ. միայն թէ հողին տակն է եւ հանող չկայ։ Օր մը դուն կ'երթաս կը հանես, — լրացուց իր խօսքը քեռի Օհան։

Երկուքը մէկ սկսան խնդալ։

Այդ օրէն Հայկ միտքը դրաւ Հայաստան երթալ եւ հանքածուխ հանել. միայն թէ շուտ մեծնար։

ԱՌԱՆ.— Օտար վարդեր հոտ չունին,
Օտար ազգեր լոյս չունին։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԵՌԻ.— *Մօրեղբայր։*

ԶՏԵԼ.— *Մաքրել, ածուխը հողէն զատել։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ հարցուց Հայկ իր մօրեղբօր։ — Ի՞նչպէս կը պատրաստեն եղեր՝ ածուխը։ — Ինչո՞ւ հողով կը ծածկեն վառած փայտը։ — Հանքածուխը ի՞նչպէս կը հանեն հողին տակէն։ — Հայաստանի մէջ ուրիշ ի՞նչ հանքեր կան։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բայերուն ապառնի եղանակը ցոյց կու տայ գալիք, դեռ կատարուելիք գործողութիւնը. օրինակ՝ պիտի գրեմ, պիտի գրես, պիտի գրէ։

56. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

1

Փոքրիկ Արուսեակը ուշիմ եւ ուսումնասէր աղջիկ մըն էր, միշտ հարցումներ կ'ընէր եւ կ'ուզէր նոր – նոր բաներ սորվիլ: Օր մը դնաց իր ընկերուհիին՝ Զապէլի մօտ եւ հարցուց անոր.

– Դուն գիտե՞ս, Զա՛պէլ, ո՞վ աւելի երկար կ'ապրի, մա՞րդը թէ կենդանին:

Զապէլ չկրցաւ պատասխան մը տալ, որովհետեւ ինքն ալ չէր գիտեր: Որոշեցին ուսուցչին դիմել:

Այն օրը գիտութեան դաս ունէին. դասը ըսկըսելէ առաջ, Արուսեակ հրաման խնդրեց ուսուցչէն, թէ կրնա՞ր բան մը հարցընել:

– Գիտութիա՞ն վերաբերեալ բան մըն է, – ուզեց հասկնալ ուսուցիչը:

– Այո՛, պարոն, – բաւ Արուսեակ եւ աւելցուց.– ո՞վ աւելի երկար կ'ապրի, մա՞րդը թէ կենդանին:

– Ա՛հ, ես ալ ճիշդ այդ մասին պիտի խօսէի այսօր: Լսեցէք ուրեմն, – վրայ բերաւ ուսուցիչը եւ պատրաստուեցաւ այդ օրուան դասը բացատրել:

Աշակերտները լուռ ու մունջ մտիկ ըրին:

2

«Զաւա՛կներս, – ըսկըսաւ ուսուցիչը, – գիտութիւնը կրցած է աւելի կամ պակաս չափով ճշդել կենդանիներու կեանքի տեւողութիւնը:

«Այսօր այլեւս հաստատուած է, որ կենդանիները աւելի երկար կ'ապրին, քան մարդիկը:

«Սակայն բոլոր կենդանիները երկարակեաց չեն: Այսպէս՝ ճաղարն ու խոզը 7 տարիէն աւելի չեն ապրիր, սկիւռն ու նապաստակը

կ՝ապրին 8 տարի, կատուն՝ 9–10 տարի, շունը՝ 10 – 12 տարի, եզը՝ 16 – 18, ձին եւ էշը՝ 25 – 30, առիւծը՝ 30 – 40, ուղտը՝ 40, փիղը՝ մինչեւ 200 տարի:

«Ձուկերը եւ թռչունները աւելի երկարակեաց են: Գոյութիւն ունեցած են 103 տարի ապրող արծիւներ, 108 տարի ապրող ագռաւներ եւ 120 տարի ապրող թութակներ: Սագը կրնայ դար մը ապրիլ, կարապը՝ 200 – 250 տարի:

«Օձաձուկերը մինչեւ 60 տարի կ՝ապրին: Գերմանիոյ մէջ բռնուած է կոնկաձուկ մը, որուն վզին վրայ անցուած պղինձէ մանեակը ցոյց կու տար, որ 261 տարի առաջ լիճը ձրգուած էր: Կը կարծուի, թէ հիւսիսային ծովերու կէտ ձուկերը մինչեւ հազար տարի կրնան ապրիլ:

«Պէտք կա՞յ աւելցնելու, թէ մարդկային կեանքի սահմանը 90 – 100 տարիէն աւելի չէ: Բացառութիւն են ասկէ աւելի ապրող մարդիկը»:

Դասը վերջացաւ: Արուսեակ զոհ էր եւ մեղմիկ կը ժպտէր:

ԱՌԱՆ.— Ծեր եզն է, որ շիտակ ակօս կը բանայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկարակեաց.— *Երկար ապրող:*

Դար.— *Հարիւր տարի:*

Կոնկաձուկ.— *Անոյշ ջուրի մէջ ապրող ձուկ մը:*

Մանեակ.— *Մետաղէ կամ թանկագին քարէ շղթայ, որ օղակի ձեւով կը կապուի վզին շուրջ:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ աղջիկ էր Արուսեակ: – Ի՞նչ հարցուց ուսուցչին· – Ուսուցիչը ի՞նչ պատասխանեց: – Ո՞վ է ուրեմն աւելի երկարակեաց, մա՞րդը թէ կենդանին: – Կը յիշէ՞ք ուրիշ կենդանիներ, որոնք նոյնպէս երկարակեաց են: – Քանի՞ տարի կ՝ապրի կապիկը:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ցոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած բայերուն ժամանակները եւ ներկան անցեալի, անցեալը ապառնիի վերածեցէք:

57· ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ամէն անգամ երբ կը նայիմ
Լուռ խաղերուն իմ զաւկին,
Թէ ի՜նչ սիրով փարած է ան
Քարին, ջուրին ու հողին.

Լո՜ւռ կը խօսիմ իմ սրտիս հետ·
– Է՜յ իմաստուն մանկութիւն,
Ունայն բան է խելքը մարդուս,
Եւ գործերը՝ մեծանուն:

Դատարկ բան է քաջի համբաւ,
Գանձ ու պատիւ հանապազ·
Դո՜ւն հս ոսկին, ո՜վ մանկութիւն,
Դո՜ւն՝ իրական լոյս – երազ...

ՀԱՆԵԼՈՒԿ ԺԹ.— Աչուկնե՞ր, աչուկնե՞ր,
Ոսկի, արծաթ աչուկներ,
Ցերեկը քուն,
Գիշերն արթուն:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիլ.— *Փաթթուիլ, զուրգուրալ (բանի մը վրայ)*:
Ունայն.— *Դատարկ, պարապ*:
Հանապազ.— *Շաբունակ, ամէն անգամ*:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Այս ոտանաւորին հեղինակը ի՞նչ կ'ըսէր ինք իրեն, երբ զանկին խաղերը կը դիտէր: — Ի՞նչ է կարծիքը մարդոց խելքին ու գործերուն մասին: — Ամենէն աւելի ի՞նչն էր բանկացին իրեն համար: — Նոյն ձեւով կը մտածե՞ն փոքրիկ տղաքը:

58. ՈՍԿԻ ՏԱՊԱՐԸ

1

Փայտահատ մը, Ծովուն եղերքը՝ բարձր ժայռի մը վրայ կեցած, փայտ կը կոտրէր: Ցանկարծ կացինը ձեռքէն ինկաւ եւ ջուրերուն մէջ կորսուեցաւ:

Խեղճ մարդը սկսաւ լալ ու ողբալ, որովհետեւ եթէ կացին չունենար, ի՞նչպէս փայտ պիտի կոտրէր, և եթէ փայտ չկոտրէր, ուրկէ՞ դրամ պիտի գտնէր կինը եւ զաւակները կերակրելու համար:

Իր ողբ ու կոծը լսելով՝ Ծովուն մէջէն

պարիկ մը դուրս ելաւ, մօտեցաւ իրեն եւ հարցուց.

— Ինչո՞ւ կու լաս, ըսէ՛ ինծի. ես կրնամ ցաւիդ դարման մը գտնել:

— Կացինս Ծովը ինկաւ, — ըսաւ մարդը հեկեկալով, — եւ դրամ չունիմ, որ ուրիշ մը գնեմ:

Պարիկը ալիքներուն մէջ անհետեւոյթ եղաւ պահ մը, ապա կրկին դուրս ելլելով ոսկի տապար մը տուաւ փայտահատին:

— Ասիկա իմս չէ, — ըսաւ փայտահատը, — իմս պարզ երկաթ էր:

Այն ատեն պարիկը տուաւ անոր իր երկաթէ տապարը եւ կրկին անհետ եղաւ Ծովուն մէջ:

2

Գեղջուկը աւելի եռանդով աշխատեցաւ այն օրը եւ երբ իրիկունը տուն դարձաւ, ամէն ինչ պատմեց եղբօրը, որ իրեն պէս փայտահատ էր:

— Անմի՛տ, — բարկացաւ եղբայրը, — ինչո՞ւ չառիր ոսկի տապարը. ա՛լ աշխատելու պէտք չէիր ունենար:

Եւ հետեւեալ առաւօտ կանուխ Ծովեղերքը գնաց, տապարը նետեց ալիքներուն մէջ եւ սկսաւ լալ ու ողբալ:

Իր լացը լսելով՝ բարի պարիկը դուրս ելաւ Ծովէն եւ հարցուց.

— Ինչո՞ւ կու լաս, ըսէ՛ ինծի. ես կրնամ ցաւիդ դարման մը գտնել:

Փայտահատը յայտնեց, թէ տապարը ձեռքէն ծովն էր ինկեր:

Պարիկը ալիքներուն մէջ աներեւոյթ եղաւ, ապա կրկին դուրս ելլելով ոսկի տապար մը տուաւ փայտահատին:

Գեղջուկը ուրախութեամբ առաւ ոսկի տապարը և հեռացաւ ծովեզերքէն: Բայց ճամբան տապարը ձեռքին մէջ հող դարձաւ:

Այսպէս պատժուեցաւ խարդախ ու ագահ փայտահատը:

Հետեւեալ օրը, իր պարկեշտ եղբայրը, կացինով փայտ կոտրած առնն, պարկ մը ոսկի գտաւ ծառին տակ:

ԱՌԱԾ.— Ծոյլը մուրացկանին եղբայրն է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տապար.— *Կացին:*

Փայտահատ.— *Փայտ կոտրող:*

Պարիկ.— *Բարի ոգի:*

Գեղջուկ.— *Գիւղացի:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ պատահեցաւ փայտահատին: — Ո՞վ դուրս ելաւ ծովուն մէջէն: — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ փայտահատին եւ պարիկին միջեւ: — Յետոյ ի՞նչ եղաւ: — Ի՞նչ դաս կրնանք հանել այս պատմութենէն:

59. ԵՂՆԻԿԸ

1

Անտառին մէջ սիրուն եղնիկ մը կար: Օրին մէկը ան ուզեց աշխարհ տեսնել: Թողուց իր ծառաստանը ու ելաւ դնաց հեռո՛ւ, հեռո՛ւ:

Անցաւ ճահիճ ու մացառ, բացատներ ու ծառ, եւ երբ անտառին եղերքը հասաւ, կարծեց թէ աշխարհը կը վերջանար այնտեղ:

Կանգ առաւ հոն, ակնարկը ուղղեց բաց դաշտերուն եւ չէր գիտեր, թէ ի՛նչ պէտք էր ընէր հիմա:

Յանկարծ նշմարեց, իրմէ քիչ հեռու, խոտերուն մէջ կծկուած նապաստակ մը:

— Ըսէ՛ ինծի, քո՛յրիկ, — հարցուց եղնիկը նապաստակին, — այստե՞ղ կը վերջանայ աշխարհը:

Նապաստակը նախ չհասկցաւ, ապա կուշտ ու կուռ խնդաց, աչքերը լայն — լայն բացաւ ու գոչեց.

— Ի՞նչպէս, աշխարհը կը վերջանայ այստե՞ղ... բայց ո՛չ, ճիշդ այստեղ է, որ կը սկսի, սիրունի՛կս:

— Ուրեմն երթա՞մ։
— Ինչո՞ւ չէ· չատերը գացին։

2

Եղնիկը աշխարհ կ'ուզէր տեսնել։
Ու գնաց։
Բայց հաղիւ քանի մը քայլ առած էր, երբ — պո՛ւմ··· բան մը թնդաց ետեւէն· գնդակ մը սուլեց եւ եղնիկը գետին փռուեցաւ արիւնթաթախ։
Ահա այսպէս էր, որ եղնիկը աշխարհ մըտաւ։

ԱՌԱԾ·— Վիշտ ունեցողը աշուղ կը կտրի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծառաստան·— *Փոքր անտառ։*
Մացառ·— *Թուփերով՝ պզտիկ ծառերով ծածկուած տեղ, թըփուտ։*
Բացատ·— *Բաց տեղ, միջոց։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ·— Եղնիկը ի՞նչ կ'ուզէր տեսնել։ — Որո՞ւ հանդիպեցաւ ճամբան։ — Ի՞նչ հարցուց անոր։ — Ի՞նչ պատասխան տուաւ նապաստակը։ — Վերջը ի՞նչ եղաւ։ — Ինչո՞ւ աշխարհ կ'ուզէր տեսնել եղնիկը։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ·— Ըսէք, թէ հետեւեալ բայերը ի՛նչ ժամանակ ցոյց կու տան·— հարցուց, ողբաց, պիտի խօսի, կը տեսնէ, ուզեցի, ճամբորդեց, կը փընտրուէ, պիտի գտնեմ, քննեցի, պատրաստեցի, կ'երթամ, պիտի վերադառնայ։

60· ՄԱՅՐԸ ԵՒ ԻՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Մեր թաղին մէջ, խեղճ, անտէր
Մայր մը կար շատ երջանիկ·
Ունէր երկու զաւակներ,
Մէկը մեծ, միւսն էր փոքրիկ։

Ասոնք մէկտեղ կ'ապրէին,
Փայփայելով զիրար միշտ·
Կապուած՝ սիրով կաթոգին,
Չէին նանչնար երբեք վիշտ։

Օր մը, մեծը մօրն ըսաւ·
«Գիտեմ, զիս շատ կը սիրես,
Բայց չես կրնար դուն բնաւ
Սիրել, որքան ես՝ ըզքեզ»։

Մայրը հարցուց իր տղուն·
«Ինչո՞ւ կ'ըսես ատանկ բան»։
«Երկու զաւակ ունիս դուն,
Գոչեց, ես՝ մայր մը միայն···»։

ՀԱՆԵԼՈՒԿ Ի·— Ագի ունի,
Հոգի չունի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փայփայել·— *Գգուել, գուրգուրալ։*
Կաթոգին·— *Գուրգուրոտ, կարօտալից։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ երջանիկ էր մայրը։ — Ի՞նչպէս կ'ապրէին մայրն ու երկու զաւակները։ — Օր մը ի՞նչ բան մեծ զաւակը իր մօր։ — Ճի՞շդ էր բանը՝ ինչո՞ւ։

61. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

1

Եօթը տարեկան էի, երբ մայրս զիս տարաւ ուսումնարան։

Ես միջակ կարողութիւններու տէր տղայ մըն էի. ո՛չ շատ անշնորհ էի, ո՛չ ալ շատ շնորհալի։ Աչխատասէր չէի, բայց շատ ծոյլ ալ չէի։

Սակայն շատ միամիտ էի. պատմեմ ձեզի զուարճալի բան մը իմ միամտութեանս մասին։

Օր մը, ուսուցիչս, որուն Սարգիս վարժապետ անունը կու տային, բարկացաւ ինծի, որովհետեւ դասս լաւ չէի պատրաստած։ Նախ ականջս քաշեց, յետոյ բացաւ դասագիրքս եւ, ցոյց տալով դասս, ըսաւ.

— Վաղը այստեղէն մինչեւ այստեղ ջուր կ'ընես։

— Շատ լաւ, վարպե՛տ, ջուր կ'ընեմ,— պատասխանեցի։

2

Մեր փողոցէն ոչ հեռու աղբիւր մը կար. յաջորդ օրը դատապարտեալներուն ծորակին

տակ այնքան ատեն, մինչեւ որ բոլորովին խխում դարձաւ։

Ապա բերի ուսումնարան եւ հպարտ — հպարտ ցոյց տուի վարժապետիս։

Սարգիս վարժապետ բարի մարդ էր. նախ կուչտ ու կուռ խնդաց։ Սկսան խնդալ նաեւ աշակերտները։ Ես ապուշ — ապուշ ասոր անոր երեսը կը նայէի։

Յանկարծ վարժապետս հրամայեց բանալ մէկ, ապա միւս ձեռքիս ափը եւ սկսաւ քանակով զարնել։

Լաւ էր, որ քանակին տափակ կողմով կը զարնէր եւ ոչ թէ սուր կողմով։ Ձեռքերս սաստիկ ցաւեցան։ Ես սկսայ լալ։

— Անպիտա՛ն, — ըսաւ վարժապետը, — երէկ պատուիրեցի քեզի, որ դասդ ջուր ընես, այսինքն ջուրի պէս դոց ընես, իսկ դուն տարբեր ես, գիրքդ թրջեր ու բերեր։ Ասկէ ետք ըսածս լաւ հասկցիր։

Եւ դրպանէն դուրս հանելով խոշոր գոյնզգոյն թաշկինակ մը, սրբեց աչքերուս ջուրը, այսինքն արցունքը։

Երկար ատեն աշակերտները կը յիշէին իմ միամտութիւնս եւ կը ծաղրէին զիս։

ԱՌԱԾ.— Իմաստունին հետ քար կրէ,
Ցիմարին հետ փիլաւ մի՛ ուտեր։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսումնարան.— Ուսում ստանալու տեղ, դպրոց։
Խխում դառնալ.— Թրջիլ, ջուրին տակ մնալ։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ մէկն էր փոքրիկ տղան: — Օր մը ի՞նչ ըսաւ ուսուցիչը իրեն: — Ճիշդ հասկցա՞ծ էր ուսուցչին պատուէրը: — Դասագիրքը ի՞նչ ըրաւ: — Ցետոյ ի՞նչ պատահեցաւ: — Աշակերտները ինչո՞ւ կը խնդային փոքրիկ տղուն վրայ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Շաղկապ կը կոչուին այն բառերը, որոնք մէկէ աւելի բառեր կամ խօսքեր իրարու կը միացնեն. օրինակ՝ ես *եւ* քոյրս դպրոց գացինք, *իսկ* եղբայրս տունը մնաց: *Եւ*, *իսկ* բառերը շաղկապ են: Գլխաւոր շաղկապներն են *եւ*, *ու*, *անգամ*, *կամ*, *իսկ*, *թէ*, *եթէ*, *որովհետեւ*, *վասնզի*, *զի*, *քանի որ*, *երբ*, *սակայն*, *գոնէ*, *ուրեմն*, *մինչդեռ* եւն.:

---

62. ՔԱՐԱՑԾԵՐՈՒ ԿՌԻՒԸ

1

Անգամ մը, ես ու ընկերս կը սպասէինք լոյսի բացուելուն, որպէս զի դիտենք քարայծերուն կռիւը:

Հեղհեղէ նօսրացող աստղերը ցոյց կուտային, որ լուսաբացը մօտ է: Մենք պառկեցանք կանաչ խոտերուն մէջ եւ սկսանք դիտել շրջակայքը: Ցանկարծ լեռան կողմը շրխկոց մը լսուեցաւ:

— Այս ի՞նչ է, — շշնջաց ընկերս:

Քանի մը վայրկեան ետք նոր շրխկոցներ լսեցինք. երեւացին այծերը: Անոնցմէ մէկը,



ամենէն մեծը, գլուխը բարձր, հաստատուն քայլերով յառաջացաւ եւ կեցաւ մօտիկ ժայռի կատարին:

Ցանկարծ թեթեւ աղմուկ մը լսուեցաւ եւ նոյն ծանօթ շրխկոցը: Երկու այծեր կը կռուէին, իսկ ժայռի կատարին կանգնած այծ մը, իբրեւ պահակ, կը հսկէր շրջապատին վրայ:

2

Կռուող այծերը կատաղօրէն իրարու վրայ կը յարձակէին: Հասկցանք, որ մեր ականջին հասած շրխկոցները անոնց եղջիւրներուն բախումէն առաջ եկած ձայներն էին: Կը լսուէր նաեւ կռուողներուն ծանր շնչառութիւնը:

Կռուող այծերէն մէկը ետ — ետ կը վազէր, ապա արագօրէն կու գար կը զարնուէր միւսին, որ, գլուխը բարձրացուցած, կ'ընդունէր հարուածը:

Ես մոռցեր էի, որ եկած ենք որսի:

Ընկերս ուզեց կրակել. բայց այդ պահուն

մեր մօտի ծառին ճիւղերը թեթեւ մը շարժեցան, հակող այծը անմիջապէս զգաց վտանգը եւ փախչելու նշան ըրաւ կռուողներուն:

Ակնթարթի մը մէջ բոլորը միասին անհետացան մեր աչքին առջեւէն:

Ո՞ւր գացին, ի՞նչ եղան, չկրցանք հասկընալ:

ԱՌԱԾ.— Ոսկին ցեխին մէջ ալ նետես,
իր փայլը չի կորսնցներ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քարայծ.— *Այծի տեսակ մը՝ խոշոր ու սուր եղջիւրներով:*

Նօսրացող.— *Ցանցառ դարձող, քիչցող:*

Լուսաբաց.— *Լոյսին բացուիլը, արեւուն ծագիլը:*

Շրջակայք.— *Շուրջը, բոլորտիքը:*

Շրխկոց.— *Այծերու եղջիւրներուն բախումէն առաջ եկած ձայն:*

Ակնթարթ.— *Աչքը բանալ-գոցել:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է տարբերութիւնը այծին եւ քարայծին: — Օր մը ի՞նչ տեսան երկու ընկերները: — Ինչո՞վ եւ ի՞նչպէս կը կռուին քարայծերը: — Ուրիշ կենդանիներու կռիւ տեսա՞ծ էք. կրնա՞ք նկարագրել:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ցոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած շաղկապները:

63. ԿԱՐԱՊԸ, ՁՈՒԿԸ ԵՒ ԽԵՋԱՓԱՌԸ

Օր մը կարապը, ձուկն ու խեչափառ,
Ձեմ գիտեր ուրկէ՞ ալ գըտան գիրաբ,
Բեռնաբարձ սայլ մը տանիլ կ'ուզէին.
Երեքը մէկտեղ լծուեցան կառքին
Ու զայն շարժելու համար ճիգ ըրին,
Քրտինք թափեցին:
Սակայն չէր շարժեր սայլը իր տեղէն,
Թէպէտ թեթեւ էր բեռն անոր ամէն:
Պատնա՞ռ, զի կարապը վեր
Կը քաշէր,
Խեչափառն ըսես կ'երթար ետ ու ետ,
Իսկ ձուկը փոքրիկ կը դիմէր դէպ գետ:
Թէ ո՞վ էր արդար կամ մեղաւոր, ո՞վ,
Այդ մենք չդատենք ի զուր վիճելով:
Բանն այն է, որ
Մինչեւ այսօր,
Թէ՛ սայլ, թէ բեռ,
Նոյն տեղն են դեռ:

ՀԱՆԵԼՈՒԿ ԻԱ.— Բացի իրմէ՝ իր անունը
ոչ ոք կրնայ տալ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խեչափառ.— *Մսվային կենդանի մը՝ ոզորկ պատեանով:*

Բեռնաբարձ.— *Բեռ բեռցած, բեռ տանող:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը կարապը, ձուկն ու խեչափառը ի՞նչ ըրին: — Ինչո՞ւ չէր շարժեր սայլը: — Ո՞վ էր մեղաւորը: — Ի՞նչ պէտք էր ընել սայլը առաջ տանելու համար:

64. ՎԱԳՐԸ ԵՒ ԱՂՈՒԷՍԸ

1

Անգամ մը, անտառի մը մէջ, դէմ առ դէմ եկան աղուէս մը եւ անօթի վագր մը։ Վագրը մռնչեց, իսկ աղուէսը սարսափէն դողալ սկսաւ։ Մտածեց. «Վերջս եկած է, եթէ չկարենամ խաբել այս գազանը»։

Աղուէսը այնպէս ցոյց տուաւ, որ կը դողայ ո՛չ թէ վախէն, այլ ծիծաղէն։ Եւ իրապէս սկսաւ ծիծաղիլ.— Հա՛... հա՛... հա՛...

Զարմացած վագրը, աղուէսին դառնալով, հարցուց.

— Որո՞ւ վրայ կը ծիծաղիս։

— Քո՛ւ վրայ, ա՛յ ողորմելի, — պատասխանեց աղուէսը՝ շարունակելով իր ծիծաղը։

— Ի՞նչ... ի՞մ վրաս, — մռնչեց վագրը։

— Այո՛, — ըսաւ աղուէսը.— դուն, ա՛յ թշուառ, կը կարծես, թէ հիմա պիտի ուտես զիս, իսկ ես խնդուքս զսպել չեմ կրնար. հա՛... հա՛... հա՛...։ Հիմա այլեւս քեզմէ ոչ ոք կը վախնայ, բայց ինձմէ ամէնքը կը վախնան, մինչեւ անգամ մարդը։

«Իսկ եթէ յանկարծ ճի՛շդ բլլայ բանը, — մտածեց վագրը, — այն ատեն աղուէսին դրդիչը վտանգաւոր է»։

— Կը տեսնեմ, որ չես հաւատար, — վրայ բերաւ աղուէսը, — եաւուէս եկուր ուրեմն. եթէ մարդիկ ինձմէ չվախնան ու չփախչին, այդ պարագային կրնաս ուտել զիս պոչիս հետ միասին։

Վագրը համաձայնեցաւ։

2

Աղուէսն ու վագրը քով քովի յառաջացան, մինչեւ որ հասան մեծ ճամբուն մօտ, ուրկէ քարաք դացած գիւղացիները առն կը վերադառնային։

— Եա մի՛ մնար, — կանչեց աղուէսը եւ վազեց առաջ։

Վագրը մեծ ոտքերով հետեւեցաւ աղուէսին։

Մարդիկ տեսան, որ տհարիւր վագրը կը սլանայ իրենց կողմը. սարսափահար՝ ամէն ինչ ձգեցին ու փախան։ Աղուէսը դուրս եկաւ բարձր խոտերուն մէջէն եւ ձայն տուաւ վագրին.

— Է՛, հիմա ի՞նչ կ՚ըսես. պոչիս ծայրը միայն տեսնելով՝ բոլորը մէկ փախան գացին, իսկ քու վրադ չնայեցան անդամ։

Ցիմար վագրը ամօթէն գլուխը կախեց եւ արտում — տխուր վերադարձաւ անտառ։

Այն տեսն ազուէսը իրապէ՛ս ծիծաղեցաւ։

ԱՌԱՆՑ.— Գործը աւելի կ՚արժէ,
քան խօսքը։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարսափ.— *Սաստիկ վախ. սարսափահար սաստիկ վախցած։*
Ոստիւն.— *Ճառկել, առաջ նետուիլ։*
Անարկու.— *Վախ, սարսափ ազդող։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ կենդանի է ազուէսը. վա՞գրը։ — Օր մը ո՞ւր հանդիպեցան իրարու եւ ի՛նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ իրենց միջեւ։ — Մարդիկ ինչո՞ւ ձգեցին փախան, ազուէսէ՞ն կը վախնային թէ վագրէն։ — Կրնա՞ք շարադրութիւն մը գրել ազուէսի մասին։

---

65. ԾՈՎՈՒ ՀՍԿԱՆ

1

— Ձեր կարծիքով ամենամեծ կենդանին փի՞ղն է, — հարցուց քեռի Հայկը։

— Ի հարկէ, փիղն է, — գոչեցինք մենք այս ու այն կողմէն։

— Դուք չէ՞ք լսած ուրեմն այն կենդանիի մասին, որ քանըհինգ փիղի կամ հարիւր յիսուն եզան ծանրութիւն ունի եւ երեսուներեք մեթր երկայնութիւն։

— Վա՛հ, այդ ի՞նչ հսկայ է, — զարմացանք մենք։

— Անգամ մը մենք որսացինք այդպիսի կենդանի մը, որ հարիւր քսան թոն ծանրութիւն ունէր եւ երեսուներեք մեթր երկայնութիւն, — վրայ բերաւ քեռի Հայկը։ — Միայն սիրտը եօթը հարիւր քիլօ կը կշռէր, լեարդը՝ հազար քիլօ, իսկ լեզուն՝ երեք հազար քիլօ։

Քեռի Հայկ նայեցաւ մեր զարմացած դէմքերուն եւ շարունակեց.

— Մեր որսացած այդ կենդանիէն սատացանք յիսուն հազար քիլօ մաքուր միս, երեսուն հազար քիլօ ճարպ եւ քսան հազար քիլօ ոսկոր։

— Ցիսուն, սուտել երեսուն, սուտել քըսան կ՚ընէ հարիւր, — հաշուեց Ռուբիկը.— մնացած քսան հազա՞րը...



– Մնացած քսան հազարն ալ աւելորդ մնացորդներն էին՝ փորոտիք, արիւն եւայլն։ Այնպէս որ հարիւր քսան հազար քիլոյէն բաւ չկորսուեցաւ։ Նոյնիսկ դլխուն ոսկորներէ իւղ հանեցինք։

2

Բայց ի՞նչ էր այս զարմանալի կենդանիին անունը։

– Լսած չէ՞ք անունը, – հարցուց քեռի Հայկը։

– Կէտ ձուկ, – կասկածելով բաւ Շողիկը եւ աւելցուց։– բայց, քեռի՛ Հայկ, կէտ ձուկերը այդքան խոշո՞ր են ուրեմն։

– Կէտ ձուկի ութսուն տեսակներ կան, – պատասխանեց քեռի Հայկը, – բայց ամենէն խոշորը կապոյտ կէտն է։ Ան կը լողայ բերանը բաց, որ կը նմանի խոր անդունդի։ Սարսափելի է անոր երախը, ուր հաւաքուած ջուրը փոքր լիճ մը կը կազմէ եւ դլուխէն չաւարուանի պէս դուրս կը ցայտէ։

– Ինչո՞վ կը սնանին կէտերը, – հարցուց Շողիկը։

– Մանր ձուկերով։

– Մանր ձուկերով կը կշտանա՞ն։

– Ասանց երախը, հսկայ ջուրերուն հետ, հարիւրաւոր ձուկեր կը մտնեն եւ կ'երթան ուղղակի ստամոքսը, որ երեք մետր լայնութիւն ունի։

Քեռի Հայկ, մեր հետաքրքրութեան պոհացում տալու համար, աւելցուց։

– Կէտ ձուկը շատ արագ կը լողայ, շուրջը խոշոր ալիքներ յառաջացնելով։ Կէտերը հազար եօթը հարիւր ձիու ուժ կ'ունենան։ Ես տեսած եմ նաեւ կէտի ձագ, որ եօթը մետր երկայնութիւն եւ վեց հազար քիլո ծանրութիւն ունէր։

– Ա՛յ քեզ ձագ, – ծիծաղեցանք մենք բոլորս։

– Եւ դիտե՞ք, որ ձագը օրական հարիւր քիլո կ'աւելնայ, որովհետեւ շատ սննդարար է մօր կաթը։

ԱՌԱՆՑ։– Ջուկը ցլեթն կը հոտի։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թոն։– Օտար բառ։ տակառաձեւ։ Մէկ թոնը հազար քիլո է։
Ճարպ։– Իւղ։
Երախ։– Կենդանիներու բերան։
Շատրուան։– Արուեստական ցատրիւր։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞ր կենդանիին համար ըսուած է «ծովու հսկան»։ – Գիտէ՞ք թէ ո՛վ է «ցամաքի հսկան»։ – Կրնա՞ք պատմել այս դասը եւ նկարագրել կէտ ձուկը։ – Ուրիշ ի՞նչ ձուկերու անուններ գիտէք։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ձայնարկութիւն կը կոչուին վախ, ցաւ, փափաք կամ բարկութիւն արտայայտող բառերը. օրինակ՝ *ա՜հ*, ի՞նչ կ'ըսէք. *ափսո՜ս*, ուշ մընացի։ *Ա՜հ*, *ափսո՜ս* ձայնարկութիւն են։

---

66. ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Նապաստակներն ամբողջ գեղով
Անտառին մէջ ըրին ժողով.
Այդ ժողովին մէկ ծեր ջլթիկ
Ըսաւ.— Էհէ՜յ, մե՛ծ ու պզտիկ,
Շունը հաչէ,
Գամին փըչէ,
Ամպը գոռայ,
Մուկը նռայ,
Մեր այս ցեղը
Հա՛ կը դողայ։

Այսպէս ապրիլ չէ կարելի
Աշխարհին մէջ՝ փորձանքով լի.
Զարն ու բարին աշխարհին հետ,
Թողունք երթանք, նետունք մէկ գետ։ –
Ջլթիկները՝ ո՛չ այս, ո՛չ այն,
Ելան ինկան մահի նամբան.

Ու երբ եկան գետին մօտիկ,
Գորտերն ըսես, մեծ ու պզտիկ,
Խառնիխուռը
Ինկան ջուրը։
Այդ վայրկեանին՝ մէկ այլ ջլթիկ
– Դարձէ՛ք, – կանչեց, – պապի՛ս որդիք,
Ա՛լ մի կախէք ձեր քիթերը,
Մեզմէ վախկոտ են գորտերը։

ՀԱՆԵԼՈՒԿ ԻՐ.— Լեզու չունի, կը խօսի,
Ականջ չունի, կը լսէ,
Թէ հարկ ըլլայ՝ կը հնչէ,
Քեզ իր մօտը կը կանչէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ջլթիկ.— *Նապաստակ։*
Գամի.— *Հով։*
Այլ.— *Ուրիշ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Նապաստակները ի՞նչ ըրին. ո՞ւր։ – Ծեր ջլթիկ մը ի՞նչ ըսաւ։ – Ի վերջոյ ի՞նչ որոշում տուին։ – Գործադրեցի՞ն իրենց որոշումը. ի՞նչպէս։ – Վերջին պահուն ի՞նչ պատահեցաւ։ – Նապաստակներէն եւ գորտերէն աւելի վախկոտ կենդանիներ կա՞ն։ – Ուրիշ պատմութիւն գիտէ՞ք նապաստակներու մասին։

---

67. ԻՆՉՊԷՍ ԳՏՆՈՒԵՑԱՒ ԹԷՅԸ

1

Աւանդութիւնը կ'ըսէ, թէ դարեր առաջ, Չինաստանի մէջ ծերունի բժիշկ մը կ'ապրէր: Իրիկուն մը, օրուան աշխատանքէն յոգնած, բժիշկը կը հանդստանար կրակին մօտ, որուն վրայ ամանով ջուր կ'եռար:

Քիչ – քիչ կրակը սկսաւ մարիլ. ծերունի բժիշկին հաւատարիմ սպասաւորը կրակին վրայ դրաւ նոր ճիւղեր: Քանի մը տերեւներ ինկան եռացող ջուրին մէջ:

Յանկարծ սենեակը լեցուեցաւ անոյշ բուրմունքով: Բժիշկը սթափեցաւ քունէն եւ ուզեց գիտնալ, թէ ուրկէ՛ կու գար այդ քաղցր բուրմունքը: Ուշադրութիւնը գրաւեցին ջուրին մէջ ինկած տերեւները:

Յոգնութիւնը մոռցած՝ նոր տերեւներ բերաւ ու լեցուց ջրամանին մէջ: Ջուրը ստացաւ ոսկիի գոյն:

Իմաստուն բժիշկը դգալով ջուր առաւ, համը նայեցաւ ու մնաց հիացած: Փորձը կրկնեց քանի մը անգամ. միշտ նոյն ախորժելի համն ու հոտը:

Ջուրին մէջ եռացածը թէյի տերեւներ էին: Այսպէս գտնուեցաւ թէյը:

2

Թէյի գործածութիւնը արագօրէն տարածուեցաւ Չինաստանի եւ հարեւան երկիրներու

մէջ: Ամենէն լաւ տեսակը կ'աճի բուն իսկ չինական հողի վրայ: Անգլիացիները սկսան թէյ մշակել նաեւ Հնդկաստանի եւ Սէյլան կղզիին մէջ:

Այսօր Եւրոպայի եւ Ամերիկայի կարգ մը երկիրներուն մէջ ալ թէյ կը մշակուի: Նախ սկսաւ գործածուիլ Հոլանտայի մէջ եւ հետզհետէ տարածուեցաւ ուրիշ երկիրներ:

Ներկայիս թէյի գործածութիւնը ընդհանրացած է մասնաւորաբար Արեւելքի մէջ, – Չինաստան, Հնդկաստան, Հնդկաչին, Պարսկաստան, Ռուսաստան, եւայլն: Եւրոպական երկիրներու մէջ ամենէն շատ թէյ սպառողն է Անգլիա:

Թէյ պատրաստելու եւ խմելու զանազան ձեւեր կան: Օրինակ՝ Չինաստանի մէջ ընդհանրացած է պաղ թէյի գործածութիւնը: Անգլիացիները եռացած թէյ կը խմեն, իսկ ռուսերը շաքար չեն դներ թէյի մէջ, շաքարը կ'ուտեն «կծուվի», այսինքն՝ կտոր–կտոր խածնելով:

ԱՌԱԾ.– Ջուրը ինկողը անձրեւէն չի վախնար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւանդութիւն.– *Բերնէ բերան շրջան ընող պատմութիւն:*
Բուրմունք.– *Բոյր, անոյշ հոտ:*
Սթափիլ.– *Արթննալ (քունէն):*
Ախորժելի.– *Հաճելի, համով:*
Հարեւան.– *Դրացի:*
«Կծուվի».– *Կծել՝ կը նշանակէ խածնել. «կծուվի»՝ խածնելով:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Աւանդութիւն մը ի՞նչ կ'ըսէ։ — Ի՞նչպէս գտնուեցաւ ուրեմն թէյը։ — Պատահական ձեւով կատարուած ուրիշ գիւտեր կը յիշէ՞ք։ — Ո՞ր երկրին մէջ կը մշակուի թէյի լաւագոյն տեսակը։ — Թէյ խմելու ձեւերէն ո՞րը կը նախընտրէք դուք։

68. ԽԱՂՈՂ ԿԵՐԷՔ

1

Պտուղներուն մէջ առաջին տեղը կը գրաւէ խաղողը, որ իրաւամբ արժանի է «պտուղներու թագուհին» կոչուելու։



Դարեր շարունակ բանաստեղծներ երգած ու գոված են խաղողը, անոր տեսքը, համն ու հոտը։ Մեր բանաստեղծներէն մէկը հետեւեալ քառեակը գրած է խաղողի մասին.

Փառք տանք մայր հողին,
Արեւի շողին,
Գինի պարգեւող
Հայոց խաղողին...

Ո՛չ մէկ պտուղ կրնայ գերազանցել խա-

ղողը իբրեւ սնունդ։ Ան հարուստ է շաքարով. հարիւր կրամ խաղողին մէջ 25 կրամ շաքար կայ, իսկ շաքարը ուժ կու տայ սրտին եւ մարմնի մկաններուն։

2

Շաքարէն զատ՝ խաղողին մէջ կան նաեւ զանազան հանքային աղեր, որոնք ո՛չ միայն օգտակար, այլեւ անհրաժեշտ են մեր կազմին համար։

Խաղողը կարելի է կոչել «բուսային կաթ», որովհետեւ կաթին չափ սննդարար է։ Բազմաթիւ երկիրներու մէջ տարածուած է խաղողաբուժութիւնը, այսինքն՝ խաղողով հիւանդներ բուժելու սովորութիւնը։

Արդարեւ, խաղողը մեր մարմնին դիմադրական ուժը կ'աւելցնէ։

Անոնք, որոնց լեարդը դանդաղ կը գործէ, պէտք է խաղող ուտեն։ Անարիւնները նոյնպէս խաղող պէտք է ուտեն։

Դէրերուն համար ալ օգտակար է խաղողը. աւելորդ ճարպերը կը հալեցնէ եւ թոյներէն կը մաքրէ արիւնը։

Ուրեմն՝ խաղող կերէք, օրական 300 կրամէն մինչեւ երկու կամ երեք քիլօ, հատիկ-հատիկ, լաւ ծամելով, առաւելարար անօթի փորանց։

ԱՌԱԾ.— Հարուստը ուզածը կ'ուտէ,
Աղքատը գտածը կ'ուտէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բառեակ։— *Զորս տողնոց ոտանաւոր։*
Շող։— *Արեւու ճառագայթ։*
Պարզուել։— *Նուիրել, տալ։*
Դեբազանցել։— *Բոլորէն առաջ անցնիլ։*
Մկան։— *Փափուկ, առանց ոսկորի միս՝ կծկուող ու թուլցող թելերով։ Մարդու մարմինը 639 մկան ունի։ Դնդեր։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Ո՞րն է «պտուղներու թագուհին»։ — Ուրիշ ի՞նչ անուն կու տան խաղողին։ — Սենդարար ի՞նչ նիւթեր կան խաղողին մէջ։ — Ի՞նչ է խաղողաբուժութիւնը։ — Ուրիշ պտուղներ կը յիշէ՞ք, որ նոյնքան սենդարար ըլլան, որքան խաղողը։

---

69. ԹՌՉՈՒՆԻՆ ԵՐԱԶԸ

Թռչուն մը փոքրիկ, անոյշ ֆուն մրտած,
Երազ կը տեսնէր, բոյնին մէջ պառկած...
Իբբր թէ լուսնակ գիշեր է պայծառ,
Ու անթիւ աստղեր, իրարու մօտիկ,
Բոլորն ալ մէկ–մէկ կորեկի հատիկ.
Իբբր թէ ինքն ալ կը թռչի վերէն,
Կը կտցէ, տի՛ֆ – տի՛ֆ,
Հատ – հատ աստղերը անհուն երկինքէն։

Բայց երբ արեւը յանկարծ ծագեցաւ,
Իր անոյշ ֆունէն թռչնակն արթնցաւ,
Կլտուցը բրսեց նիւղերուն բոյնին,

Ու մեծ զարմանքով ըսաւ ինքն իրեն.
«Ամբողջ գիշերը չէ՞, որ հոն՝ վերէն
Կը ժողվէի ես կորեկի հատիկ,
Կ'ուտէի, տի՛ֆ–տի՛ֆ,
Հապա անօթի ինչո՞ւ եմ նորէն...»։

ՀԱՆԵԼՈՒԿ ԻԴ։— Զորս ոտքը հողին վրայ,
Երկու ոտքը կողին վրայ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անթիւ։— *Թիւ, համբանք չունեցող. խիստ շատ։*
Անհուն։— *Անսահման, ընդարձակ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։— Կրնա՞ք պատմել թռչունին երազը։ — Եթէ երազողը ապուէս մը ըլլար, նոյնպէս կորե՞կ պիտի տեսնէր երազին մէջ։ — Երբ արեւը ծագեցաւ, ի՞նչ ըրաւ եւ ըսաւ փոքրիկ թռչունը։ — Դուք ալ երազներ կը տեսնէ՞ք։ — Պատմեցէք ձեր տեսած մէկ երազը։

70· ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1

Հարեւան գիւղերէն բազմաթիւ գիւղացիներ հաւաքուած էին Կաթնապրիւր՝ շարժանկար տեսնելու։ Ընդարձակ սրահին մէջ, նստարանի փոխարէն, դրուած էին գերաններ։ Գիւլէն, Բայազը եւ Ոսկեհատը նստած էին առաջին շարքին վրայ։ Անոնց մօտ նստած էին Աստուրը, Ստեփանը, Սեմալցի Թազոն, Փղորկուայ Կարոն, Թելօ Մեսրոպը եւ Գոմսայ Մելիքը։

Ցանկարծ լոյսերը մարեցան, եւ սրահը մթնեց։

Պաստառին վրայ նախ երեւաց կառախումբ մը, որ ծուխ արձակելով կու գար հեռուէն. Շոգեքարշը եւ վագոնները հետզհետէ կը մեծնային։ Ահռելի անիւները կը շարժէին ուղղակի նստած մարդոց կողմը։ Գիւլէն, Բայազը եւ Ոսկեհատը ճչալով դեռին փոուեցան։ Թելօ Մեսրոպը նեռուեցաւ դէպի անկիւնի պատը։ Ոմանք մտան գերաններուն տակ։

Շոգեքարշը յանկարծ ծռեցաւ ձախ և պատառի միւս անկիւնէն հեռացաւ, իրեն հետ քաշելով վագոններու շարանը։

2

Գիւղացիները հաղիւ ուշքի եկած էին, երբ պատառին վրայ երեւաց արջերու բազմութիւն մը, որ վազելով առաջ կու գար։ Սրահին

մէջ աղաղակ բարձրացաւ։ Բոլորը վեր թռան իրենց տեղերէն եւ իրարու խառնուեցան։ Աստուրը եւ Ստեփանը վերցուցին իրենց ձեռնափայտերը, որպէսզի յարձակին արջերուն վրայ եւ ետ դարձնեն զանոնք։ Փղորկուայ Կարոն եւ Գոմսայ Մելիքը դուրս վազեցին հրացան բերելու։

– Զվախնա՛ք, – գոչեց Թելօ Մեսրոպը եւ փայտ մը վերցնելով իջնցուց պատառին վրայ, իբր թէ արջերը փախցնելու համար։

– Օգնեցէ՛ք, արջերը կը յարձակին Կաթնապրիւրի վրայ, – կը սրճային այս ու այն կողմէն։

Թելօ Մեսրոպի հարուածէն լոյսը մարեցաւ եւ ամբողջ սրահը մնաց մութի մէջ։

Քանի մը հոգի դուրս վազեցին եւ լուր տարածեցին, թէ արջերը լեցուած են սրահ եւ մութին մէջ կը խեղդեն ներսը գտնուողները։

Այսպէս վերջացաւ շարժանկարի ներկայացումը Կաթնապրիւրի մէջ։

ԱՌԱՆ·– Շատ խնդալը լաց կը բերէ։

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաթնապրիւր·– Հայաստանի մէջ գիւղ մը։

Գերան·– Հաստ եւ երկայն փայտ։

Պաստառ·– Բուրդէ կամ բամպակէ պատրաստուած լաթ, որուն վրայ շարժանկար կը ներկայացնեն։

Շոգեքարշ·– Շոգիով շարժող կառք· վայրաշարժ։

Շարան·– Շարք, կարգով իրարու ետեւ շարուած։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞ւր տեղի կ'ունենար շարժանկարի ներկայացումը: — Ինչո՞ւ վախցան գիւղացիները· ի՞նչ ըրին: — Շարժանկարի ներկայացումներու գացա՞ծ էք դուք: — Ի՞նչ տեսակ խաղերէ հանոյք կը զգաք ամենէն աւելի:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Գլխաւոր ձայնարկութիւններն են ա՜հ, ո՜հ, ա՜խ, վա՜յ, ախո՜ւ, աւա՜ղ, մե՜ղք, մեղա՜յ, երանի՜, ա՜յ, կեցցե՛ս, ապրի՛ս, բարէ՜, եւայլն:

71· ՏԱՐԻՆ ՎԵՐՋԱՑԱՒ

1

Շարաթէ մը պիտի սկսին տարեվերջի քննութիւնները: Ես ու Սամսոնը դիշեր — ցերեկ կ'աշխատինք· ճաշելու ժամանակ անգամ չունինք: Ամենէն աւելի մեզ կը նեղէ Թուաբանութիւնը, իսկ քերականութիւնը ուղղակի մեր հոգին կը հանէ:

— Անգամ մը քննէ՛ դիս, տես լաւ պատրաստուա՞ծ եմ, — կ'ըսէ Սամսոն:

Ես կը սկսիմ «քննել» զայն: Երբեմն դէմքիս խոժոռ արտայայտութիւն կու տամ, երբեմն ալ, մեր անօրէնին պէս ձեռքերս ետեւս կապած, կ'երթեւեկեմ սենեակին մէջ եւ գլուխս շարժելով իբր թէ սխալներ կը մատնանշեմ:

Երբ կարդը կու գայ հայերէնի, Սամսոն կը յայտարարէ, թէ ջուրի պէս դիւրէ ամէն ինչ:

— Իսկ եթէ հարցնեն՝ ի՞նչ է գերբայը:

Սամսոն կանգ կ'առնէ չուարած:

— Զե՛ս գիտեր, ա՛նպիտան, չե՛ս գիտեր, — կ'ըսեմ ես ուսուցչի ձայնը կեղծելով:

2

«Քննելու» կարգը Սամսոնին է հիմա:

— Ըսէ՛ նայիմ, Մա՛նասեան, ո՞ւր է Սպիտակ ծովը, — կը հարցնէ ան:

Իմ ճիշդ պատասխանէս եաք, կը շարունակէ նոր ու իրթին հարցումներ ուղղել ինծի: Ապա կ'անցնի մարզանքի քննութեան:

— Բայց մենք մարզանքի քննութիւն չենք տար, — կ'առարկեմ ես:

— Դուն իմ հարցումիս պատասխանէ, — տաքը գետին զարնելով կը պոռայ Սամսոն.— ա՞յ ոտքով կը սկսին քալել թէ ձախ:

— Այ, — վրայ կը բերեմ ես:

Յանկարծ կը մօտենայ ինծի եւ փա՛թ, ուժգին ապտակ մը կ'իջեցնէ երեսիս:

— Ա՞ս ինչ բան է:

Եւ վրդովուած իրեն կը նայիմ:

— Դէ՛, լաւ, — կատակ ըրի, կը խնդայ ան:

Ես ալ կը խնդամ: Ապա երկուքս միասին պարակէզ կ'երթանք խաղալու:

ԱՌԱԾ.— Ուրագը իր կարը չի տաշեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խոժոռ.— *Երեսը կախ, խիստ։*
Երբեւեկել.— *Երթալ դալ։*
Մատնանշել.— *Ցույց տալ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Երկու ընկերները ինչո՞ւ գիշեր – ցերեկ կ'աշխատէին։ – Ի՞նչը ամենէն աւելի կը նեղէր զիրենք։ – Ձեզի համար ո՞րն է ամենէն դժուար դասը։ – Սամսոն ինչո՞ւ ապտակեց իր ընկերը։ – Դուք ի՞նչ կ'ընէք, երբ տարեվերջի քննութիւնները մօտենան։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Վերաբաղ։ Ամբողջ պահ մը յատկացնել վերաբաղին եւ վերյիշել աւանդուած կանոնները։

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

ԴԱՍ		ԷՋ
1·	Քննութիւն	3
2·	Քննութեան շարունակութիւնը	5
3·	Աղուէսին՝ պանիր, արջին՝ թակարդ	7
4·	«Լա՜ւ խելք է»···	9
5·	Կարդալու սէրը	12
6·	Նաւաստին	14
7·	Ազգային երգը	15
8·	Կոյրերուն գիրքը	18
9·	Կոյրերու կարծիքը	20
10·	Փիղը	21
11·	Ո՞վ իրաւունք ունի	23
12·	Ձէնով Օհան եւ Կոզբադին	25
13·	Աշխարհագրութեան դասը	27
14·	Խօսակցութիւն	29
15·	Սասունցի Դաւիթ եւ Կոզբադին	31
16·	Ճամբորդներ	33
17·	Կ'ուզեմ, չեմ ուզեր···	36
18·	Գիտուն աղուէսը	38
19·	Գնդակ խաղացողները	40
20·	Իմ ամենամեծ հանոյքս	43
21·	Հայելին	46
22·	Անլեզու պահակը	48
23·	Փայլուն կոճակներով զգեստը	51
24·	Նոր տարի	54
25·	Ցուրտերը սկսան	55
26·	Հայկական ձմեռը	57
27·	Կռուի պատրաստութիւն	60
28·	Պզտիկ Մեհր	62
29·	Ձուկե՞ր, ձուկե՞ր···	64
30·	Իմ հայրենիք	67
31·	Կամուրջ շինողները	68
32·	Ձալոն	71
33·	Անուրը	74
34·	Կատաղած շունը	75
35·	Բերնին համը գիտցող շունը	79
36·	Միամիտ ակնարկութիւն	81
37·	Մասի՜սը, Մասի՜սը···	82
38·	Ի՞նչպէս դարբին եղայ	85
39·	Գարնան երգ	87
40·	Այո եւ Ոչ	88
41·	Առաջին եւ վերջին անգամը	91
42·	Ես իմ աշխարհի···	93
43·	Առաջին առուտուրը	94
44·	Ի՞նչ ըսեր էր մայրիկը	96
45·	Իմ ճոյզս	99
46·	Փոքրիկ խանութպանը	101
47·	Իմ սանիկս	104
48·	Տղան ու թռչնիկը	107
49·	Օղը, հովը···	108

ԴԱՍ		ԷՋ
50·	Մանկութեան օրեր	111
51·	Վերցո՛ւր գիս···	114
52·	Ամենապիտանի բանը	115
53·	Ինքնաշարժով պտոյտ	118
54·	Մանուկն ու արծիւը	120
55·	Ածուխ, հանքածուխ	121
56·	Կենդանիներու աշխարհէն	124
57·	Մանկութիւն	127
58·	Ոսկի տապարը	128
59·	Եղնիկը	131
60·	Մայրը և իր զաւակները	133
61·	Ուսումնարան	134
62·	Քարայծերու կռիւը	136
63·	Կարապը, ձուկը եւ խեչափառը	139
64·	Վագրը եւ աղուէսը	140
65·	Ծովու հսկան	143
66·	Նապաստակները	146
67·	Ի՞նչպէս զտնուեցաւ թէյը	148
68·	Խաղող կերէք	150
69·	Թռչունին երազը	152
70·	Շարժանկարի ներկայացում	154
71·	Տարին վերջացաւ	156
	Նիւթերու ցանկ	159

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

Ա· Աղուէս։ Բ· Երկինք եւ աստղեր։ Գ· Օձ։ Դ· Զաղացքի քարեր։ Ե· Տարուան չորս եղանակները։ Զ· Անձրեւ։ Է· Երազ։ Ը· Ծառ։ Թ· Բերան, ականջ, աչք։ Ժ· Սրինգ։ ԺԱ· Հաւկիթ։ ԺԲ· Կոկորդ եւ փոր։ ԺԳ· Ասեղ եւ կար։ ԺԴ· Աչք։ ԺԵ· Ժանգ։ ԺԶ· Ոզնի։ ԺԷ· Հունտ։ ԺԸ· Կամուրջ։ ԺԹ· Աստղեր։ Ի· Տապակ։ ԻԱ· Լեզու։ ԻԲ· Հեռաձայն։ ԻԳ· Ջիաւոր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ	Լ. Դ.
1. ՀԱՅԿԱՐԱՆ, Նախապատրաստական	500
2. ՀԱՅԿԱՐԱՆ, Ա. տարի	500
3. ՀԱՅԿԱՐԱՆ, Բ. տարի	500
3. ՀԱՅԿԱՐԱՆ, Գ. տարի	600
5. ՀԱՅԿԱՐԱՆ, Դ. տարի	700
6. ՀԱՅԿԱՐԱՆ, Ե. տարի	800
7. ՀԱՅԿԱՐԱՆ, Զ. տարի	1000
8. ՀԱՅԿԱՐԱՆ, Է.–Ը. տարի	1500

ԳԻՆ՝ 500 Լ. Դ.

Կեդրոնատեղի

LIBRAIRIE HAMASKAÏNE
10, Rue Hussein Beyhoum
Zokak el Blatt
Beyrouth — Liban

1082000